

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

*Ժողովրդավարության զարգացման, պաշտամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ*

**ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ**

**ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ**

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ  
ՀԱՅՐԱՊԵՏ  
2019

ՀՏԴ 329.78:316.34

ԳՄԴ 66.75+60.54

Մ 536

Մ 536 Երիտասարդության տեղը և դերը հասարակության քաղաքական կյանքում /Հեղինակային խումբ: – Եր.: Հայրապետ հրատ., 2019 – 240 էջ:

Ժամանակակից աշխարհի տնտեսական և քաղաքական իրողության պայմաններում երիտասարդությունն իրեն բնորոշ նվիրվածությամբ և որոշակի ռոմանտիզմով, օբյեկտիվ իրականության իդեալիզացմամբ, ճշմարտության որոնման ձգտմամբ, հանդիսանում է հասարակական քաղաքական կյանքի դինամիկ տարր: Երիտասարդների քաղաքական ակտիվության բարձրացման տեսանկյունից արդիական է այնպիսի հայեցակարգերի ու մոտեցումների մշակումը, որոնք թույլ կտան արդյունավետորեն օգտագործել երիտասարդության նորարար ներուժը, ինչպես նաև բարձրացնել երիտասարդների քաղաքական իրավագիտակցությունը: Սույն աշխատանքը նպատակ ունի օժանդակել վերը նշված խնդիրներին:

Աշխատանքում անդրադարձ է կատարվել երիտասարդների՝ որպես առանձին սոցիալական խմբի սահմանմանը, վերջիններիս քաղաքական իրավունքների առանձին տեսակներին և դրանց իրացման շրջանակներին, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքում և քաղաքական գործընթացներում երիտասարդների մասնակցության ձևերին, քաղաքական գործընթացներում երիտասարդների մասնակցության վրա ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների դերակատարությունը:

Աշխատանքը կարող է օգտակար լինել ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, երիտասարդ դասախոսների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում կամ հետաքրքրվում են նշված խնդիրներով:

ՀՏԴ 329.78:316.34

ԳՄԴ 66.75+60.54

ISBN 978-9939-838-87-8

© Ա.Պ.Հ ՄԽՎ քարտուղարություն, 2019

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Աշխատանքային խմբի ղեկավար՝** ԱՊՀ ՄԽՎ ԺԶՄՄԻ երևանյան մասնաճյուղի տնօրեն, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Վ. Ավետիսյան**

**Մասնագիտական խմբագրեր՝** ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու **Ա. Դանիելյան**

**Հեղինակներ՝**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս, քաղաքական գիտ. թեկնածու **Հ. Մամիջանյան,**

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, ՀՀ փաստաբանների դպրոցի դասախոս **Ս. Խաչատրյան,**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավորի օգնական **Ե. Գյանջումյան**

**ԳԼՈՒԽ 1. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏ** 9

1.1. «ԵՐԻՏԱՍԱՐԴ» եզրույթի էությունը և երիտասարդությունը՝ որպես սոցիալական խումբ .....9

1.2. Երիտասարդների քաղաքական իրավունքների և ազատությունների իրականացման առանձնահատկությունները .....31

1.3. Երիտասարդների քաղաքական ակտիվությանը նպաստող իրավական կարգավորումները .....69

**ԳԼՈՒԽ 2. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** 111

2.1. Երիտասարդության դերակատարությունը հասարակական քաղաքական կյանքում ..... 111

2.2. Քաղաքական գործընթացներում երիտասարդության մասնակցության ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ ձևերը..... 139

2.3. Երիտասարդական պառլամենտարիզմ..... 170

2.4 Կրթության դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում..... 173

2.5 Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը քաղաքական գործընթացներում երիտասարդության մասնակցության վրա..... 201

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** 235

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների շարքում առանցքային տեղ զբաղեցնող քաղաքական իրավունքներն ամրագրվել և երաշխավորվել են մարդու իրավունքների վերաբերյալ ընդունված առաջին իսկ միջազգային փաստաթղթերում: Քաղաքական իրավունքների կարևորությունն ակնհայտորեն ընդգծվում է այն փաստով, որ Մարդու իրավունքների առաջին սերունդն ամրագրեց հենց քաղաքական և քաղաքացիական իրավունքները: Առանց այս իրավունքների՝ հնարավոր չէ պատկերացնել ո՛չ անհատին, ո՛չ էլ հասարակությունն ընդհանուր առմամբ: Դա նշանակում է, որ առանց քաղաքական իրավունքների՝ անհատը չի կարող հանդիսանալ հասարակության լիարժեք անդամ: Քաղաքական իրավունքները վերաբերում են անհատ-պետություն հարաբերություններին, կարգավորում տվյալ երկրի կառավարության և քաղաքացիների փոխհարաբերությունները:

Քաղաքական իրավունքների ամրագրվածության և իրացման մակարդակը պայմանավորված է տվյալ պետության կառավարման ձևով: Ի տարբերություն բռնապետական երկրների, ժողովրդավարական պետություններում քաղաքացիները օժտված են առավել լայն ծավալի քաղաքական իրավունքներով և առավել ազատական պայմաններում են իրացնում դրանք:

Ժամանակակից աշխարհի տնտեսական և քաղաքական իրողության պայմաններում երիտասարդությունն իրեն բնորոշ նվիրվածությամբ և որոշակի ռոմանտիզմով, օբյեկտիվ մի-

րականության իդեալիզացմամբ, ճշմարտության որոնման ձգտմամբ, հանդիսանում է հասարակական քաղաքական կյանքի դինամիկ տարր: Երիտասարդները զարգացման և ինքնաարտահայտման ձգտող անհատներ են, ովքեր հակված են մշտապես նորամուծություններ կատարելու, նոր որակ և բովանդակություն հաղորդելու ցանկացած ոլորտում, որի շրջանակներում գործում են կամ որին մասնակցում: Նմանապես և քաղաքական գործընթացներում երիտասարդներն ունեն մեծ դերակատարություն: Մասնավորապես, նրանք, հնարավորություն ունեն, ի թիվս այլոց, դասեր քաղել նախորդ սերունդների թույլ տված սխալներից, դրա հիման վրա մշակել նոր մոտեցումներ, հաջողությամբ օգտվել ժամանակակից տեխնոլոգիաներից և ուղղել դրանք քաղաքական գործընթացների բարելավմանը:

Ներկայումս նկատվում է քաղաքական համակարգի գործունեության, քաղաքական ինստիտուտների ձևավորման, ինչպես նաև քաղաքական որոշումների կայացման և իրականացման գործընթացների վրա երիտասարդության ազդեցության զգալի աճ: Ավելին՝ հաշվի առնելով քաղաքական իրավիճակի կայծակնային փոփոխությունը, կարելի է վստահորեն պնդել, որ երկրի քաղաքական կյանքում երիտասարդների ներգրավվածության նախկինում գոյություն ունեցող ինքնաբուխ ձևերն աստիճանաբար վերափոխվում են կառուցվածքային և կանոնավոր մասնակցությանը: Վերջինս ուղեկցվում է երիտասարդության՝ հաջող և իրավիճակին համապատասխանող ինտեգրմամբ, այդ թվում՝ տարբեր երիտասարդական շարժումների և կազմակերպությունների մի-

չոցով:

Ինչպես կհամոզվենք առանձին քաղաքական իրավունքների քննարկման արդյունքում, մի շարք քաղաքական իրավունքներ իրենց բնույթով ենթադրում են հենց երիտասարդ անձանց կողմից իրացվելը (ընտրելու և ընտրվելու իրավունք, հավաքների ազատություն և այլն):

Հետազոտության առարկայի արդիականությունը փոխկապակցված է երիտասարդների քաղաքական ակտիվության բարձրացման հետ, ովքեր իրենց գործունեությամբ ձգտում են ունենալ էական ներգործություն ժամանակակից քաղաքական գործընթացների վրա: Այսպես, սոցիոլոգ Կ. Մանհեյմը, որը զբաղվում էր ժամանակակից հասարակության պայմաններում երիտասարդության հիմնախնդիրների վերլուծությամբ, գտնում էր, որ միայն այն հասարակությունը կլինի դինամիկ և կենսունակ, որում ավագ սերունդը համագործակցում է երիտասարդության հետ:

Այս առումով նպատակահարմար է արդյունավետորեն օգտագործել երիտասարդության նորարար ներուժը՝ այն համարելով առողջ քաղաքական համակարգի ձևավորման համար կարևոր քաղաքական պայմաններից և լծակներից մեկը: Հետևապես, ներկայումս, մեր կարծիքով, հասարակության քաղաքական համակարգի զարգացման գերակա ուղղությունների շարքում պետք է ներառել երիտասարդների քաղաքական իրավագիտակցության բարձրացումը, նրանց նորարական ներուժի բացահայտումը և քաղաքական դիրքորոշման ակտիվ արտահայտման ապահովումը:

Մույն աշխատանքում կանդրադառնանք երիտասարդնե-

րի՝ որպես առանձին սոցիալական խմբի սահմանմանը, վերջիններիս քաղաքական իրավունքների առանձին տեսակներին և դրանց իրացման շրջանակներին, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքում և քաղաքական գործընթացներում երիտասարդների մասնակցության ձևերին, քաղաքական գործընթացներում երիտասարդների մասնակցության վրա ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների դերակատարությանը:

## ԳԼՈՒԽ 1.

### ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏ

#### 1.1. «ԵՐԻՏԱՍԱՐԴ» ԵԳՐՈՒՅԹԻ ԷՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՐԱԿԵՍ ԱՍԿՐԻՄԱԿԱՆ ԽՈՒՄԲ

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հաստատանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Նշյալ հիմնարար իրավական դրույթի արդյունավետ իրագործման տեսանկյունից անհրաժեշտ է ստեղծել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության այնպիսի երաշխիքներ, որոնք ուղղված են բնակչության բոլոր խմբերի համար իրավունքների և ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ ապահովելուն՝ բացառելով ցանկացած տեսակի, այդ թվում՝ տարիքի հիմքով, խտրականություն:

Անկախ սոցիալ-տնտեսական դրությունից կամ աշխարհաքաղաքական հանգամանքներից, երիտասարդներն ամբողջ աշխարհում ձգտում են նպաստել կայուն և անվտանգ

ապագայի ստեղծմանը և ապահովմանը: Ընդ որում՝ երիտասարդների խոցելիության և իրենց նկատմամբ հնարավոր չարամիտ ազդեցության պատճառով վերջիններս, անկասկած, պահանջում են բարձր հասարակական ուշադրություն:

Երիտասարդությունը, որպես ժամանակակից հասարակության անբաժանելի մաս, ուսումնասիրվում է տարբեր հասարակական գիտությունների, այդ թվում՝ իրավագիտության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի, մանկավարժության շրջանակներում: Թեև, «երիտասարդ» և «երիտասարդություն» հասկացությունները լայնորեն կիրառվում են բազմատեսակ գիտական հետազոտություններում, սակայն տվյալ տերմինների օգտագործման ճշգրտությունը դեռևս շարունակում է կասկած հարուցել:

Հայտնի է, որ երիտասարդներն առանձնահատուկ սոցիալական խումբ են, ինչը պայմանավորված է տարիքային որոշակի հատկանիշներով: Միննույն ժամանակ, կարելի է նկատել, որ այն անձինք, ովքեր ներկայումս դիտարկվում են որպես երիտասարդներ, դարեր առաջ՝ տարբեր ժամանակներում և հասարակություններում, այդպիսիք չէին համարվում:

Քննարկվող հասկացության գիտական սահմանմանն առաջին անգամ անդրադարձել է սոցիոլոգ Վ.Լիսովսկին 1968թ.՝ երիտասարդությունը բնութագրելով է որպես սերունդ, որն անցնում է սոցիալիզացման փուլը և յուրացնում կրթական, մասնագիտական, մշակութային և այլ սոցիալական գործառույթներ <sup>1</sup>: Այս սահմանման կողքին սոցիոլոգ և փիլի-

<sup>1</sup> St' u Лисовский В.Т. Социальные изменения в молодежной среде. - М., 2005:

սովա Ջ. Կոհնը առաջարկում է ավելի լայն մոտեցում և երիտասարդությունը ներկայացնում որպես առանձին սոցիալ-ժողովրդագրական խումբ, որն առանձնանում է տարիքային բնութագրով, սոցիալական կարգավիճակի առանձնահատկություններով, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական հատկություններով: Կենսաբանական առումով երիտասարդությունը՝ որպես կենսական ցիկլի հերթական օրինաչափ փուլ, ունիվերսալ բնույթ է կրում, մինչդեռ երիտասարդությունը բաժանվում է տարիքային և սոցիալ-ստատուսային ենթախմբերի, որոնք ունեն սեփական հատկանիշները, սոցիալ-պատմական բնույթը և քաղաքական մշակույթի տեսակը, կոնկրետ հասարակությանը բնորոշ սոցիալականացման օրինաչափությունները<sup>2</sup>: Այս սահմանմամբ գիտնականը դիպել է քաղաքական սոցիալականացման խնդրին, որը նախկինում արձարծված էր Տ. Վ. Լիսովսկու կողմից: Մասնավորապես, ըստ Տ. Վ. Լիսովսկու՝ երիտասարդությունը բնորոշվում է իբրև 16-ից մինչև 30 տարիքային շրջանի սերունդ, որն անցնում է սոցիալականացման փուլը և յուրացնում այնպիսի հիմնական սոցիալական գործառույթներ, ինչպիսիք են՝ կրթական, մշակութային, մասնագիտական և այլն<sup>3</sup>:

Այդ գիտնականների մեկնաբանությունները կարելի է վերագրել «երիտասարդություն» հասկացության սահմանման արժեքա-տարիքային մոտեցմանը: Այս մոտեցման կողմնակիցներից է նաև Իկոննիկովան, ով երիտասարդությունը դի-

տարկում է որպես սերունդ, որի հատկանիշները չեն սահմանափակվում միայն տարիքով, այլ ներառում են համոզմունքների և նպատակների միասնությունը, ապրումների և կյանքի հանդեպ վերաբերմունքի ընդհանրությունը<sup>4</sup>: Ըստ այս մեկնաբանության, անկախ տարիքից այս կամ այն սերնդի սոցիալական հատկությունները, որոնք են՝ ընդհանուր համոզմունքները, շահերը, ձգտումները, արժեքները, համակրանքը, պահպանվում են:

Վ.Դոբրինինան «երիտասարդություն» հասկացության իր մեկնաբանությունը ներկայացնում է հոգեբանական-ֆիզիոլոգիական, տնտեսական և սոցիալական չափանիշներից ելնելով: Գիտնականի կարծիքով երիտասարդությունը գտնվում է հոգեբանական և ֆիզիոլոգիական ձևավորման փուլում, այսինքն՝ այն ֆիզիկապես և հոգեպես լրիվ ձևավորված տարիքային խումբ չէ<sup>5</sup>: Երիտասարդները ուտք են դնում հասուն կյանք, ձգտում են նյութական անկախության և ինքնուրույնության: Աճող սերնդի սոցիալական ադապտացումը դեռ ավարտված չէ, սոցիալ-մշակութային հիմքերի համակարգը՝ ձևավորված չէ: Թվարկված բնութագրերի հանրագումարը ձևավորում է ընդհանուր հատկանիշ. երիտասարդությունը դառնում է հասարակության առավել դինամիկ մասը:

Կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցման հետևորդների թվում է սոցիոլոգ Ս.Էյզենշտատը, որը դիտարկում է երիտասարդներին որպես կառուցվածքային դիրքերի համա-

<sup>2</sup> Ст'ю Кон И.С. Социология молодежи: Краткий словарь по социологии. - М.: Наука, 1988.- 150 с.

<sup>3</sup> Ст'ю Лисовский В.Т. Эскиз к портрету: жизненные планы молодежи. М., 1962, с. 7.

<sup>4</sup> Ст'ю Иконникова С.Н. Молодежь. Социологический и социально-психологический анализ. - Л., 1974, с.122:

<sup>5</sup> Ст'ю Добрина В.И. Воспитание личности - управляемый процесс // Социальное управление и молодежь. - Вып. 3. -М., 1969, с. 28-32:

կարգ, որը բաղկացած է որոշակի սոցիալական կարգավիճակ և համապատասխան սոցիալական դերեր ձեռք բերող անհատներից <sup>6</sup>: Յուրաքանչյուր դեր փոխգործակցության մեջ ծառայում է որպես կառուցվածքային հիմնական միավոր և ունակ է կառավարել դեռ չհասունացած անձի վարքը: Տվյալ մոտեցման աջակիցների կարևոր արժանիքը միջսերնդային համագործակցության հայեցակարգի կառուցումն է:

Երիտասարդական հիմնախնդիրների ուսումնասիրության արդիականությունը օտարերկրյա գիտնականների աշխատություններում պայմանավորված էր XX դարի 60-ականներին Միացյալ Նահանգներում և Եվրոպայում ուսանողական հոլոգումներով: Մի շարք արևմտյան քաղաքագետներ և սոցիոլոգներ կողմնակից էին «երիտասարդություն» հասկացության մեկնաբանման հոգեբանական մոտեցմանը: Այսպես, անգլիացի գիտնական Ս.Տրիթը ներկայացրել է այդ կատեգորիայի սահմանման նոր մոտեցումն իր «Երիտասարդության սոցիոլոգիան»<sup>7</sup> աշխատության մեջ՝ ընդգծելով ուսումնասիրվող հասկացության հետևյալ չափանիշները. 1) անցում մանկությունից չափահասության, 2) իրենց վարքում անցում կախվածությունից անկախությանը և անպատասխանատվությունից պատասխանատու լինելուն: Ըստ այդմ՝ առաջարկվում էր 11-ից 28/30-ը դիտարկել որպես երիտասարդության տարիքային սահմաններ:

Ոչ պակաս հետաքրքիր է երիտասարդության հայեցա-

<sup>6</sup> St' u Эйзенштадт Ш.Н. От поколения к поколению // Электронная еврейская энциклопедия. URL: [www.eleven.co.il/article/10105](http://www.eleven.co.il/article/10105);

<sup>7</sup> St' u Frith S. The Sociology of Youth. - L.: Open University Press, 1984, 230 p.:

կարգն ըստ անգլիացի հետազոտող Դ.Հեբդիդջայի: Նա ուսումնասիրել է երիտասարդության մի շարք «պատմական» տեսակետներ հասարակության՝ իշխանական մարմինների, գիտնականների, լրագրողների և մանկավարժների աչքերով: Երիտասարդների շրջանում 1920-ականների սկզբի իրադարձությունները նկարագրելու նպատակով գիտնականն օգտագործում է «երիտասարդությունը՝ որպես խնդիր» հասկացությունը: Հենց այդ ժամանակաշրջանում է ձևավորվել ենթամշակույթի հասկացությունը: Այնուհետև Դ.Հեբդիդջան տարանջատում է երիտասարդության հաջորդ «պատմական» փուլերը՝ «երիտասարդությունը՝ որպես զվարճալիք» (1950-ական թթ.), ինչը պայմանավորված էր Արևմտյան Եվրոպայի երկրներում ամերիկյան մշակույթի աճող ազդեցությամբ, և, ի վերջո, «երիտասարդությունը՝ որպես կերպար» (1960-ական թ. կեսերին): Վերջին ժամանակահատվածը նշանավորվեց Մեծ Բրիտանիայի երիտասարդական ոճային խմբերի ծագումով (մոդեր, ռոքերներ, պանկեր և այլք) :

Ն.Ի. Ուսինինան իր՝ «Երիտասարդության հասկացության էության սահմանումը» վերտառությամբ հողվածում նշել է, որ երիտասարդությունը մարդիկ են, ովքեր առավելապես զբաղվում են գործունեությամբ, որը կապված է միջնակարգ և բարձրագույն կրթություն ստանալու, հասարակական կյանքին նախապատրաստվելու և ներգրավվելու հետ<sup>8</sup>:

Վ. Ն. Կուզնեցովը դիտարկում է երիտասարդությունը՝ որպես 14-ից 30 տարեկան բնակչություն, որը տարբերվում է

<sup>8</sup> St' u Усинина Н.И. Определение сущности понятия молодежь // Вестник Удмуртского университета. 2013. № 1. с. 26:

ժամանակակից կենսակերպով, հանդիսանում է մշակույթի բոլոր ձևերի կրող և մասնակցում կենսագործունեության տեսակներից որևէ մեկին<sup>9</sup>:

Երիտասարդություն հասկացության հետագա կոնկրետացումը պահանջում է տարիքային սահմանների հստակ որոշում, ինչպես նաև երիտասարդ սերնդին պատկանող մարդկանց սոցիալական և քաղաքական ստատուսի ավելի խորը ընկալում<sup>10</sup>: Չնայած այն հանգամանքին, որ գիտնականների տեսակետները երիտասարդական տարիքային խմբերի մասին նշանակալիորեն տարբեր են, տարիքային հոգեբանության ոլորտի մի շարք հետազոտողներ առանձնացրել են երիտասարդության երկու ժամանակաշրջան՝ պարմանիների և պատանիների: Այսպես՝ օրինակ, ԽՍՀՄ-ում 1965թ.-ին պարմանիի տարիքային սահմաններն էին 13–16-ը, իսկ պատանեկությանը՝ 17-21-ը: Դ.Բիրրին կարծում է, որ պատանեկությունը տևում է 12-ից մինչև 17 տարեկանը, Դ.Բրոմլին՝ 11-ից մինչև 21-ը, Դ.Վեքսլերը՝ 16-ից մինչև 20-ը, Վ.Բունակը՝ 17-ից մինչև 25-ը, իսկ Վ.Գինսբուրգը՝ 16-ից մինչև 24 տարեկանը<sup>11</sup> :

Հարկ է նշել, որ Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ նաև ՄԱԿ) կողմից երիտասարդությունը բնորոշ-

<sup>9</sup> St' u, Кузнецов, В. Н. Социология молодежи. М., 2007. С. 6.

<sup>10</sup> St' u Мамиджаниян А., «Трактовка понятия «молодежь», «Государственное и муниципальное управление в XXI веке: теория, методология, практика» (Новосибирск: Издательство ЦРНС, 2017, с.140-146:

<sup>11</sup> St' u Сорокин О.В. Особенности формирования политического сознания современной российской молодежи // Социс. - 2008. - №8, С. 45 – 52:

վում է որպես 15-ից 24 տարեկան տարիքային խումբ, որը կազմում է 1,2 միլիարդ մարդ կամ՝ աշխարհի բնակչության մեկ քառորդը: Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը առաջին անգամ անդրադարձ է կատարել երիտասարդության իրավական կատեգորիայի սահմանմանը դեռևս 1981 թվականին՝ Երիտասարդության միջազգային տարվա կապակցությամբ իր զեկույցում (A/36/215, հավելվածի 8-րդ կետ)<sup>12</sup>, ապա վերահաստատեց այն հաջորդող զեկույցներում (A/40/256, հավելվածի 19-րդ կետ)<sup>13</sup>: Իր զեկույցներում Գլխավոր քարտուղարը, մասնավորապես, հայտնել է դիրքորոշում առ այն, որ վիճակագրական նպատակներով ՄԱԿ-ը 15-ից մինչև 24 տարեկան անձանց դիտարկում է որպես երիտասարդություն՝ չբացառելով անդամ պետությունների կողմից տրված այլ սահմանումները: Այսպիսով, իր զեկույցներում Գլխավոր քարտուղարն ընդգծել է, որ առաջարկված վիճակագրական սահմանման հետ մեկտեղ «երիտասարդություն» եզրույթը կարող է տարբերվել աշխարհի երկրներում:

Ավելին՝ երբ Գլխավոր ասամբլեան՝ իր 1995 թվականի 50/81 բանաձևով<sup>14</sup> ընդունեց երիտասարդության համար գործողությունների համաշխարհային ծրագիրը, վերջինս վերահաստատեց նախկինում ձևավորած մոտեցումը:

Նշյալ հիմնախնդրի համատեքստում ուշադրության են արժանի նաև Գլխավոր ասամբլեայի 2001 թվականի թիվ

<sup>12</sup> St' u Secretary-General's Report to the General Assembly, A/36/215, 1981:

<sup>13</sup> St' u Secretary-General's Report to the General Assembly, A/40/256, 1985:

<sup>14</sup> St' u General Assembly Resolution, A/RES/50/81, 1995:



A/RES/56/117 բանաձևը<sup>15</sup>, Սոցիալական զարգացման հանձնաժողովի 2007 թվականի թիվ E/2007/26 և E/CN.5/2007/8 բանաձևերը<sup>16</sup>, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի 2008 թվականի թիվ A/RES / 62/126 բանաձևը<sup>17</sup>:

Ներկայումս երիտասարդությանը վերաբերող հիմնահարցերի հետազոտողները, որպես կանոն, կիսում են կարծիքն առ այն, որ երիտասարդության եզրույթի գոյություն ունեցող սահմանումները և դրան նվիրված տեսությունները գնալով դառնում են ավելի անորոշ, ինչն առավելապես պայմանավորված է ժամանակակից ապրելակերպի դեստանդարտացմամբ: Այսպես, առկա է նվազագույն և առավելագույն տարիքային շեմի ընդլայնման միջոցով քննարկվող հասկացությունների ծավալն ընդարձակելու համընդհանուր տենդենց, որի արդյունքում ավելի մեծ թվով մարդիկ, այսպես թե այնպես, կոչվում են որպես երիտասարդներ: Այնուամենայնիվ, երիտասարդության հասկացությունը պահանջում է միատարրություն՝ հիմնված սոցիալական ընդհանուր դիրքորոշման վրա:

Նկատի ունենալով երիտասարդական քաղաքականության հաստատված հայեցակարգերը և գործող սոցիալական մոդելները՝ պետությունները կանխորոշում են երիտասարդությանն աջակցության վերաբերյալ ազգային մոտեցումներն ու սահմանումները՝ կիրառելով առկա իրավական, ռազմավարական կամ քաղաքական բոլոր գործիքները:

<sup>15</sup> Տե՛ս General Assembly Resolutions, A/RES/56/117, 2002:

<sup>16</sup> Տե՛ս Commission for Social Development Resolutions, E/2007/26 & E/CN.5/2007/, 2007:

<sup>17</sup> Տե՛ս General Assembly Resolutions, A/RES/62/126, 2008:

«Երիտասարդության սահմանումը Եվրոպայի ժամանակակից ազգային-իրավական և քաղաքական շրջանակներում» («Defining youth in contemporary national legal and policy frameworks across Europe») հետազոտական աշխատանքում<sup>18</sup> ուսումնասիրելով երիտասարդների խմբի առանձնացման եվրոպական երկրների փորձը՝ հեղինակը ներկայացրել է երիտասարդության տարիքային սահմանումների 6 հիմնական խմբեր: Մասնավորապես.

1. 14/15/16-ից մինչև 29/30 տարեկան անձինք՝ գերիշխող եվրոպական մոդել, որին հետևում են Անդորրան, Ալբանիան, Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Բոսնիա և Հերցեգովինան, Բուլղարիան, Դանիան, Վրաստանը, Իտալիան, Լիտվան, Հունգարիան, Մոլդովան, Գերմանիան, Լեհաստանը, Ռուսաստան, Սլովենիան;

2. 13/15/16-ից մինչև 24/25 տարեկան անձինք՝ երիտասարդության կրճատված տարիքային մոդել, որին հետևում են Իռլանդիան, Լատվիան, նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետությունը, Շվեյցարիան և Շվեդիան;

3. 12/13-ից մինչև 30 տարեկան անձինք՝ մոդել, երբ երիտասարդության տարիքը սկսվում է ավելի վաղ և ավարտվում է ավելի ուշ՝ Միացյալ Թագավորություն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նորվեգիա և Պորտուգալիա;

4. 12/14/15/16-ից մինչև 32/35 տարեկան անձինք՝ երիտասարդության երկարացված տարիքային մոդել, որին հետևում

<sup>18</sup> Տե՛ս “Defining youth in contemporary national legal and policy frameworks across Europe” by Bojana Perovic, [www.pjp.eu.coe.int/documents/1017981/1668203/Analytical+paper+Youth+Age+Bojana+Perovic+4.4.16.pdf/eb59c5e2-45d8-4e70-b672-f8de0a5ca08c](http://www.pjp.eu.coe.int/documents/1017981/1668203/Analytical+paper+Youth+Age+Bojana+Perovic+4.4.16.pdf/eb59c5e2-45d8-4e70-b672-f8de0a5ca08c):

է Հունաստանը, Կիպրոսը, Ռումինիան, Սան Մարինոն և Ուկրաինան;

5. 3/6/7-ից մինչև 25/26/30 տարեկան անձինք՝ երիտասարդության տարիքային մոդել, որն ընդգրկում է նաև մանկության ժամանակահատվածը՝ Ֆրանսիա, Էստոնիա և Իսլանդիա;

6. 0-ից մինչև 25/29/30 տարեկան անձինք՝ երեխաներին և երիտասարդներին մեկ խմբում միավորելու մոդել, որին հետևում է Ավստրիան, Բելգիան, Լիխտենշտեյնը, Սլովակիան, Ֆինլանդիան և Նիդեռլանդները:

Հիմք ընդունելով վերոնշյալ հետազոտության արդյունքները՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ եվրոպական երկրներում գերիշխող մոդելի համաձայն «երիտասարդ» հասկացությունն ընդգրկում է 15-ից 29 տարեկան բոլոր անհատներին (47 երկրներից 23 երկիր (49%)):

Ինչ վերաբերում է, այսպես կոչված, երիտասարդության կրճատված տարիքային մոդելին, որով երիտասարդության տարիքը սահմանափակվում է 15-ից 24 տարիքով, ապա այն կիրառվում է եվրոպական երկրներից ընդամենը հինգում (10.6%): Ուշագրավ է, որ երիտասարդության կրճատված տարիքային մոդելը համահունչ է Միավորված ազգերի կազմակերպության կողմից օգտագործվող վերը նշված սահմանմանը: Գտնում ենք, որ սովյալ մոդելի կիրառմամբ վիճակագրական հետազոտությունների արդյունքում միանգամայն ի հայտ են գալիս այն բոլոր խնդիրները, որոնց բախվում է անձն իր կյանքի կարևորագույն անցումային փուլում:

Իր հերթին, ավելի վաղ սկսվող և ավելի բարձր տարիքում եզրափակվող տարիքային շեմը սահմանող մոդելը (12-ից/13-

ից մինչև 30 տարեկան), ըստ հետազոտության, ներկայացված է հինգ երկրներում (10.6%): Այդ մոդելի օգտագործման դեպքում «երիտասարդ» և «երիտասարդություն» հասկացությունները մեկնաբանվում են առավելապես լայնորեն, քանզի այդ խմբում ներառվում են նաև երեխաները, դեռահասները: Տրամաբանական է, որ բացառապես նման մոդելի կիրառումը կարող է շեղել երիտասարդության առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման ուղուց:

Անդրադառնալով երիտասարդության երկարացված տարիքային մոդելին՝ կարելի է նկատել, որ այն բնորոշ է հիմնականում Հարավային Եվրոպայի երկրներին, որտեղ անձի անկախությունը և կայացումը, որպես կանոն, տեղի են ունենում ավելի բարձր տարիքում՝ 30-ից հետո: Նման պարագայում, մեր կարծիքով, այդ երկրներում երիտասարդ համարվելու շեմի բարձրացման մոտեցման որդեգրումն առավել քան արդարացված է:

Ըստ իրականացված հետազոտության արդյունքների՝ մանկության տարիքն ընդգրկող մոդելը կիրառվում է ընդամենը երեք երկրներում (6.3%), որտեղ «մանկության» և «երիտասարդության» փուլերի միջև հստակ տարանջատում չի իրականացվում: Նույնը վերաբերում է նաև երեխաների և երիտասարդների տարիքային միավորման մոդելին, որտեղ համապատասխան խմբերին բնորոշ հատկանիշներն ավելի են անորոշ դառնում, քանի որ սահմանվում է բացառապես տարիքային վերին շեմը (սովորաբար 29 կամ 30 տարեկան, վեց երկրներ, 12.7 %):

Համակարգային վերլուծության արդյունքում համադրելով վերոգրյալ մոդելները՝ կարելի է գալ այն հետևության, որ

Եվրոպական երկրներում ավելի ցածր տարիքային սահմանի առնչությամբ հիմնականում գործում է նույնատիպ մոտեցում՝ երիտասարդ համարվելու տարիքը սովորաբար համընկնում է պարտադիր կրթություն ստանալու տարիքին (13/15): Ինչ վերաբերում է վերին տարիքի սահմանին, ապա այն առաջացնում է մոտեցումների բազմազանություն:

Անդրադառնալով եվրոպական երկրներում երիտասարդների իրավական կարգավիճակի սահմանմանը վերաբերող փաստաթղթերի տեսակներին, հետազոտության հեղինակը տարանջատել է երկրների երեք հիմնական խմբեր: Այսպես, առաջին խմբի երկրներում երիտասարդության՝ որպես սոցիալական խմբի մասին հիշատակվում է հիմնարար իրավական ակտերում: Նշյալ դեպքերում հիմնարար իրավական ակտերը սովորաբար երաշխավորում են երիտասարդների հիմնական իրավունքները, ինչպիսիք են բարոյական, մասնագիտական, ինտելեկտուալ և ֆիզիկական զարգացման իրավունքները, ինչպես նաև պաշտպանում են երիտասարդության շահերը: Երկրորդ խմբի երկրներում գործում են երիտասարդների մասին ընդհանուր օրենքներ, որոնք սովորաբար սահմանում են երիտասարդական քաղաքականության սկզբունքները և երիտասարդության զարգացմանն աջակցելու ուղիները, ընդ որում՝ ընդհանուր օրենքներից բացի առկա են ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր: Եվ վերջապես, երրորդ խմբին դասվող երկրներում երիտասարդությանը վերաբերող հիմնահարցերը քննարկման առարկա են դառնում հիմնականում ռազմավարական կամ այլ ծրագրային փաստաթղթերում:

Նշյալ հետազոտության լույսի ներքո՝ կարելի է գալ նաև

այն եզրահանգման, որ եվրոպական երկրներում երիտասարդական քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը սովորաբար սահմանում են տարիքային շեմ՝ առանց այդպիսի տարիքային սահմանափակման հիմնավորում տրամադրելու: Ակնհայտ է, որ նման մոտեցումը չի կարող դիտարկվել պատահականության դրսևորում: Այդ տեսակի քաղաքական որոշումների ետևում, որպես կանոն, կանգնած են բազմապիսի տնտեսական, սոցիալական, մշակութային, պատմական և աշխարհագրական գործոններ: Ընդ որում՝ նույնիսկ հստակ իրավական սահմանման բացակայության պարագայում հասարակության լայն զանգվածների համար պարզ է, որ երիտասարդության հասկացության բնորոշման հիմքում առաջին հերթին ընկած է պատկանելիությունը որոշ տարիքային խմբին:

Բացի այդ, հաճախ երիտասարդությանը վերաբերող ազգային-իրավական փաստաթղթերում պետությունների կողմից միաժամանակ որդեգրվում են երիտասարդ անձանց խումբը այլ խմբերից տարբերակող մի քանի մոտեցումներ: Մեր կարծիքով, այդպիսի իրողությունը պետությանն օժտում է մանևրելու կարողությամբ՝ ապահովելով տվյալ երկրում իրականացվող քաղաքականության համատեքստում նախաձեռնվող գործողությունների ճկունությունը:

Անդրադառնալով ԱՊՀ անդամ երկրներում «երիտասարդ» եզրույթին վերաբերող մոտեցումներին (տես, աղյուսակ 1)՝ կարելի է գալ հետևյալ հետևություններին.

– երիտասարդության (երիտասարդ մարդկանց) սահմանումը հիմնականում զետեղված է օրենքներում, բացառությամբ են կազմում Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաս-

տանի Դաշնությունը: Ընդ որում՝ հատկանշական է, որ «երիտասարդություն» և «երիտասարդ մարդիկ» հասկացությունները շատ դեպքերում ուղղակիորեն նույնացվում են:

– Որպես կանոն, երիտասարդությանը՝ որպես սոցիալական խմբին, պատկանելիությունը պայմանավորված է բացառապես տարիքային առանձնահատկություններով: Այսինքն՝ ԱՊՀ անդամ պետություններում սահմանված տարիքային խմբին պատկանելի ինքնին բավարար է նշյալ ակտերով շահառու դիտարկվելու համար: Սակայն որոշ երկրներում, բացի տարիքային շեմից, սահմանվում են նաև այլ հատկանիշներ, օրինակ, սոցիալական կարգավիճակի առանձնահատկությունները:

– Անդրադառնալով տարիքային սահմանափակումներին՝ հարկ է նկատել, որ որպես կանոն, նշյալ սոցիալական խմբի անդամ կարող է դիտարկվել 14 տարին լրացած անձր: Ինչ վերաբերում է վերին տարիքային շեմին, ապա ուսումնասիրությունների արդյունքում կարելի է պնդել, որ այն կազմում է 29-30 տարեկանը:

– Ուշադրությանն է արժանի նաև քաղաքացիության հիմքով անձանց շրջանակը: Այսպես, որոշ երկրներ հասկացության ծավալում ներառում են բացառապես իրենց պետության քաղաքացիներին, մյուսները՝ իրենց երկրի քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Կան երկրներ, որտեղ նշյալ եզրույթի ծավալում ընդգրկվում են նաև այն անձինք, ովքեր ունեն պետության տարածքում մշտական բնակություն կամ բնակվում են արտասահմանում:

Աղյուսակ 1

Պետություն	Աղբյուր	Սահմանում	Տարիքային շեմ
Հայաստան	«Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի 27 դեկտեմբերի N 1693-Ն որոշում	16-30 տարեկան քաղաքացիներ	16-30
Ադրբեջան	«Երիտասարդական քաղաքականության մասին օրենք» <sup>19</sup>	երիտասարդություն՝ 14-ից մինչև 29 տարեկան անձինք	14-29
Բելառուս	«Պետական երիտասարդական քաղաքականության հիմունքների մասին» օրենք <sup>20</sup>	երիտասարդ քաղաքացիներ՝ Բելառուսի Հանրապետության քաղաքացիներ, օտարերկր-	14-31

<sup>19</sup> Տե՛ս «Երիտասարդական քաղաքականության մասին» Ադրբեջանի Հանրապետության օրենք առ 2002 թվականի 9 ապրիլի N 297-III // [www.base.spinform.ru/show\\_doc.fwx?rgn=2578](http://www.base.spinform.ru/show_doc.fwx?rgn=2578):

<sup>20</sup> Տե՛ս «Պետական երիտասարդական քաղաքականության հիմունքների մասին» Բելառուսի Հանրապետության օրենք առ 2009

		յա քաղաքացիներ և Բելառուս Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք՝ 14 մինչև 31 տարեկան:	
<i>Թուրքմենստան</i>	«Պետական երիտասարդական քաղաքականության մասին» օրենք <sup>21</sup>	Երիտասարդություն (երիտասարդ քաղաքացիներ) - ներքոհիշյալ սոցիալ-դեմոգրաֆիական խմբերից մեկին պատկանող 14-ից մինչև 30 տարեկան Թուրքմենստանի քաղաքացիներ, ովքեր տարբերվում են հասարակության մեջ իրենց տարիքային հատկանիշների և սոցիալական կարգավիճակի առանձնահատկությունների հիմքով և այնուհետ որոշվում են որպես նպատակային խմբեր՝ ելնելով	14-30

թվականի 7 դեկտեմբերի №65-3 // [www.base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=29745](http://www.base.spininform.ru/show_doc.fwx?rgn=29745):

<sup>21</sup> Տե՛ս «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» Թուրքմենստանի օրենք առ 2013 թվականի 29 օգոստոսի [www.base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=62451](http://www.base.spininform.ru/show_doc.fwx?rgn=62451):

		միջոցների բնույթից և երիտասարդության պետական աջակցության մեխանիզմներից:	
<i>Ղազախստան</i>	«Պետական երիտասարդական քաղաքականության մասին» օրենք <sup>22</sup>	Երիտասարդություն՝ 14 մինչև 29 տարեկան Ղազախստանի Հանրապետության քաղաքացիներ	14-29
<i>Ղրղզստան</i>	«Պետական երիտասարդական քաղաքականության հիմունքների մասին» օրենք <sup>23</sup>	Երիտասարդ քաղաքացիներ (երիտասարդություն)՝ 14-ից 28 տարեկան Ղրղզստանի քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք.	14-28
<i>Մոլդովա</i>	«Երիտասարդության մասին» օրենք <sup>24</sup>	Երիտասարդություն, երիտասարդ մարդիկ՝ 16-ից մինչև 30 տարեկան	16-30

<sup>22</sup> Տե՛ս «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» օրենք Ղազախստանի Հանրապետության օրենք առ 2015 թվականի 9 փետրվարի №285-V 3PK [www.base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=73163](http://www.base.spininform.ru/show_doc.fwx?rgn=73163):

<sup>23</sup> Տե՛ս «Պետական երիտասարդական քաղաքականության հիմունքների մասին» օրենք Տաջիկստան Հանրապետության օրենք առ 2004 թվականի 15 հուլիսի №52 [www.base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=8261](http://www.base.spininform.ru/show_doc.fwx?rgn=8261):

<sup>24</sup> Տե՛ս «Երիտասարդության մասին» Մոլդովայի օրենք 1999 թվականի 11 փետրվարի №279-XIV [www.base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=3334](http://www.base.spininform.ru/show_doc.fwx?rgn=3334):

		անձինք	
<i>Ռուսաստան</i>	«ՌԴ պետական երիտասարդական քաղաքականության հիմունքները մինչև 2025 թվականը» ՌԴ կառավարության 2014 թվականի 29 նոյեմբերի N 2403-ք կարգադրություն <sup>25</sup>	«Երիտասարդություն» սոցիալ-դեմոգրաֆիական խումբ, որն առանձնանում է տարիքային առանձնահատկությունների, սոցիալական կարգավիճակի հիմքով և որը բնութագրվում է հատուկ շահերով և արժեքներով: Այս խումբը ընդգրկում է 14-ից մինչև 30 տարեկան անձանց, և Ռուսաստանի Դաշնության և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների նորմատիվ իրավական ակտերով սահմանված որոշ դեպքերում՝ մինչև 35 տարեկան և ավելի, ովքեր ունեն մշտական բնակություն Ռուսաստանի Դաշնությունում կամ բնակվում են	14-35

<sup>25</sup> Տե՛ս «ՌԴ պետական երիտասարդական քաղաքականության հիմունքները մինչև 2025 թվականը» ՌԴ կառավարության 2014 թվականի 29 նոյեմբերի N 2403-ք կարգադրություն, [www.government.ru/media/files/ceFXleNUqOU.pdf](http://www.government.ru/media/files/ceFXleNUqOU.pdf):

		արտասահմանում (Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ և հայրենակիցներ)	
<i>Տաջիկստան</i>	«Երիտասարդության և պետական երիտասարդական քաղաքականության մասին» օրենք <sup>26</sup>	Երիտասարդություն՝ սոցիալ-դեմոգրաֆիական խումբ, որն ընդգրկում է 14-30 տարեկան անձանց	14-30
<i>Ուզբեկստան</i>	«Պետական երիտասարդական քաղաքականության մասին» օրենք <sup>27</sup>	Երիտասարդություն, երիտասարդ մարդիկ՝ 14 մինչև 30 տարեկանը ներառյալ անձինք	14-30

Հարկ է նաև նշել, որ երիտասարդության հիմնախնդիրները մշտապես գտնվում են ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդական միջխորհրդարանական ասամբլեայի ուշադրության կենտրոնում: Այսպես, դեռևս 2012 թվականի նոյեմբերի 23-ի 38-րդ պլենար նիստին թիվ 38-10 որոշմամբ ընդունվել է «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» մոդելային օրենքը: Նշյալ օրենքի 1-ին հոդվածում, ի թիվս այլոց, բացահայտվում է «Երիտասարդություն»

<sup>26</sup> Տե՛ս «Երիտասարդության և պետական երիտասարդական քաղաքականության մասին» օրենք Դրդատանի Հանրապետության օրենք առ 2009 թվականի 31 հուլիսի:

<sup>27</sup> Տե՛ս «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» Ուզբեկստանի Հանրապետության օրենք առ 2016 թվականի 14 սեպտեմբերի NՅՔԿ-406 // [www.base.spinform.ru/show\\_doc.fwx?rgn=88888](http://www.base.spinform.ru/show_doc.fwx?rgn=88888):

(«երիտասարդ քաղաքացիներ») հասկացությունը՝ որպես քաղաքացիների սոցիալ-դեմոգրաֆիական խումբ (սոցիալական համայնք) (ներառյալ՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց), ովքեր մշտապես կամ հիմնականում բնակվում են ԱՊՀ անդամ պետությունների տարածքում և 14-ից 30 տարեկան են (կամ այլ տարիքի, եթե դա արտացոլում է ԱՊՀ անդամ-պետություններում երիտասարդության մասին ավանդապես ձևավորված պատկերացումները)<sup>28</sup>:

Բացի այդ, 2018 թվականին լույս է տեսել «Երիտասարդությունն անկախ պետությունների համագործակցությունում՝ վիճակագրական նկարագիր»<sup>29</sup> վերտառությամբ վիճակագրական աշխատանքը, որն արտացոլում է ԱՊՀ անդամ պետությունների երիտասարդ սերնդի մասին տեղեկատվությունը՝ ժողովրդագրության, միգրացիայի, առողջապահության, կրթության, կյանքի մակարդակի և կյանքի որակի, աշխատաշուկայում երիտասարդների տեղաբաշխման առնչությամբ: Հատկանշական է, որ նշյալ աշխատանքում, որպես կանոն, տարիքային սահմանները կազմում են 15-ից 29-ը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է գալ եզրահանգմանն առ այն, որ երիտասարդ մարդիկ կամ երիտասարդությունը կազմում են հասարակության առանձնահատուկ խումբ, որն առավելապես ապահովում է ազգային և համամարդկային արժեքների պահպանումը և զարգացումը: Ընդ որում՝ ներկա-

<sup>28</sup> St' u «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» մոդելային օրենք // [www.base.spinform.ru/show\\_doc.fwx?rgn=64509](http://www.base.spinform.ru/show_doc.fwx?rgn=64509):

<sup>29</sup> St' u «Երիտասարդությունն անկախ պետությունների համագործակցությունում՝ վիճակագրական նկարագիր» // [www.cisstat.com/](http://www.cisstat.com/):

յումն երիտասարդներին բնորոշ տարիքային ցենզերի փոփոխությունն անխուսափելի է, որն իր հերթին, ինքնըստինքյան հանգեցնում է «երիտասարդություն» իրավական եզրույթի բովանդակային չափորոշիչների փոփոխության:

Այսպես, Ե. Վ. Տուրինցեվայի կարծիքով, հնարավոր է, որ ապագայում մարդը դիտարկվի երիտասարդ մինչև կյանքի նկատմամբ հոգնածության զգացողության ի հայտ գալը<sup>30</sup>: Իսկ Ս. Վ. Սոլովյովայի պնդմամբ, ժամանակի պատմությունը հոսում է, և մշակույթում իրավիճակը փոխվում, դա հատկապես վերաբերում է XX–XXI դարերին, երբ, չնայած բնակչության համաշխարհային ծերացմանը, հասարակությունը «երիտասարդանում է»՝ ընդունում ապրելակերպ, որը նախկինում յուրահատուկ էր երիտասարդությանը և նախատեսված նրա համար<sup>31</sup>:

Գտնում ենք, որ երիտասարդներին բնորոշելու համատեքստում՝ առավել նպատակահարմար է կիրառել, այսպես կոչված, պայմանական տարիքային սահմանափակումների մոտեցումը, ինչը պետական երիտասարդական քաղաքականության ի կատար ածելու գործընթացում հնարավորություն կընձեռի նկատի ունենալ բոլոր շահագրգիռ անձանց առանձնահատկությունները՝ փոխհարաբերությունների բազմազա-

<sup>30</sup> St' u, Луков В.А. Биосоциология молодежи: экспертные оценки изменений в обществе, связанных с увеличением продолжительности жизни // Знание. Понимание. Умение. 2012., № 4. С. 77–83

<sup>31</sup> St' u, Соловьева С.В. Юность и молодость в философии возраста // Модернизация культуры: идеи и парадигмы культурных изменений: материалы международной научно-практической конференции / под ред. С.В. Соловьевой, В.И. Ионесова, Л.М. Артамоновой, Самара, 2014, Ч. 1, С. 180–187:

նության տեսանկյունից:

Այսպիսով, առաջարկվում է «երիտասարդություն» հասկացությունը բնորոշել՝ որպես սոցիալ-դեմոգրաֆիական խումբ, որը պայմանականորեն տարբերվում է տարիքային հատկանիշների և սոցիալական կարգավիճակի հիման վրա, առանձնանում յուրահատուկ շահերով և արժեհամակարգով, ինչպես նաև ունակ է ինքնուրույն ազդեցություն ունենալ հասարակական զարգացումների վրա:

## **1.2. Երիտասարդների քաղաքական իրավունքների և ազատությունների իրականացման առանձնահատկությունները**

Քաղաքական իրավունքներն անձի կարևորագույն իրավունքներից են: Դրանք կարելի է բնորոշել որպես իրավունքների խումբ, որոնք անձին հնարավորություն են տալիս հասարակական-քաղաքական կյանքում իրացնելու իրենց՝ որպես հասարակության լիիրավ անդամի իրավունքները, այդ թվում՝ կարծիք արտահայտելու, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ ընտրելու, որպես սովյալ մարմինների ներկայացուցիչ առաջադրվելու, տեղեկություն ազատորեն ստանալու և այլ իրավունքներ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ քաղաքական իրավունքները, որպես կանոն, պայմանավորված են քաղաքացիության հետ. որոշակի երկրի քաղաքացիություն ունենալու փաստի հետ են կապված և ի տարբերություն քաղաքացիական իրավունքների՝ կարգավորում են անհատի և պետության իրավահա-

րաբերությունները<sup>32</sup>: Անհրաժեշտ է նշել, որ քաղաքական իրավունքները բացարձակ իրավունքներ չեն: Դրանք կարող են ենթարկվել որոշակի սահմանափակումների, ինչպես նաև իրացվել և՛ անհատական (օրինակ՝ հանրագիր ներկայացնելը, տեղեկատվություն պահանջելը), և կոլեկտիվ (օրինակ՝ կուսակցություններ կամ միավորումներ ստեղծելը) ձևով:

Իրավական փաստաթղթերում քաղաքական իրավունքները տարանջատված չեն որպես միայն երիտասարդների կամ տարիքային այլ խմբին պատկանող իրավունքներ: Այնուամենայնիվ նման պայմանական տարանջատում հնարավոր է իրականացնել՝ քաղաքական իրավունքների իրացման տարիքային պահանջների, քաղաքական իրավունքներից օգտվելու վիճակագրության հիման վրա կամ երկրի քաղաքական կյանքով մտահոգ (շահագրգիռ) լինելու փաստի հիմքով: Ակնհայտ է, որ որոշ քաղաքական իրավունքներ ենթադրում են որոշակի տարիքային խմբին պատկանելություն: Քաղաքական իրավունքների զգալի մասը իրականում երիտասարդներին բնորոշ և առավելապես նրանց կողմից իրացվող իրավունքներ են (ընտրելու և ընտրվելու իրավունքը, հավաքների ազատության իրավունքը, այլ իրավունքներ), քանի որ դրանց իրացման համար անհրաժեշտ է երիտասարդական ավյուն, ակտիվություն, տեխնոլոգիաներից և տեխնիկական միջոցներից օգտվելու կարողություն, որոշակի առումով՝ նաև ապագայով մտահոգ (շահագրգիռ) լինելու հակվածություն:

Ստորև կքննարկենք առանձին քաղաքական իրավունքները՝ շեշտադրելով հատկապես երիտասարդների կողմից

<sup>32</sup> Ст'у Права человека - ред. Е.А. Лукашев, [http://adhdportal.com/book\\_2668\\_chapter\\_27\\_\\_5.\\_Politicheskie\\_prava\\_i\\_svobody.html](http://adhdportal.com/book_2668_chapter_27__5._Politicheskie_prava_i_svobody.html)



դրանց իրացման կարևորությունը: Ի դեպ, հատկապես երիտասարդների կողմից քաղաքական իրավունքներից ակտիվորեն օգտվելու կարևորության և հասարակական-քաղաքական կյանքի զարգացման կամ առաջընթացի համար երիտասարդների մեծ դերի մասին են նշում բազմաթիվ միջազգային փաստաթղթեր և կառույցներ:

Աշխարհի տարբեր երկրների սահմանադրություններով ամրագրված և միջազգային համապատասխան փաստաթղթերով երաշխավորված քաղաքացու հիմնական քաղաքական իրավունքներն են՝ ընտրական իրավասուբյեկտությունը (ընտրելու և ընտրվելու իրավունք), պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը, հանրագրեր (պետիցիաներ) ներկայացնելու իրավունքը, խոսքի և մամուլի ազատությունը, տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքը, միավորումների և ասոցիացիաների ազատությունը, հավաքների ազատությունը<sup>33</sup>:

Քաղաքական իրավունքների ամրագրվածությունը և պաշտպանվածությունը պայմանավորված են տվյալ երկրի պետական (քաղաքական) ռեժիմով: Քաղաքական իրավունքների ծավալը, իրացման մակարդակը և պաշտպանվածության աստիճանը կախված է նրանից, թե համապատասխան երկիրը ժողովրդավարական է, թե հակաժողովրդավարական (ավտորիտար, տոտալիտար, ռասիստական):

Երիտասարդների քաղաքական իրավունքները և ազատությունները, նախ և առաջ, անհրաժեշտ է քննարկել այդ ի-

<sup>33</sup> St' u A. B. Шашкова, Курс лекций по конституционному праву зарубежных стран, 2008, стр. 65-66:

րավունքներն ամրագրող առաջնային միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունից:

Այսպես, քաղաքական իրավունքները և ազատություններն առաջին հերթին ամրագրված են 1948թ. ընդունված **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում**, որում նախանշվում են անձի հիմնարար իրավունքները: Հռչակագրի 19-րդ, 20-րդ և 21-րդ հոդվածները սահմանում են համապատասխանաբար համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու, ներառյալ տեղեկություններ ստանալու, խաղաղ հավաքների, միություններ կազմելու և ընտրական իրավունքները:

Հաջորդ կարևորագույն փաստաթուղթը **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրն** է, որի կարգավորման տիրույթը սահմանափակվում է միայն քաղաքական և քաղաքացիական իրավունքներով: Այսպես՝ նշված փաստաթղթով սահմանված և երաշխավորված են կարծիք արտահայտելու, տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը (հոդված 19), խաղաղ ժողովների իրավունքը (հոդված 21), միավորվելու, ներառյալ արհմիություններ ստեղծելու իրավունքը (հոդված 22), պետական գործերի կառավարմանը մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունքը (հոդված 25):

**Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան** (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) և սահմանում և պաշտպանում է որոշ քաղաքական իրավունքներ, մասնավորապես՝ արտահայտվելու և տեղեկատվության ազատությունը (հոդված 10), հավաքների և միավորման ազատությունը (հոդված 11), ազատ ընտրու-

յունների իրավունքը (Կոնվենցիայի 1-ին Արձանագրության հոդված 3):

Անդրադառնալով երիտասարդների քաղաքական իրավունքներին՝ ընդգծենք, որ, բացի վերոնշյալ փաստաթղթերից, երիտասարդների քաղաքական ակտիվության և կարևոր դերակատարության մասին խոսվում է Միավորված ազգերի կազմակերպության մի շարք կոնվենցիաներում և բանաձևերում, ինչպիսիք են Երեխայի իրավունքների մասին 1989թ. կոնվենցիան, Երիտասարդներին վերաբերող համաշխարհային գործողությունների 1996թ. ծրագիրը, Գլխավոր ասամբլեայի 2003թ. թիվ A/RES/58/133 բանաձևը, ինչպես նաև 2006թ. Աֆրիկյան միության կողմից ընդունված Աֆրիկյան երիտասարդական խարտիան, Միջխորհրդարանական միության 122-րդ ասամբլեայի կողմից 2010թ. ընդունված երիտասարդության հարցերով բանաձևը<sup>34</sup>:

Այսպես, **Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի** համաձայն՝ երեխաներն իրավունք ունեն մասնակցելու այն որոշումների կայացմանը, որոնք ազդեցություն են ունենում իրենց կյանքի վրա: **Աֆրիկյան երիտասարդական խարտիան** նշում է, որ յուրաքանչյուր երիտասարդ անձ պետք է իրավունք ունենա մասնակցելու հասարակական կյանքի բոլոր ոլորտներին:

Վերոնշյալ փաստաթղթերը հերթական անգամ ընդգծում են քաղաքական իրավունքներին երիտասարդների ներգրավվածությունը և վկայում քաղաքական կյանքի որակի վրա ե-

<sup>34</sup> St´u Расширение политического участия молодежи на всех этапах электорального цикла, Руководство по передовой практике, Январь, 2013, стр. 61-62.

րիտասարդների ազդեցության կարևորության մասին: Այդ մասին են մեզ հուշում նաև աշխարհի տարբեր երկրներում սահմանված՝ երկրի կառավարմանը մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունքների իրացման համար սահմանված տարիքային պահանջները, որոնք հիմնականում տատանվում են 18-25 տարեկանի միջակայքում:

Երիտասարդների քաղաքական ակտիվությունը խթանող օրենսդրական կարգավորումները կենսական նշանակություն ունեն քաղաքական կյանքում երիտասարդների ակտիվության համար: Երկրների 1/3-ում խորհրդարանի անդամ ընտրվելու տարիքը սահմանված է 25 տարեկանը և ավելի: Դա տարանջատում է մտցնում մի կողմից չափահասության և ընտրելու իրավունքի, մյուս կողմից ընտրվելու և ընտրովի պաշտոն զբաղեցնելու իրավունքի միջև: Այստեղ, մեր կարծիքով, ակնհայտ է ընտրվելու իրավունքի համար առավել բարձր տարիքային շեմի սահմանման նպատակը՝ հաշվի առնելով այս կամ այն պաշտոնը ստանձնելիս որոշակի ոլորտում փորձառություն, որոշումներ կայացնելու ունակություն ունենալու և այլ հատկանիշների անհրաժեշտությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված են անձի և քաղաքացու հետևյալ քաղաքական իրավունքները՝ **կարծիքի արտահայտման ազատություն** (42-րդ հոդված), **միավորումների ազատություն** (հոդված 45), **կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունք** (հոդված 46), **հավաքների ազատություն** (հոդված 44), **ընտրական իրավունք և հանրաքվեին մասնակցելու իրավունք** (հոդված 48), **հանրային ծառայության իրավունք** (հոդված 49), **տեղեկություններ ստանալու իրավունքը** (հոդված

51), **հանրագիր ներկայացնելու իրավունք** (հոդված 53):

Սահմանադրության վերոնշյալ նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մեր երկրում քաղաքական իրավունքների մի զգալի մասը պատկանում է ոչ միայն քաղաքացիներին, այլև օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց: Մասնավորապես, նաև օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց պատկանող իրավունքներն են՝ կարծիքի արտահայտման ազատությունը, հավաքների ազատությունը, միավորումների ազատությունը, տեղեկություններ ստանալու և հանրագիր ներկայացնելու իրավունքները:

Նշենք նաև, որ որոշակի պաշտոն զբաղեցնող կամ կարգավիճակ ունեցող անձանց քաղաքական իրավունքները կարող են սահմանափակվել՝ հաշվի առնելով վերջիններիս պաշտոնի կամ գործունեության բնույթը և առանձնահատկությունները: Այսպես՝ ՀՀ Սահմանադրությամբ քաղաքական գործունեության արգելք հանդիսացող սահմանափակումներ են նախատեսված դատավորների (հոդված 164), Մարդու իրավունքների պաշտպանի (հոդված 193), Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների (հոդված 195), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների (հոդված 197), Հաշվեքննիչ պալատի անդամների (հոդված 199), Կենտրոնական բանկի խորհրդի անդամների (հոդված 201) համար<sup>35</sup>:

<sup>35</sup> Յուրաքանչյուր քաղաքական իրավունքի առանձնահատկությունների, ծավալի կամ տվյալ իրավունքի մասով սահմանափակումների մասին կխոսենք առանձին-առանձին, քաղաքական իրավունքների տեսակներին անդրադառնալիս:

Այսպես, **միավորումների ազատության իրավունքը** ենթադրում է անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված տարբեր տեսակի կազմակերպություններ հիմնելու և (կամ) դրանց անդամակցելու ազատություն: Անձի ընտրությամբ այս կամ այն խմբին անդամակցելը (միանալը) և խմբերի կողմից իրենց շահերը խթանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ հատկանիշ է: Հաշվի առնելով, որ միավորումների ազատությունն անպայմանորեն ենթադրում է կառավարությունից զատ ուժի և կազմակերպման բազմակարծության աղբյուրներ, այն բռնապետության բոլոր տեսակների կողմից բռնաճնշումների առաջնային թիրախ է եղել: Միացյալ Թագավորությունում մինչև 1825 թվականի՝ Միավորումների ակտի ընդունումը «համախմբման» բոլոր ձևերը, այդ թվում՝ նաև աշխատավորական կազմակերպությունները, արգելված էին և համարվում էին հանցավոր: Ընկերությունների մասին 1856թ. օրենքի, Արհմիությունների մասին 1871թ. օրենքի և Քրեական դավադրության և սեփականության պաշտպանության մասին 1875թ. օրենքի ընդունումից հետո ընկերությունները, ապա նաև արհմիությունները ընդհանուր առմամբ օրինականացվեցին: Գերմանիայում ևս Բիսմարկի կառավարության կողմից ռեպրեսիվ օրենքների նմանատիպ համախումբ է կիրառվել ինչպես արհմիությունների, այնպես էլ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների դեմ՝ 1878թ. «Սոցիալիստական» ակտի ներքո: Դա տևեց մինչև 1890 թվականը: Առևտրային միությունները արգելվեցին նաև Հիտլերի ազգային-սոցիալիստական կուսակցության ֆաշիստական

դիկտատուրայի կողմից: Արդյունքում՝ գոյություն ունեցող արհմիությունները ազգայնացվեցին և միավորվեցին գերմանական աշխատավորական ճակատի կողմից կառավարվող մեկ կառավարության ներքո: Երկրորդ աշխարհամարտից հետո ազատ արհմիությունները արագ հարություն առան և երաշխավորվեցին գերմանական Գրունդեսեցի կողմից: Միացյալ Նահանգներում արհմիությունները տարբեր ժամանակներում տարբեր պետական դատարանների կողմից դասակարգվել են որպես առևտրի խոչընդոտ: 1914թ. Քլեյթոնի ակտով արհմիություններին տրվեց ընդհանուր ազատություն՝ կոլեկտիվ պայմանագրեր ապահովելու համար կազմակերպվելու և հավաքականորեն գործելու իրավունք, սակայն խոչընդոտները հետագայում շարունակվեցին մինչև 1935թ., երբ Աշխատանքային հարաբերությունների մասին ազգային ակտը ստեղծեց աշխատանքային համապարփակ օրենսգիրք<sup>36</sup>:

Ինչպես տեսնում ենք, աշխարհի բոլոր, այդ թվում՝ առաջադեմ համարվող, երկրներում միավորումների ազատության իրավունքը մեծ փորձությունների է ենթարկվել և դժվարությամբ իր տեղը գտել մարդու հիմնարար իրավունքների շարքում:

Ինչպես արձանագրել է Եվրոպայի խորհրդի՝ Ժողովրդավարություն իրավունքի միջոցով հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), միավորումների ազատությունը մարդու իրավունք է, որը ժողովրդավարության գոյության նախադրյալ է, ինչպես նաև հիմնարար ազատությունների կարևոր նախա-

պայման<sup>37</sup>: Միջազգային օրենսդրությամբ և ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների խորհրդատվություններում, ինչպես նաև Մարդու իրավունքների խորհրդի և այլ միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերում ամրագրված է, որ միավորումները հաճախ կարևոր և դրական դեր են կատարում հանրային շահերից բխող նպատակներին հասնելու համար: Միավորումներն աշխատում են խնդիրների լայն ծավալի լուծման ուղղությամբ, ներառյալ մարդու իրավունքների (ինչպես, օրինակ, խտրականության և ռասայական ատելության խոսքի դեմ պայքար, մարդու իրավունքների ինստիտուտների աշխատանքի մշտադիտարկում և աջակցում, երեխաների իրավունքների իրականացման խթանում, ճանաչում և մշտադիտարկում, ընտանեկան և կանանց դեմ ուղղված բռնությունների կանխարգելում և դրա դեմ պայքար), ժողովրդավարական ռեֆորմների (լավ կառավարում, հասարակական-քաղաքական կյանքում հավասար մասնակցություն), անվտանգության և միջազգային համագործակցության, սոցիալական, տնտեսական և զարգացման հետ կապված խնդիրները: Բացի այդ, միավորումները հաճախ ակտիվ են հասարակության համար կարևոր հարցերի և մարտահրավերների, ինչպես, օ-

---

37 St' u Venice Commission, "Compilation of Venice Commission Opinions on Freedom of Association" (3 July 2014) CDL-PI (2014)004, para. 2.2, which refers to: Venice Commission, "Opinion on the compatibility with human rights standards of the legislation on non-governmental organisations of the Republic of Azerbaijan" (14-15 October 2011) CDL-AD (2011)035, para. 45; Venice Commission, "Opinion on the Federal law on combating extremist activity of the Russian Federation" (15-16 June 2012) CDL-AD (2012)016, para. 64:

---

<sup>36</sup> [https://en.wikipedia.org/wiki/Freedom\\_of\\_association](https://en.wikipedia.org/wiki/Freedom_of_association)

րինակ, շրջակա միջավայրի, կայուն զարգացման, հանցագործությունների կանխարգելման, սոցիալական արդարության, կանանց դերի բարձրացման, սպառողների պաշտպանության և մարդու բոլոր իրավունքների իրացման ապահովման հասցեագրման և լուծման հարցերում: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած պարտավորությունների կատարման տեսանկյունից միավորումների դերն ընդգծվում է նաև ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից այն շեշտադրումներով, որոնք ուղղված են միավորումների մասնակցությանը մասնակից պետությունների կողմից ներկայացվող զեկույցների պատրաստման, քննարկման և կատարման գործընթացում<sup>38</sup>:

Միավորումները, ելնելով դրանց գործունեության նպատակից, կարելի է հարաբերականորեն բաժանել հասարակականի և քաղաքականի: Հասարակական միավորումներ են համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր միավորումները, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 122-րդ հոդված): Հասարակական միավորումներ են հասարակական կազմակերպությունները, արհմիությունները:

Հասարակական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետություն-

<sup>38</sup> See European Commission for Democracy Through Law (Venice Commission), OSCE office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR), joint guidelines on freedom of association, Strasbourg, Warsaw, 17 december 2014, pages 12-14:

ների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Հասարակական կազմակերպությունները կարող են հիմնադրվել առնվազն երկու անձի՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձի կողմից: Կազմակերպություն չեն կարող հիմնադրել կամ դրա անդամ չեն կարող լինել կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, ինչպես նաև օրենքով հասարակական կազմակերպություն հիմնելու կամ նրա անդամ դառնալու իրավասություն չունեցող իրավաբանական անձինք («Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 2 և 10):

Հայաստանում անկախության տարիներից ի վեր գործում են մեծ թվով հասարակական կազմակերպություններ, որոնք գործունեություն են իրականացնում հիմնականում մարդու իրավունքների, հասարակական-քաղաքական, տնտեսական ոլորտներում՝ իրականացնելով շահերի պաշտպանություն, ոլորտային խնդիրների վերհանում, ռազմավարությունների և իրավական ակտերի նախագծերի մշակում, տարբեր ոլորտների մշտադիտարկում և զեկույցների կազմում: Նշված հետազոտությունների և մշտադիտարկումների արդյունքները հաճախ հիմք են ընդունվում քաղաքականություն իրականացնողների կողմից այս կամ այն ոլորտում փոփոխություններ կամ բարելավումներ իրականացնելիս:

Նախկինում գործող իրավական դաշտի շրջանակներում հայաստանյան հասարակական կազմակերպությունները ֆինանսավորվում էին միայն դոնոր կազմակերպությունների կողմից, որպիսի իրավիճակը որոշակիորեն սահմանափա-

կում էր վերջիններիս գործունեության հնարավորությունները և անկախությունը: 2016թ. ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքով հասարակական կազմակերպություններին թույլատրվեց նաև իրենց կանոնադրական նպատակների շրջանակներում իրականացնել առևտրային գործունեություն՝ հնարավորություն ստանալով ապահովել ինքնաֆինանսավորում:

Ի տարբերություն հասարակական միավորումների, որոնց կարող են անդամակցել բոլոր անձինք՝ անկախ քաղաքացիությունից, քաղաքական միավորումների անդամ կարող են լինել միայն քաղաքացիները: Վերջինս պայմանավորված է քաղաքական կուսակցությունների դերով և գործունեության նպատակով: Բացի այդ, ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով միավորվելու իրավունքը, առանձին ամրագրում է նաև կուսակցություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքները՝ հատուկ կարևորելով դրանց իրացումը երկրի քաղաքական կյանքում:

Քաղաքական կուսակցությունները մինևսայն քաղաքական հայացքներն ունեցող անձանց միավորումներ են, որոնք հավաքական ուժերով և միջոցներով այս կամ այն կերպ մասնակցում կամ փորձում են մասնակցել երկրի քաղաքական իրադարձություններին, այդ թվում՝ պետական իշխանության իրականացմանը:

Սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության»: Սահմանադրությամբ ամրագրված՝ **կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու**

**լու իրավունք** ունեն տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացիները («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 12): Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ մեր երկրում այս իրավունքն ունի տարիքին և գործունակությանը ներկայացվող սահմանափակման չափանիշներ:

Կուսակցություն հիմնադրելու կամ դրան անդամագրվելու իրավունքների սահմանափակումներ առկա են աշխարհի բոլոր երկրներում, տարբերությունը կայանում է սահմանափակումների աստիճանում կամ տեսակում: Մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ոչ ֆեդերալ, ոչ էլ նահանգների մակարդակով կարգավորված չէ կուսակցությունների ստեղծման և գործունեության կարգը. ֆեդերալ օրենսդրությունն անդրադառնում է միայն նախընտրական քարոզչության ֆինանսավորման և կոռուպցիայի հարցերին<sup>39</sup>: Միացյալ Թագավորությունում ևս հատուկ կարգավորումներ չկան քաղաքական կուսակցության անդամության պարտադիր պահանջների, անգամ կուսակցությունների կողմից իրենց անդամների վերաբերյալ տվյալները հրապարակելու մասին<sup>40</sup>: Ֆրանսիայում անդամության հարցն օրենսդրորեն կարգավորված չէ. յուրաքանչյուր կուսակցություն ինքն է որո-

<sup>39</sup> St´u A.B. Курочкин, Сравнительно-правовой анализ российского и зарубежного действующего законодательства о политических партиях, Ученые записки казанского государственного университета, Том 149, кн. 6, 2007, стр. 2:

<sup>40</sup> St´u Lukas Audickas, Noel Dempsey, Richard Keen, Membership of UK Political Parties, Briefing paper, Number SN05125, 3 September 2018, page 6:

շում, թե ովքեր կարող են լինել իրենց անդամները<sup>41</sup>: Գերմանիայում կուսակցությանն անդամակցելու նվազագույն տարիքը 16 տարեկանն է<sup>42</sup>, իսկ 14 տարեկանից անձը կարող է լինել երիտասարդական կազմակերպության անդամ<sup>43</sup>: Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում, ՌԴ-ում և բազմաթիվ այլ երկրներում կուսակցությանն անդամակցելու տարիքը 18 տարեկանն է:

Ինչպես նշվեց, քաղաքական իրավունքները բացարձակ իրավունքներ չեն և կարող են ենթարկվել որոշակի սահմանափակումների: Այսպես, Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ»: Բացի այդ, իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում կուսակցության անդամ չեն կարող լինել Հանրապետության նախագահը, Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները, Հաշվեքննիչ պալատի ան-

<sup>41</sup> Sté u Oscar W. Gabriel, Silke I. Keil, Eric Kerrouche, Political participation in France and Germany, ECPR press, page 55:

<sup>42</sup> Sté u European Commission, EACEA National Policies Platform, Youth participation in representative democracy, <https://eacea.ec.europa.eu/national-policies/en/content/youthwiki/52-youth-participation-representative-democracy-germany>:

<sup>43</sup> <https://www.cdu.de/artikel/fragen-und-antworten-zur-mitgliedschaft>:

դամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները:

Հաջորդ կարևորագույն քաղաքական իրավունքը **ընտրական իրավունքն** է, որն ունի երկու բաղադրիչ՝ **ընտրելու և ընտրվելու իրավունք**:

**Ընտրելու իրավունքը կամ ակտիվ ընտրական իրավունքը** ենթադրում է ընտրելու իրավունք ունեցող անձանց կողմից համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ընտրություն:

Ընտրելու իրավունքն իր հերթին անհրաժեշտ է քննարկել երկու հարթությունում՝ **1. համապետական ընտրություններ** (գործող կառավարման կարգի պայմաններում՝ Ազգային ժողովի ընտրություններ) և **հանրաքվե, 2. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ**:

Այսպես՝ **համապետական ընտրությունների** կամ **հանրաքվեի** օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք (Սահմանադրություն, հոդված 48): **Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների** ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը (Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մաս): Նշված սահմանադրական նորմի հիման վրա ընթացիկ օրենսդրությամբ սահմանվել են այս իրավունքի իրացման

մնացյալ պայմանները:

Այսպես, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեզիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից գորացրվելու կամ ազատագրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված:

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ՀՀ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձանց վրա (ՀՀ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, հոդված 2, մաս 2):

Ինչ վերաբերում է **ընտրվելու կամ պասիվ ընտրական իրավունքին**, ապա այն համապատասխան տարիքի հասած և

օրենսդրությամբ սահմանված այլ պահանջներին համապատասխանող անձանց իրավունքն է՝ ընտրվելու որոշակի պաշտոններում:

Այսպես, Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել **քսանհինգ տարին** լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք (Սահմանադրություն, հոդված 48):

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրվելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը **տասնութ տարին** լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները<sup>44</sup>:

Վերոնշյալի վերլուծությունից բխում է, որ այնպիսի պատասխանատու պաշտոններում, ինչպիսիք են պատգամավորները և համայնքի ղեկավարներն ու ավագանու անդամները, ընտրվելու իրավունք ունեն նաև երիտասարդ անձինք (նվազագույն տարիքը՝ 18-25 տարեկան), որն իր հերթին ենթադրում է նաև այլ հատկանիշների առկայություն՝ կրթություն ստանալու և ինքնակրթվելու հակվածություն, լեզուների յուրացման բարձր մակարդակ, տեխնոլոգիաներին, ժամանակի պահանջներին համապատասխանող այլ տեխնիկա-

---

<sup>44</sup> Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությամբ երկրի նախագահն այլևս ուղղակիորեն չի ընտրվում ժողովրդի կողմից, նախագահին ներկայացվող տարիքային և այլ պահանջները սույն ուսումնասիրության շրջանակներում առանձին չեն քննարկվի:



կան և տեղեկատվական պահանջներին բավարարելու մեծ պոտենցիալ:

Ազգային խորհրդարաններում երիտասարդների մասնակցության վերաբերյալ 2016թ. կատարված հետազոտության արդյունքների համաձայն՝ 30 տարեկանից ցածր տարիքի երիտասարդները կազմում են աշխարհի պատգամավորների 2%-ից պակաս, աշխարհի միասնական կամ ստորին պալատի պատվամենտների 30%-ը 30 տարեկանից ցածր տարիքի պատգամավոր չունեն, աշխարհի պատվամենտների վերին պալատների 80 և ավելի տոկոսը 30 տարեկանից ցածր տարիքի պատգամավոր չունեն<sup>45</sup>: Այնուամենայնիվ երիտասարդների ներգրավվածության վիճակն էականորեն փոփոխվել է հատկապես Հայաստանյան ներկայիս իրավիճակում. ՀՀ Ազգային ժողովում ու Կառավարությունում առկա է երիտասարդ քաղաքական գործիչների ներգրավվածության բարձր մակարդակ<sup>46</sup>:

**Ընտրական իրավունքի սահմանափակումների** մասին խոսելիս նշենք, որ այդպիսի սահմանափակումներ նախատեսված են աշխարհի բոլոր երկրների հիմնական օրենքներով: Այդ սահմանափակումները նպատակ ունեն օբյեկտիվ հիմքերի և հիմնավոր պատճառների առկայության դեպքում սահմանափակել որոշակի կատեգորիայի անձանց ընտրական իրավունքը՝ հասարակական-պետական շահի պաշտպանության նպատակով:

<sup>45</sup> St' u Youth participation in national parliaments 2016, Inter-Parliamentary Union, page 3:

<sup>46</sup> Այս մասին առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է սույն աշխատության 2-րդ գլխում:

Միջազգային իրավական փաստաթղթերում ընտրական իրավունքի համընդհանրությունը հանդիսանում է քաղաքացիների ընտրական իրավունքի հիմնական սկզբունքը (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդված, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 25-րդ հոդված և այլն): Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 25-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է *ստանց չհիմնավորված սահմանափակումների* իրավունք ունենա քվեարկելու և ընտրված լինելու հերթական արդար ընտրություններում: Մակայն «չհիմնավորված սահմանափակումներ» հասկացության չափանիշները տվյալ փաստաթղթում բացահայտված չեն: Նշվածի կապակցությամբ առաջանում է երկու հիմնական հարց՝ ինչ նորմատիվ փաստաթղթերով կարող է սահմանափակվել տվյալ իրավունքը, և որն է այդ սահմանափակման թույլատրելի սահմանը: Առաջին հարցադրման կապակցությամբ հետաքրքիր է գերմանական իրավունքում գործածվող՝ հիմնական իրավունքների *իմանենտ սահմանների* դոկտրինը, որի համաձայն՝ հնարավոր են միայն այն սահմանափակումները, որոնք սահմանված են երկրի սահմանադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով, եթե հղումը տվյալ ակտերին ուղղակիորեն նախատեսված է սահմանադրությամբ: ՌԴ Սահմանադրությունը սահմանում է ընտրական իրավունքի միայն երկու ուղղակի սահմանափակում՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճ-

ռով դատապարտված և պատիժը կրող անձանց համար (հոդված 32, մաս 3): ՌԴ Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ տվյալ սահմանադրական նորմը չի պարունակում ուղղակի հղումներ, սակայն չի էլ ենթադրում այնպիսի մեկնաբանություն, որն ամբողջությամբ կբացառեր ընտրական իրավունքի այլ սահմանափակումների նախատեսման հնարավորությունը ֆեդերալ օրենքով<sup>47</sup>:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք (հոդված 48, մաս 4): Մեջբերված սահմանադրական ձևակերպումների վերլուծությունից եզրահանգում ենք, որ **ընտրելու իրավունքի համեմատությամբ ընտրվելու իրավունքի համար սահմանված է սահմանափակման ավելի մեծ աստիճան:**

Պետությունների օրենսդրությամբ, որպես կանոն, սահմանվում են ընտրական իրավունքների երկու բնույթի սահմանափակումներ՝ համապատասխան ընտրովի պաշտոնի թեկնածուին ներկայացվող պահանջներ և անկախ առաջին

47 St' u Черепанов В.А. О допустимых пределах ограничения избирательных прав граждан, [https://studref.com/405009/politologiya/dopustimyh\\_predelah\\_ogranicheniya\\_izbiratelnyh\\_prav\\_grazhdan](https://studref.com/405009/politologiya/dopustimyh_predelah_ogranicheniya_izbiratelnyh_prav_grazhdan)

սահմանափակումներից՝ որոշակի պաշտոն կամ կարգավիճակ զբաղեցնելու արգելքներ:

Ընտրովի պաշտոնների թեկնածուներին ներկայացվող պահանջները հիմնականում վերաբերում են տարիքին, քաղաքացիությանը և մշտական բնակությանը (ռեզիդենտությանը), կրթությանը, սեռին: Այսպես՝ **տարիքային պահանջը (ցենզ)** օրենքով սահմանված պահանջ է, որի համաձայն ընտրություններին մասնակցելու իրավունքը վերապահվում է միայն որոշակի տարիքի հասնելու դեպքում: Որպես կանոն՝ այդ տարիքը 18 տարեկանն է (Հայաստան, ԱՄՆ<sup>48</sup>, Ֆրանսիա<sup>49</sup>, Մեծ Բրիտանիա<sup>50</sup>, Գերմանիա<sup>51</sup>), Բրազիլիայում, Իրանում, Կուբայում, Նիկարագուայում՝ 16 տարեկանը, Մարոկկոյում՝ 20 տարեկանը, Լատվիայում՝ 21 տարեկանը<sup>52</sup>: **Մշտական բնակության կամ ռեզիդենտության պահանջի** համաձայն՝ ընտրական իրավունքը տրվում է այն քաղաքացիներին, որոնք որոշակի ժամանակահատված անընդմեջ բնակվում են

48 St' u Белоусов М.С. Конституционное право зарубежных стран. Шпаргалка, <https://law.wikireading.ru/37176>

49 St' u Политическая система Франции, <https://studfiles.net/preview/405528/page:3/>

50 St' u Иностранное конституционное право. Под ред. Проф. В.В.Маклакова. <https://jurisprudence.club/konstitutsionnoe-uchebnik/izbiratelnoe-pravo-izbiratelnaya-55882.html>

51 St' u Ю. Лейбо, Избирательная система Германии: особенности подготовки и проведения выборной кампании, Новое в отраслях права, №2 (23)/2012, <http://ehd.mgimo.ru/IORManagerMgimo/file?id=77A6C35D-FD97-BAF4-1F4E-6B5AB7AF9F62>

52 St' u Legal Voting Age By Country, <https://www.worldatlas.com/articles/legal-voting-age-by-country.html>

այս կամ այն բնակավայրում (ԱՄՆ-ում՝ 1 ամիս, Ֆրանսիայում և Բելգիայում՝ 6 ամիս, Կանադայում և Ֆինլանդիայում՝ 1 տարի, Նորվեգիայում՝ 10 տարուց ոչ պակաս): Մարդկության պատմության ընթացքում ընտրական իրավունքի կապակցությամբ գոյություն է ունեցել նաև **սեռային պահանջ**. երկար տարիներ ընտրական իրավունքը գուտ «արական սեռի» իրավունք էր: Երկրների մեծ մասում այդ պահանջը վերացավ միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (ԱՄՆ-ում՝ 1920թ., Անգիայում՝ 1928թ., Ֆրանսիայում՝ 1944թ., Իտալիայում՝ 1945թ., Հունաստանում՝ 1956թ., Շվեյցարիայում՝ 1971թ.)<sup>53</sup>:

Հաջորդ կարևոր քաղաքական իրավունքը **հավաքների ազատությունն** է, որն ամրագրված է միջազգային իրավական ամենակարևոր փաստաթղթերում՝ որպես մարդու հիմնարար իրավունք: Մարդը՝ որպես հասարակության անդամ, ինքնարտահայտման, իրեն գաղափարակից ընկերներ փնտրելու և իր կյանքին առնչվող հարցերի շուրջ հանրային ակտիվություն ցուցաբերելու բնական հակվածություն ունի, որի յուրահատուկ ձև է նաև հավաքների կազմակերպումը կամ մասնակցությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ կամ Դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ հավաքների ազատության իրավունքը սերտորեն փոխկապված է արտահայտվելու ազատության<sup>54</sup>, ինչպես նաև ՄԻԵԿ 13-րդ հոդվածով ամրագրված՝ իրավունքների

պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի հետ<sup>55</sup>: Դատարանը հնարավոր է համարել որոշակի կապ նաև կունվենցիայի 14-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելքի հետ<sup>56</sup>:

**Հավաքների ազատության** շրջանակներում յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: Ինչպես տեսնում ենք, այս իրավունքը պատկանում է ոչ միայն քաղաքացիներին, այլև բոլորին՝ անկախ քաղաքացիությունից (Սահմանադրության 44-րդ հոդված): Համեմատության համար նշենք, որ ՀՀ առաջին՝ 1995թ. Սահմանադրությամբ, այս իրավունքն ամրագրված էր միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար<sup>57</sup>:

Սահմանադրական սույն նորմի հիման վրա օրենսդրությամբ տրվել է «հավաք» հասկացության սահմանումը, որի համաձայն այն երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ («Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 2): Այսպիսով, «հավաք» հավաքական հասկացության ներքո համախմբվել են հավաքների բոլոր ձևերը և տարատեսակները՝ խաղաղ ժողովները, հանրահավաքները, երթերը և ցույցե-

<sup>55</sup> St´u Plattform “Ärzte für das Leben” v. Austria (21 June 1988, § 25, Series A no. 139):

<sup>56</sup> St´u Division De La Recherche Research Division, Article 11 The conduct of public assemblies in the Court’s case-law, 22 May 2013, [https://www.echr.coe.int/Documents/Public\\_assemblies\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Public_assemblies_ENG.pdf):

<sup>57</sup> St´u ՀՀ Սահմանադրություն, 1995թ., հոդված 26-րդ:

<sup>53</sup> St´u A. B. Пашкова , Курс лекций по конституционному праву зарубежных стран , 2008 , стр. 77-78:

<sup>54</sup> St´u Ezelin v. France (26 April 1991, § 37, Series A no. 202):

րը: Հավաքների ազատությունը վերաբերում է խաղաղ, առանց զենքի հավաքներին, որպիսի հատկանիշը սկզբունքային է տվյալ իրավունքի իրացման համար: Նշված պահանջի խախտման դեպքում խոսք չի կարող լինել Սահմանադրությամբ և միջազգային իրավունքով երաշխավորված հավաքների ազատության մասին, քանի որ առկա կլինի համապատասխան իրավական հետևանքներ ենթադրող՝ իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք:

Հասարակական շահի հավասարակշռման նպատակով սահմանված է հավաքների իրավունքն իրացնելու որոշակի կարգ, որը վերաբերում է հավաքների իրականացման վերաբերյալ լիազոր մարմին (տվյալ համայնքի ղեկավարին) իրազեկելուն, հավաքների իրականացման վայրերի ընտրությանը (գոյություն ունեն որոշակի վայրեր, որտեղ արգելված է իրականացնել հավաքներ<sup>58</sup>), հավաքների նպատակներին և այլն:

Ինչպես նշեցինք, հավաքներին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք (Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք): Ինչ վերաբերում է հավաքների ազատության սահմանափակումներին, ապա Սահմանադ-

<sup>58</sup> Հավաքների անցկացումն արգելվում է Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերից, դատարաններից կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը, «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից կամ գազի ստորգետնյա պահեստարաններից կամ դրանց սպասարկման կքառույցներից կամ «Օրբիտա 2» վերգետնյա արբանյակային կայանից այնպիսի հեռավորության վրա, որը սպառնում է դրանց անվտանգությանը:

րությամբ նախանշված թույլատրելիության սահմաններում որոշակի պաշտոն զբաղեցնող անձանց համար օրենքով սահմանվել են հետևյալ սահմանափակումները. «Դատավորները, դատախազները, քննիչները, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողները հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն և զսպվածություն ցուցաբերեն: Դատախազները, քննիչները, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողներն իրավունք չունեն հավաքին մասնակցելու ծառայողական համազգեստով»:

Հաշվի առնելով հավաքների ազատության իրավունքի բնույթը և իրավունքի իրացումն ապահովելու համար կազմակերպական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը՝ տվյալ իրավունքը վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձությունների ֆոնին կարելի է համարել հատկապես երիտասարդների կողմից իրացվող իրավունք: Մասնավորապես, երիտասարդները՝ որպես հասարակության առավել ակտիվ և իրավատեր հատված, ավելի հակված են ակտիվ գործողություններով արտահայտելու իրենց կարծիքը, դիրքորոշումը, պաշտպանելու իրենց իրավունքները:

**Հանրային ծառայության իրավունքը** (Սահմանադրության 49-րդ հոդված) անձի կարևոր քաղաքական իրավունքներից է: Այն ընտրական իրավունքի և այլ իրավունքների հետ միասին հանդիսանում է պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի բաղկացուցիչ: Սահմանադրության համաձայն՝ «Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հի-

մունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»: Նշենք, որ «հանրային ծառայությունը» ընդհանուր հասկացություն է, որն ընդգրկում է ն՝ պետական ծառայությունը, ն՝ համայնքային ծառայությունը (պաշտոնները): Վերջիններս իրենց հերթին ներառում են ծառայության առանձին տեսակներ: Մասնավորապես՝ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները<sup>59</sup>: **Պետական ծառայությունն** իր հերթին ընդգրկում է դատական ծառայությունը, քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության գորակոչի միջոցով իրականացվող շաքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը: Իսկ **համայնքային ծառայությունը** մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին

<sup>59</sup> «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-206-Ն), հոդված 3-րդ:

վերապահված լիազորությունների իրականացմանը:

Հանրային ծառայության պաշտոնները ընտրովի կամ նշանակովի պաշտոններ են, որոնք դասակարգվում են հետևյալ տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: ՀՀ օրենսդրությամբ սահմանված են հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի պաշտոնների ցանկը, համապատասխան պաշտոնում նշանակման կարգը, նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնյաները և վերաբերելի այլ հարցեր:

Հանրային ծառայության իրավունքը միջազգային կարևորագույն փաստաթղթերից՝ Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրով երաշխավորված իրավունք է: Ընդ որում, դաշնագիրն այս իրավունքն ամրագրելիս շեշտադրում է կատարում՝ «առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների» ձևակերպմանը: Դաշնագրի 2-րդ հոդվածում սահմանված է խտրականության արգելք՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի հիմքերով: «Առանց անհիմն սահմանափակումների» արտահայտությունը ենթադրում է, որ հիշյալ հիմքերով չպայմանավորված որոշակի սահմանափակումները «խելամիտ» են, հետևաբար՝ թույլատրելի: Դաշնագրի պատվիրակները ներառել են այս արտահայտությունը անչափահասների, դատապարտյալների, հոգեկան խնդիրներ ունեցող և ռեզիդենտության պահանջներին չհամապատասխանող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումը, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնելու որոշակի սահմանափակումների նախատեսումը, ինչպիսին է մասնագի-

տական վերապատրաստման պահանջը, թույլ տալու նպատակով: Չնայած Դաշնագրի քննարկվող հոդվածով նախատեսված խտրականության արգելքն ուղղակիորեն ուղղված է ֆիզիկական անձանց՝ այն կարող է նաև մեկնաբանվել որպես որոշակի գաղափարախոսություն ունեցող քաղաքական կուսակցությունների նկատմամբ խտրականություն դրսևորելու՝ պետությունների համար սահմանված արգելք<sup>60</sup>:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված հերթական քաղաքական իրավունքը **տեղեկություններ ստանալու իրավունքն է** (Սահմանադրության հոդված 51), որը Սահմանադրությամբ ստացել է հետևյալ ձևակերպումը. «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք: Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Այս իրավունքն ամրագրված և երաշխավորված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածներով:

«Տեղեկություն» հասկացության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ շրջանառվող առավել ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ տեղեկությունը շրջակա միջա-

<sup>60</sup> St' u Gregory H. Fox, The Right to Political Participation In International Law, 1992, page 554, <https://digitalcommons.law.yale.edu/cgi/viewcontent.cgi?article=1600&context=yjil>:

վայրի և դրանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տվյալներն են, որոնք ընկալվում են մարդու կամ հատուկ տեխնոլոգիաների կողմից<sup>61</sup>: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկությունն անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, զծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

Վերոնշյալ հատուկ օրենքով ամրագրված են ինչպես տեղեկություն հայցելու և տրամադրելու կարգն ու ժամկետները, այնպես էլ տեղեկության տրամադրման մերժման հիմքերը: Այսպես՝ տեղեկության տրամադրումը մերժվում է, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանա-

<sup>61</sup> St' u A. Н. Зенкин, Информационное право, Учебное пособие, 2013, стр. 4:

կան գաղտնիք)։

5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները։

Անդրադառնալով տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ արտասահմանյան երկրների փորձին և իրավական ակտերին՝ նշենք, որ Շվեդիայի 1766 թվականի Մամուլի ազատության ակտը ամենահին իրավական ակտն է աշխարհում<sup>62</sup>։ Իսկ 1966թ. ԱՄՆ նախագահ Լինդոն Ջոնսոնը անկախության օրը ստորագրեց «Տեղեկատվության ազատության մասին» ակտը՝ իրավունք վերապահելով հասարակությանը ծանոթանալու Ֆեդերալ կառավարության գրառումներին<sup>63</sup>։

Տեղեկատվության ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմքերից է։ Հանրությունը ժողովրդավարական գործընթացներին մասնակցելու իրական հնավորություն ունի միայն այն դեպքում, երբ տեղեկացված է կառավարության գործողությունների և քաղաքականությունների վերաբերյալ<sup>64</sup>։

Տեղեկատվության ազատության իրավունքի ժամանակակից տարր հանդիսացող համացանցի հասանելիությունը քննարկման առարկա է դարձվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից։ Մասնավորապես, Կալդան

---

<sup>62</sup> Տե՛ս Freedom of information laws by country, [https://en.wikipedia.org/wiki/Freedom\\_of\\_information\\_laws\\_by\\_country](https://en.wikipedia.org/wiki/Freedom_of_information_laws_by_country).

<sup>63</sup> Տե՛ս The National Security Archive, The FOIA and President Lyndon Johnson, <https://nsarchive2.gwu.edu/nsa/foia/lbj.html>.

<sup>64</sup> Տե՛ս David Banisar, Freedom of information around the world 2006, A Global Survey of Access to Government Information Laws, page 6, [http://www.freedominfo.org/documents/global\\_survey2006.pdf](http://www.freedominfo.org/documents/global_survey2006.pdf)։

ընդդեմ Էստոնիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ թույլ է տրվել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանվող տեղեկատվության ազատության իրավունքի խախտում, քանի որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը մերժել է դիմումատուի խնդրանքը՝ իրեն թույլ տալու մուտք գործել Թալինում Եվրոպայի խորհրդի Տեղեկատվական գրասենյակի և երկու այլ՝ պետության կողմից վարվող տեղեկատվական շտեմարաններ, որոնք պարունակում էին իրավական տեղեկատվություն (ՄԻԵԴ վճիռներ, իրավական կարծիքներ և օրենքների նախագծեր, բացատրական հուշագրեր, սղագրություններ և Էստոնիայի պառլամենտի նիստերի արձանագրություններ)։ ՄԻԵԴ-ը գտել է, որ իրավասու մարմինների կողմից դատապարտյալի՝ իր մասնանշած տեղեկատվական աղբյուրներից տեղեկատվություն ստանալու խնդրանքի մերժումը համահունչ չէ տեղեկատվության ազատության իրավունքի հետ<sup>65</sup>։ Այս գործի փաստերին և դատարանի եզրահանգումներին որոշակի նմանություն ունի նաև Յանկովսկիան ընդդեմ Լիտվայի գործը<sup>66</sup>։ Տեղեկատվության ազատության իրավունքի խախտումներ են արձանագրվել նաև ընդդեմ Թուրքիայի ներկայացված մի շարք գործերով<sup>67</sup>։

Տեղեկության ազատության հետ սերտորեն փոխկապված է նաև անձնական տվյալների պաշտպանության խնդիրը, քա-

---

<sup>65</sup> Տե՛ս Judgment Kalda v. Estonia, [https://hudoc.echr.coe.int/eng-press#%22itemid%22:\[%22003-5274809-6556598%22\]](https://hudoc.echr.coe.int/eng-press#%22itemid%22:[%22003-5274809-6556598%22])։

<sup>66</sup> [https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:\[%22002-11349%22\]](https://hudoc.echr.coe.int/eng#%22itemid%22:[%22002-11349%22])։

<sup>67</sup> Տե՛ս Factsheet – Access to Internet and freedom to receive and impart information and ideas [https://www.echr.coe.int/Documents/FS\\_Access\\_Internet\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/FS_Access_Internet_ENG.pdf)։

նի որ տեղեկատվության ազատությունը սահմանափակվում և որոշակիորեն դադարում է այն պահին, երբ սկսվում է մեկ այլ սուբյեկտի անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը: ՀՀ-ում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ (18.05.2015թ, ՀՕ-49-Ն) ավելի հստակեցվեց և առավել մանրամասն կարգավորվեց նաև այս դաշտը, իսկ 2015թ. Հայաստանի Հանրապետությունում հիմնվեց Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը՝ որպես ոլորտի լիազոր մարմին և անձնական տվյալների պաշտպանության երաշխավոր:

Անդրադառնալով տեղեկատվության ազատության իրավունքի կայացման պատմական փուլերին՝ նշենք, որ ավելի քան հարյուր տարի Շվեդիան (որոշ առումով նաև Ֆինլանդիան) և Կոլումբիան միակ երկրներն էին, որ տեղեկատվության ազատության սկզբունքը ամրագրում էին որպես իրավունք: Միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Միավորված ազգերի կազմակերպության և մարդու իրավունքների միջազգային չափանիշների ստեղծմամբ տեղեկատվության ազատության իրավունքը սկսեց տարածվել և պետությունները սկսեցին ընդունել կառավարական փաստաթղթերի և տեղեկատվության մատչելիության վերաբերյալ համապարփակ օրենքներ: Այնուհետև ընդունվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը հռչակեց յուրաքանչյուրի իրավունքը՝ փնտրելու և ստանալու տեղեկություն<sup>68</sup>:

Ինչ վերաբերում է տեղեկության տրամադրման հարցմանը պատասխանելու կամ տեղեկություն տրամադրելու ժամ-

<sup>68</sup> St' u David Banisar, Freedom of information around the world 2006, A Global Survey of Access to Government Information Laws, page 18:

կետին՝ նշենք, որ մի շարք օրենսդրություններում առկա է խնդիր սահմանված ժամկետում հարցմանը պատասխանելու կապակցությամբ: Մասնավորապես, ԱՄՆ-ն ամենավաղ օրինախախտն է. որոշ դեպքերում հարցումները կարող են սպասել իրենց պատասխանին տարիներ շարունակ, նույնիսկ՝ տասնամյակներ: Ազգային անվտանգության արխիվը հայտնաբերել է, որ պատասխանի սպասող ամենահին հարցումը ԱՄՆ-ում 17 տարվա է: Մեծ Բրիտանիայում սահմանված չէ հստակ ժամանակահատված, որի ընթացքում հանրային ծառայողները պետք է քննարկեն հարցումները<sup>69</sup>:

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ հարցումներին պատասխան տրամադրելու ժամկետները սահմանված են օրենքով, ընդ որում՝ տարբերակված կարգավորում է նախատեսված բանավոր և գրավոր հարցումներին պատասխանելու ժամկետների և կարգի միջև: Այսպես՝ բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը և ազգանունը, և (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում օրենքով հստակ սահմանված որոշակի պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը: Իսկ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

<sup>69</sup> St' u վերը նշված հետազոտությունը, էջ 28:



2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 9):

**Հանրագիր ներկայացնելու իրավունքի** սահմանադրական ձևակերպման համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով» (Սահմանադրության հոդված 53):

Ըստ այդմ, «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի (ընդունված 21.12.2017թ, ՀՕ-15-Ն) համաձայն՝ **հանրագիրը** Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությ-

յան բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն է:

Այս բնորոշումից պարզ է դառնում, որ հանրային իշխանություններին դիմելու իրավունքը մի կողմից ծառայում է որպես խախտված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության միջոց, մյուս կողմից՝ հանդիսանում այլ իրավունքների իրացման միջոց (օրինակ՝ սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք, տեղեկություն ստանալու ազատություն կամ պետության կառավարմանը մասնակցելու իրավունք)<sup>70</sup>:

Վերոհիշյալ օրենքն անգամ նախատեսում է անհատական և կոլեկտիվ հանրագրերի տարանջատում, ինչպես նաև գրավոր, էլեկտրոնային կամ հրապարակային ձևով<sup>71</sup> հանրագիր ներկայացնելու հնարավորություն: Որպես հանրագիր ներկայացնելու իրավունքի սահմանափակում նախատեսված է, որ հանրագրով անձը չի կարող պահանջել այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության դեմ կամ սահմանադ-

<sup>70</sup> St' u M. B. Скрыбина, Международные стандарты реализации права граждан на обращение в органы публичной власти, стр. 106, <https://cyberleninka.ru/article/v/mezhdunarodnye-standarty-realizatsii-prava-grazhdan-na-obraschenie-v-organy-publichnoy-vlasti>:

<sup>71</sup> Հրապարակային հանրագիրը ներկայացվում է էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձևաթուղթը լրացնելու միջոցով: Հրապարակային հանրագրերը ներկայացնելու ձևաթուղթը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

րական կարգի բռնի տապալմանը կամ տարածքային ամբողջականության բռնի փոփոխությանը կամ ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն կամ այլ խտրական վերաբերմունք հարուցելուն, բռնություն կամ պատերազմ քարոզելուն, այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը կամ մարդու արժանապատվության նսեմացմանը:

Ինչպես նշել ենք, հանրագիր ներկայացնելու իրավունքը վերապահված է յուրաքանչյուր անձի՝ անկախ քաղաքացիությունից: Հանրագիրը ներկայացվում է այն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, որոնց իրավասություններին վերաբերում են հանրագրով առաջադրված հարցերը: Հանրագրին պատասխան է ներկայացվում այն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետն իրավասու պաշտոնատար անձը կարող է երկարաձգել մինչև մեկ ամսով՝ պատասխան ներկայացնելու մեկամսյա ժամկետի ավարտից առնվազն երեք աշխատանքային օր առաջ այդ մասին ծանուցելով հանրագիրը ներկայացրած անձին:

Հանրագիր (petition) ներկայացնելու իրավունքի ձևավորման պատմական արմատներին անդրադառնալով՝ նշենք, որ հանրային իշխանության մարմիններին դիմելու սահմանադրական իրավունքի հայրենիքը Մեծ Բրիտանիան է: Իրավունքների մասին Բիլում 1689 թվականին նախատեսվել է թագավորին միջնորդություններով դիմելու՝ ենթակաների անսահմանափակ իրավունքը, ընդ որում, նշված միջնորդությանն արձագանքելու ցանկացած ուշացում կամ դրա կա-

պակցությամբ հետապնդում համարվում էր անօրինական: 17-րդ դարում անգլիական հեղափոխության արդյունքում հռչակված պետիցիաների իրավունքը չէր կարող չճանաչվել և չընդունվել նաև 18-րդ դարի ֆրանսիական հեղափոխության ժամանակ: ԱՄՆ սահմանադրության տասը լրացումներից առաջինը սահմանում է պահանջների բավարարման պետիցիաներով կառավարությանը դիմելու իրավունքը<sup>72</sup>:

Ամփոփելով քաղաքական իրավունքների քննարկումը՝ արձանագրենք, որ երիտասարդները էական ազդեցություն ունեն ժամանակակից ցանկացած երկրի քաղաքական կյանքի որակի և զարգացման մակարդակի վրա: Այս հանգամանքը պայմանավորված է ոչ միայն մի շարք քաղաքական իրավունքների իրացման համար երիտասարդական ակտիվության և ավյունի անհրաժեշտությամբ, այլև տեխնոլոգիաների զարգացման և քաղաքական կյանքում դրա ազդեցության ներկայիս մակարդակով:

Երիտասարդների շնորհիվ քաղաքական գործընթացները ոչ միայն դառնում են ավելի արագ, հասանելի և մատչելի, այլև առավել իրազեկ և կրթված երիտասարդները, դառնալով առաջնորդներ, ներմուծում են ավանդական մոտեցումների համեմատությամբ գործընթացների արագությունն ապահովող, ավելորդ բյուրոկրատական քաշքշուկները վերացնող (նվազեցնող) մեխանիզմներ, ակտիվորեն համագործակցում

<sup>72</sup> St' u M. B. Скрыбина, Международные стандарты реализации права граждан на обращение в органы публичной власти, стр. 106-107, <https://cyberleninka.ru/article/v/mezhdunarodnye-standarty-realizatsii-prava-grazhdan-na-obraschenie-v-organy-publichnoy-vlasti>;

արտասահմանյան գործընկերների և միջազգային կառույցների, դրանց ներկայացուցիչների հետ:

Երիտասարդները հասարակության զարգացման կարևոր դերակատարն են և շարժիչ ուժը, որպիսի փաստն ընդգծում է նրանց կողմից քաղաքական իրավունքների իրացման կարևորությունը:

### **1.3. Երիտասարդների քաղաքական ակտիվությանը նպաստող իրավական կարգավորումները**

Հասարակության առջև ծառայած խնդիրները լուծելու առնչությամբ երիտասարդները պետք է հանդիսանան քաղաքական գործընթացների շահագրգիռ և ակտիվ մասնակիցներ: Մինչդեռ ծագող խնդիրների լուծման ճանապարհին երիտասարդությունը հաճախ բխվում է բազմապիսի դժվարությունների և խոչընդոտների: Հիշյալից ելնելով՝ հանրությունը պետք է ստեղծի անհրաժեշտ պայմաններ և իրավական հնարավորություններ երիտասարդների ինքնահաստատման և հասարակական ու քաղաքական գործընթացներում նրանց ակտիվ ներգրավման համար, ինչն էլ, իր հերթին, կնպաստի սոցիալական, քաղաքական, մշակութային և տնտեսական վերարտադրությանը և հասարակական զարգացմանը:

Այսպես, Դ.Վ. Օլշանսկին հասարակական-քաղաքական ակտիվությունն անվանում է սոցիալական խմբերի և անհատների այնպիսի գործունեություն, որը միտված է սեփական կարիքների և շահերի ձևավորմանը և արտահայտմանը, գոյություն ունեցող քաղաքական կամ սոցիալ-տնտեսական կարգը և համապատասխան քաղաքական ինստիտուտները

փոխելուն<sup>73</sup>:

Իսկ հետազոտողներ Օ.Մ. Կարպենկոն և Ի.Ա. Լամանովը «քաղաքական ակտիվություն» եզրույթը դիտարկում են որպես մտավոր, էլեկտորալ, ինքնաբուխ-զանգվածային, կառուցվածքային և մասնագիտական տարրերի սիմբիոզ<sup>74</sup>: Մտավոր ակտիվությունը տարբեր քաղաքական սուբյեկտների՝ սեփական կարիքները և շահերը ձևակերպելու գործունեությունն է, ընդ որում՝ առկա է մոտեցում, որ քաղաքականության ոչ բոլոր սուբյեկտներն են ունակ զբաղվելու նման գործունեությամբ: Էլեկտորալ ակտիվությունը տարբեր քաղաքական սուբյեկտների՝ ընտրական գործընթացին մասնակցելու գործունեությունն է. գաղտնիք չէ, որ ներկայումս ընտրությունները քաղաքացիների քաղաքական մասնակցության հիմնական կառուցակարգն են: Ինքնաբուխ-զանգվածային ակտիվությունը տարբեր քաղաքական սուբյեկտների՝ զանգվածային քաղաքական միջոցառումներ կազմակերպելու և դրանց մասնակցելու գործունեությունն է: Կառուցվածքային ակտիվությունը տարբեր քաղաքական սուբյեկտների՝ քաղաքական կազմակերպություններին անդամակցելու գործունեությունն է, իսկ մասնագիտական ակտիվություն՝ քաղաքական կյանքում տարբեր քաղաքական սուբյեկտների մասնագիտական գործունեությունը (օրինակ՝ ընտրություններում որպես թեկնածու մասնակցելը, քաղաքական պաշտոն զբաղեցնելը և այլն):

<sup>73</sup>Տե՛ս, Ольшанский Д.В. Политико-психологический словарь. М., 2002:

<sup>74</sup>Տե՛ս, Карпенко О.М., Ламанов И.А. Молодёжь в современном политическом процессе в России. М., 2006:

Քաղաքական գործընթացներում դրսևորված ակտիվությունը կարող է լինել թե՛ անհատական, թե՛ խմբային: Այսպես, միջազգային հարթակում ընդունվել է Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիան (ընդունվել է Եվրոպայի տեղական և մարզային իշխանությունների կոնգրեսի կողմից (2003թ., մայիսի 21, 10-րդ նիստ, Հանձնարարական 128-ի հավելված), որի նախաբանի համաձայն՝ «Եթե ուզում ենք կառուցել ավելի ժողովրդավարական, ներառական և բարգավաճ հասարակություն, պետք է հաշվի առնել, որ տեղական և մարզային մակարդակով որոշումների կայացմանը և իրականացմանը երիտասարդների ակտիվ մասնակցությունը շատ կարևոր է: Երիտասարդների մասնակցությունը ցանկացած համայնքի ժողովրդավարական կյանքին ավելին է, քան պարզապես ընտրություններում քվեարկելը կամ առաջադրվելը, թեև դրանք նույնպես կարևոր հանգամանքներ են: Մասնակցությունը և ակտիվ քաղաքացիություն վարելը նշանակում է ունենալ իրավունք, միջոցներ, և անհրաժեշտության դեպքում, աջակցություն՝ մասնակցելու, ազդելու որոշումների ընդունման վրա և ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ, որոնք նպաստում են ավելի լավ հասարակության կառուցմանը:

Տեղական և մարզային իշխանությունները՝ որպես երիտասարդներին ամենամոտ կանգնած իշխանության ձև, շատ կարևոր դերակատարություն ունեն երիտասարդների մասնակցությունը խրախուսելու հարցում:

Ներգրավելով երիտասարդներին՝ տեղական և մարզային իշխանությունները կարող են համոզված լինել, որ երիտասարդները ոչ միայն կլսեն և կիմանան ժողովրդավարությ-

յան և քաղաքացիության մասին, այլ հնարավորություն կունենան նաև այդ գիտելիքները գործնականում կիրառել: Մակայն երիտասարդների մասնակցությունը չի նշանակում բացառապես ակտիվ քաղաքացիության կամ ապագայի համար ժողովրդավարության կառուցման գաղափարի խրախուսում: Եթե ցանկանում ենք, որ մասնակցությունը երիտասարդների կյանքում իմաստ ունենա, ապա չափազանց կարևոր է, որ նրանք կարողանան ազդեցություն ունենալ որոշումների և գործողությունների ձևավորման վրա երիտասարդ, այլ ոչ թե մեծ տարիքում:

Երբ տեղական և մարզային իշխանությունները աջակցում և խթանում են երիտասարդների մասնակցությունը, նրանք նպաստում են նաև երիտասարդների սոցիալական ինտեգրման գործընթացին՝ օգնելով նրանց առնչվել ոչ միայն երիտասարդների առջև ծառայած խնդիրների և հիմնախնդիրների, այլ նաև ներկայիս հասարակության մարտահրավերների հետ, որտեղ հաճախ գերակշռում են անանունությունը և անհատապաշտությունը: Այնուամենայնիվ, երիտասարդների մասնակցությունը տեղական և մարզային կյանքում ավելի հաջողակ, երկարատև և իմաստալից դարձնելը պահանջում է ավելին, քան քաղաքական կամ վարչական համակարգերի զարգացումը կամ վերակառուցումը: Երիտասարդների մասնակցությունը խրախուսող ցանկացած քաղաքականություն կամ ծրագիր պետք է մշակված լինի այնպես, որ մշակութային միջավայրը լինի երիտասարդակենտրոն, ինչպես նաև հաշվի առնի երիտասարդների բազմազան կարիքները և ձգտումները, ներառի զվարճանքի որոշակի տար-

րեր»<sup>75</sup>:

Հարկ է նշել, որ երիտասարդների քաղաքական ակտիվությանը վերաբերող հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում գտնվում են ուշադրության կենտրոնում:

Այսպես, «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N 1693-Ն որոշման (ուժի մեջ է մտել 14.02.2013 թվականին) «Երիտասարդության վիճակի նկարագրությունը» վերտառությամբ գլխի 23-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի երիտասարդության հիմնախնդիրների լուծումները պետք է դիտարկել հետևյալ ռազմավարական ուղղություններով՝ (...) 5) երիտասարդության ակտիվ մասնակցություն երիտասարդական ոլորտի քաղաքականության մշակմանն ու իրականացմանը»:

Նույն որոշման «Հիմնական գերակայությունները» վերտառությամբ գլխի 26-րդ կետում թվարկված են ընտրված հիմնական գերակայությունները, որոնց թվում է՝ քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանումը:

Իր հերթին, նույն որոշման 5-րդ գլուխը նվիրված է քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանման հիմնահարցերին: Մասնավորապես, նշվում է, որ. «(...) Երիտասարդ

<sup>75</sup> Տե՛ս Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիա, «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան, 2017թ, // [www.kasa.am/wp-content/uploads/2015/12/brochure.pdf](http://www.kasa.am/wp-content/uploads/2015/12/brochure.pdf)

քաղաքացիների մասնակցության մակարդակը չափվում է տարբեր կառույցներում նրանց ներգրավվածությամբ և մասնակցությամբ: «Ներգրավվածություն» հասկացությունը ներառում է տարբեր մակարդակներ, որոնք բնորոշում են ներգրավվածության տարբեր աստիճաններ: Համաշխարհային բանկի մեթոդաբանության շրջանակներում քաղաքացիական ներգրավվածությունը դիտարկվում է որպես «սանդուղք», որի մակարդակներն են տեղեկացվածությունը, մասնակցությունը «հանրային խորհրդատվությանը», մասնակցությունը որոշումների համատեղ կայացմանը և շահառուների կողմից ծրագրերի նախաձեռնումն ու վերահսկողությունը: Մասնակցության չափանիշներից է համարվում քաղաքացիների անդամությունը հասարակական կյանքի նշանակալի կառույցներում:

(...) Քաղաքական մշակույթը հասարակության անդամների գիտակցության մեջ քաղաքականության ոլորտի, քաղաքական գործընթացների ու սուբյեկտների (այդ թվում՝ նաև իր և հասարակության տարբեր շերտերի դերի ու նշանակության) մասին պատկերացումների և դիրքորոշումների, ինչպես նաև տարբեր անձանց ու հասարակության շերտերի և քաղաքականության սուբյեկտների քաղաքական մասնակցության աստիճանի, ձևերի և մեխանիզմների համակարգն է՝

ա. Հայաստանի երիտասարդների 53.1 %-ը հետաքրքրված է Հայաստանի ներքաղաքական կյանքով: Նրանց 60.1 %-ը համարում է, որ բավարար չափով լավ է կողմնորոշվում Հայաստանի ներքին քաղաքական հարցերում, 57.9 % երիտասարդները համարում են, որ իրենց ձայնը կարևոր է ընտրությունների ժամանակ: Ազգային ժողովի ընտրությունների

մասնակցության դիրքորոշումը բավականին բարձր է՝ 78.8 %: Այնուամենայնիվ, երիտասարդների՝ Ազգային ժողովի ընտրություններին իրական մասնակցությունը մեծ հավանականությամբ կլինի նշանակալի չափով ավելի ցածր: Որպես կողմնորոշիչ կարելի է ընդունել 2007 թվականի Ազգային ժողովի ընտրությունները, որոնց մասնակցել է այդ ժամանակ ընտրելու իրավունք ունեցող երիտասարդների 60.6 %-ը,

բ. հարցմանը մասնակցած երիտասարդների 11.6 %-ը եղել է որևէ կուսակցության կամ դրա երիտասարդական թևի անդամ,

գ. չնայած Հայաստանի երիտասարդությունն ինտենսիվ կերպով ընդգրկված է քաղաքական գործընթացում, սակայն նրա գերիշխող մասը ներքուստ օտարված է քաղաքական համակարգից: Երիտասարդների 76.2 %-ը համարում է, որ Հայաստանում չկա այնպիսի կուսակցություն, որն արտահայտում է իր շահերը: Ընդ որում, այդպիսի դիրքորոշումներն ամենից շատ տարածված են Երևանում: Գյուղերում այդպիսի դիրքորոշումներ ունի երիտասարդների 70.6%-ը,

դ. հատկանշական է, որ իրենց շահերը պաշտպանող կուսակցության գոյության մասին համեմատաբար ավելի հաճախ են հաղորդել այն ուսանողները, որոնք գտնվում են կուսակցությունների ուշադրության կենտրոնում: Ուսանողների 30 %-ը պատասխանել է, որ Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է իր շահերը,

ե. այնուամենայնիվ, իրենց շահերն արտահայտող կուսակցություն ունեցող ուսանողների քաղաքական գիտակցությունը թերզարգացած է: Բանն այն է, որ այն հարցին, թե որն է իրենց շահերը պաշտպանող կուսակցության գաղափար

բախտությունը, կարողացել է պատասխանել այդ ուսանողների ընդամենը 3 %-ը,

զ. երիտասարդության քաղաքական մասնակցության տիպերը դասակարգելու համար 2012 թվականի Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու դիրքորոշում ունեցողներին հարց է տրվել, թե ինչու են նրանք պատրաստվում մասնակցել այդ ընտրություններին (...): Ընտրություններին մասնակցելու դիրքորոշում ունեցողների 60 %-ը տվել է այնպիսի պատասխաններ, որոնք համապատասխանում են հպատակային քաղաքական մշակույթ կրող անձանց, իսկ 40%-ը՝ մասնակցային քաղաքական մշակույթ կրողներին,

է. այն հարցի մասին, թե որոնք են ՀՀ պետականության պահպանման առաջնային գրավականները, երիտասարդների գերակշիռ մասը ՀՀ պետականության պահպանման ամենաառաջնային գրավական է համարում համախմբվածությունը: Ընդ որում, այս հասկացությունը մեկնաբանվում է բազմազան կերպով. մի դեպքում այն ընկալվում է որպես որոշակի գաղափարների շուրջ համախմբում (նման գաղափարների դերում կարող են հանդես գալ ազատությունը, անկախությունը), մյուս դեպքում՝ որպես հասարակության արդիական խնդիրների լուծման վերաբերյալ համատեղ, մասնակցային որոշումների կայացում,

ը. հարցված երիտասարդները ներկայումս դիտարկում են համախմբվածության ցածր մակարդակ, որը հակված են բացատրել սեփական շահերի վրա կենտրոնացվածությամբ, երբեմն նաև սոցիալական անհավասարությամբ, համապատասխան գիտակցության և կրթական մակարդակի բացակայությամբ,

թ. ըստ նշվելու հաճախականության՝ հաջորդ տեղում երիտասարդների կողմից նշվել է սեփական շահերից վերկանգնող և կրթված կառավարությունը: Երիտասարդների կողմից հավասարապես շեշտադրվում է թե առաջին, թե երկրորդ հատկանիշը,

ժ. նշված գործոններից առավել քիչ որպես պետականության պահպանման գրավական նշվել են կրոնը, լեզուն, ավանդույթների և ազգային մշակույթի պահպանումը, ինչպես նաև հասարակության անդամների կրթվածության բարձր մակարդակը,

Ժա. Ընտրություններին մասնակցել չցանկացողների ամենամեծ հատվածը (33.2 %) որպես չմասնակցելու պատճառ տվել է խուսափողական պատասխան («Չեմ ցանկանում մասնակցել»): Երկրորդ խոշոր հատվածը պատասխանել է, որ իր ձայնը ոչինչ չի որոշում (25.6 %): Երրորդ խոշոր հատվածը, որպես չմասնակցելու պատճառ նշել է, որ «Ընտրություններն արդար չեն» (9.6 %): (...)

(...) Պետության մեջ ժողովրդավարական գործընթացների առանցքային չափորոշիչներից է հասարակության անդամների քաղաքացիական ներգրավվածությունը: Երիտասարդները, իրենց տարիքային առանձնահատկություններից ելնելով, քաղաքացիական ակտիվության դրսևորման գլխավոր սուբյեկտներից մեկն են:

(...) Ուսումնասիրվել է երիտասարդների քաղաքացիական մասնակցության մակարդակը, տարբեր հասարակական ինստիտուտներում ներգրավվելու պատրաստակամությունը, այդ պատրաստակամության բացակայության պատճառները և խոչընդոտները:

(...) Հայաստանյան երիտասարդների ընկալումները «քաղաքացի» հասկացության վերաբերյալ բացահայտվել են ֆոկուսխմբային քննարկումների շրջանակներում: Մասնավորապես, քաղաքացու սահմանման լայնորեն տարածված չափանիշներից առանձնացվել է օրենքի գերակայությունը՝ օրենքների իմացությունը, օրենքով գործելը, կարգապահությունը:

(...) Նկատելի է դառնում այն, որ օրենքի գերակայությունը մեծամասամբ ընկալվում է որպես հայրենի պետության մեջ պաշտպանված զգալու էական գործոն, որը նաև տվյալ պետության նկատմամբ սեփականատիրական զգացում է առաջացնում:

(...) Հասարակության մեջ օրենքի գերակայության բացակայության ընկալումը հաստատվել է նաև քանակական հարցման տվյալներով: Երիտասարդների գերակշիռ մասը համաձայն չէ այն մտքի հետ, որ օրենքները գործում են Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասար կերպով:

(...) Հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանում հասարակական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկացվածությունը բավականին բարձր է: Երիտասարդների 54 %-ը գիտի, թե ինչ է հասարակական կազմակերպությունը: Չնայած հասարակական կազմակերպությունների անդամների քանակը չի աճել (իրեն որևէ հասարակական կազմակերպության անդամ է համարել երիտասարդների 3.8 %-ը), սակայն էականորեն աճել է որևէ հասարակական կազմակերպության գործունեության շրջանակում կամավորական աշխատանքներ իրականացրած երիտասարդների քանակը (11 %):

(...) Հասարակական կազմակերպությունների անդամների վերաբերյալ երիտասարդների դիրքորոշումներն ավելի դրական են, քան կուսակցությունների առումով: Եթե երիտասարդների 60 %-ն է համարում, որ կուսակցականների 60 %-ը հետապնդում է զուտ անձնական շահեր, ապա հասարակական կազմակերպությունների անդամների մասին այդպիսի դիրքորոշումներ ունի երիտասարդների 22.8 %-ը: Հատկանշական է, որ հասարակական կազմակերպությունների վերաբերյալ դրական դիրքորոշումը նշանակալիորեն աճում է նրանց մասին տեղյակ անձանց շրջանում: Նրանց 53.4 %-ը համարում է, որ հասարակական կազմակերպությունների անդամները հետապնդում են զուտ հասարակական նպատակներ:

(...) Երիտասարդների՝ հասարակական կազմակերպությունների հասարակական սուբյեկտության վերաբերյալ դիրքորոշումը բավականին բարձր է: Երիտասարդների 37.2 %-ը համարում է, որ հասարակական կազմակերպություններն ունակ են լուծելու հասարակական որևէ իրական խնդիր: Ընդ որում, երիտասարդների 18.6 %-ը տեղյակ է որևէ կոնկրետ հասարակական նշանակության խնդրի մասին, որը լուծվել է հասարակական կազմակերպության միջոցով: (...)» (27-36-րդ կետեր):

Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ դեռևս 2017 թվականին մշակվել է «Երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ: Մասնավորապես, նշյալ նախագծի «Ռազմավարության նպատակը»

2-րդ գլխի 12-րդ կետում, որպես ռազմավարության նպատակ, ընդգծվել է նաև երիտասարդների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցության խթանումը: Ընդ որում՝ նույն նախագծի 27-29-րդ կետերում նշվել է հետևյալը. «(...) «Անկախության սերունդ» հետազոտության տվյալները փաստում են, որ հայաստանյան երիտասարդները առավել հետաքրքրված են Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով՝ 77,1 %-ը (շատ է հետաքրքրված՝ 22.3%-ը, հետաքրքրված՝ 54,8%-ը): Ընտրելու իրավունք ունեցող հարցված երիտասարդների 70,9 %-ը, ընդ որում՝ նրանց կեսից ավելին՝ 51,4 %-ը, միշտ մասնակցել է ընտրություններին, երբեք չի մասնակցել 14,4 %-ը: Չնայած այն հանգամանքին, որ հարցվածների մեծամասնությունը միշտ կամ մեծամասամբ մասնակցում է քաղաքական ընտրություններին, այդուհանդերձ բավականին ցածր է երիտասարդների վստահությունը ընտրովի քաղաքական մարմինների նկատմամբ (...):

(...) «Գյուղական համայնքների երիտասարդության իրավիճակի հետազոտությունում» շեշտվում է համայնքներում որոշումների ընդունման մակարդակում երիտասարդների մասնակցության ընդլայնման անհրաժեշտությունը, որի համար, բացի գիտելիքներից ու կարողություններից, անհրաժեշտ է նաև զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների՝ որոշումների մասնակցային ընդունման մշակույթը և աշխատանքի թափանցիկությունը: Հետազոտության մեջ շեշտվում է գյուղական համայնքներում հասարակական կազմակերպությունների պակասի մասին: Իսկ ՔՀԿ-ների զարգացումը կարևոր նախապայման է հատկապես մարզերում:



(...) Մասնակցության համար որպես միջոց կարևորվում է կամավորական աշխատանքը: «Անկախության սերունդ» հետազոտության արդյունքները<sup>76</sup> ցույց են տալիս, որ երիտասարդության փոքր հատվածն է ընդգրկված հասարակական/կամավորական գործունեության մեջ՝ 16,9 %, իսկ ընդգրկվածների մի ստվար զանգվածի համար կամավորական աշխատանք իրականացնելու պատճառներն առավել ռացիոնալ բնույթ ունեն (ընդգծելով զբաղված լինելու, մասնագիտական գիտելիքներ կիրառելու, նոր ընկերներ ձեռք բերելու և հնարավոր գործատուների հետ հանդիպելու ցանկությունը) և հազվադեպ են պայմանավորված այլոց օգնելու մտադրությամբ: (...)»:

Հարկ է նշել, որ քաղաքական կյանքում երիտասարդների մասնակցության ապահովման տեսանկյունից կենսական նշանակություն ունի երիտասարդների համար բարենպաստ իրավական հիմքերի ձևավորումը:

Կարելի է արձանագրել, որ երիտասարդության հասարակական և քաղաքական մասնակցության վերաբերյալ միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է որոշակի խնդիրների առկայության մասին:

Առաջին հերթին, ուշագրավ է, որ ներկայումս գոյություն ունեն ոլորտը կարգավորող բազմաթիվ փաստաթղթեր՝ տարբեր մակարդակների և իրավաբանական ուժի: Նման պայմաններում կոնցեպտուալ հիմքերի միասնականության ա-

---

<sup>76</sup> Տե՛ս «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ», Հետազոտություն երիտասարդների շրջանում, Հայաստան, 2016, [www.library.fes.de/pdf-files/bueros/georgien/13148.pdf](http://www.library.fes.de/pdf-files/bueros/georgien/13148.pdf):

պահովումը դառնում է առավել խնդրահարույց: Ըստ այդմ, ի հայտ են գալիս նաև տերմինաբանական բնույթի հարցեր: Որպես նշանավոր օրինակ կարող են ծառայել «երիտասարդ» և «երիտասարդություն» իրավական եզրույթները, որոնց շուրջ մինչ օրս առկա է անհամաձայնություն<sup>77</sup>:

Բացի այդ, քիչ չեն դեպքերը, երբ ոլորտը կարգավորող իրավական ակտերը ընդունվել են տարիներ առաջ, ինչը վկայում է այն մասին, որ նշյալ իրավական ակտերում զետեղված իրավակարգավորումներն այլևս օբյեկտիվորեն չեն համապատասխանում ժամանակակից կյանքի պահանջներին: Նման իրողության պայմաններում ձևավորվում է օրենսդրական դաշտի բարեփոխման և իրավական բազայի նորացման կամ վերակենդանացման խիստ անհրաժեշտություն:

Ավելորդ չէ նշել, որ գործող կարգավորումները հիմնականում կրում են հատվածային բնույթ՝ նպատակ ունենալով կարգավորելու կոնկրետ հարց, ընդ որում՝ քննարկվող խնդրի լուծման բովանդակությունը չի համադրվում նույն ոլորտում գործող այլ իրավակարգավորումների հետ: Նման պարագայում տեսանելի է իրավական կարգավորման առավել արդյունավետ կոնսուլիդացման կարևորությունը:

Քննարկվող առարկայի առնչությամբ ուշադրությանն են արժանի նաև երիտասարդների հասարակական և քաղաքական ակտիվության մակարդակի վրա ազդեցություն ունեցող հնարավոր իրավական կառուցակարգերը, որոնք տարածում են գտել միջազգային հարթակում:

Երիտասարդության քաղաքական գործունեության դրսևորման առավել մատչելի ձևը ընտրություններին մաս-

---

<sup>77</sup> Մանրամասն տե՛ս սույն աշխատության 1.1-րդ պարագրաֆը:

նակցելն է: Ինչպես նշվել է սույն աշխատության նախորդ պարագրաֆում, ժամանակակից աշխարհում քաղաքական իրավունքները կազմում են անձի իրավական կարգավիճակի առանցքային տարր: Ընդ որում՝ պասիվ և ակտիվ ընտրական իրավունքը (քաղաքացիների ընտրվելու և ընտրելու իրավունքը) կարևոր տեղ է զբաղեցնում նշյալ իրավունքների համակարգում՝ քաղաքական գործընթացներում և հանրային կառավարման ոլորտում անձի ակտիվ մասնակցության ապահովման առումով: Իր հերթին, միջազգային ընտրական չափանիշների համակարգում ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը զբաղեցնում է հիմնարար տեղ: Այն ամրագրված է ընտրական իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերում և համարվում է ընտրական իրավունքի չորս հիմնական սկզբունքներից մեկը<sup>78</sup>:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն՝ բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է դիրքորոշում առ այն, որ թիվ մեկ արձանագրության 3-րդ հոդվածն ամրապնդում է արդյունավետ քաղաքական ժողովրդավարությանը բնորոշ սկզբունք և համապատասխանաբար Կոնվենցիայի համակարգում առաջնահերթ

<sup>78</sup> Տե՛ս նաև սույն աշխատության 1.2.-րդ պարագրաֆը:

կարևորություն ունի (տե՛ս Մեթյու-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի, (Mathieu Mohin and Clerfayt v. Belgium) 2 մարտի 1987թ, կետ 47, Սերիա A թիվ 113): Պետության՝ որպես բազմակարծության հիմնական երաշխավորի դերը, ներառում է ժողովրդավարական ընտրություններ կազմակերպելուն ուղղված դրական միջոցների ձեռնարկումը, այն պայմաններով, որոնք կապահովեն օրենսդիր մարմին ընտրելիս ժողովրդի կարծիքի ազատ արտահայտում (տե՛ս վերը՝ Մեթյու-Մոհին և Քլերֆայթ, կետ 54)<sup>79</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեկ այլ վճռում նշել է, որ 1-ին արձանագրության 3-րդ հոդվածում ամրագրված իրավունքները բացարձակ չեն. «ենթադրյալ սահմանափակումներ» նախատեսելու հնարավորություն է տրված, և պայմանավորվող պետություններին պետք է այս բնագավառում տրվի հայեցողության լայն շրջանակ (տե՛ս ի թիվս այլ աղբյուրների՝ Մեթյուն ընդդեմ Միացյալ Թագավորության (Matthews v. the United Kingdom) [GC], թիվ 24833/94, կետ 63<sup>80</sup>, ՄԻԵԴ 1999-I, և Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy) [GC], թիվ 26772/95, կետ 201, ՄԻԵԴ 2000-IV<sup>81</sup>):

<sup>79</sup> Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ առ 02.03.1987թ. Մեթյու-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի, (Mathieu Mohin and Clerfayt v. Belgium) գործով// [www.hudoc.echr.coe](http://www.hudoc.echr.coe).

<sup>80</sup> Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ առ 18.02.1999թ. Մեթյուն ընդդեմ Միացյալ Թագավորության (Matthews v. the United Kingdom) [GC], թիվ 24833/94 գործով// [www.hudoc.echr.coe](http://www.hudoc.echr.coe).

<sup>81</sup> Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ առ 06.04.2000թ. Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy) [GC], թիվ 26772/95 գործով// [www.hudoc.echr.coe](http://www.hudoc.echr.coe).

Իր հերթին, ԵԱՀԿ-ի Մարդկային չափանիշի խորհրդա-  
ժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթի (Կո-  
պենհագեն, 1990թ.) 7-րդ կետի համաձայն՝ որպեսզի ժողովր-  
դի կամքը կառավարության իշխանության հիմք հանդիսանա,  
մասնակից պետությունները, ի թիվս այլնի, չափահաս քաղա-  
քացիներին երաշխավորում են ընդհանուր և հավասար ընտ-  
րական իրավունք (7.3 ենթակետ):

Վերլուծության առարկա դարձնելով վերոնշյալ միջազ-  
գային փաստաթղթերը՝ կարելի է գալ այն հետևությանը, որ  
թեև դրանք հռչակում են ընդհանուր ընտրական իրավունքի  
սկզբունքը, սակայն միևնույն ժամանակ, չեն ներկայացնում  
դրա էությունը և բովանդակությունը: Այսպիսով՝ կարելի է  
փաստել, որ նշյալ սկզբունքի իրագործման կարգավորումնե-  
րը թողնվել են պետությունների հայեցողությանը: Փաստո-  
րեն, ժողովրդավարական ընտրությունների, ընտրական ի-  
րավունքների և ազատությունների միջազգային չափանիշ-  
ներն ենթադրում են մարդկանց համապատասխան կատեգո-  
րիաների առումով որոշակի իրավական սահմանափակում-  
ների առկայության հնարավորություն, ուստի («eo ipso») կա-  
րելի է փաստել, որ ընդհանուր ընտրական իրավունքը բա-  
ցարձակ բնույթ չի կրում:

Հատկանշական է, որ «Անկախ պետությունների համա-  
գործակցության մասնակից պետություններում ժողովրդա-  
վարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ա-  
զատությունների չափանիշների մասին» կոնվենցիան (ՀՀ-ում  
ուժի մեջ է մտել 17.03.2005 թվականին)՝ ի տարբերություն  
վկայակոչած միջազգային փաստաթղթերի, ոչ միայն ամրագ-  
րում է ժողովրդավարական ընտրությունների, ընտրական ի-

րավունքների և ազատությունների չափանիշները, այլև՝ ներ-  
կայացնում դրանց բովանդակությունը:

Մասնավորապես, նշյալ կոնվենցիայի «Ընդհանուր ընտ-  
րական իրավունք» վերտառությամբ 2-րդ հոդվածի համա-  
ձայն՝ «Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի պահ-  
պանում նշանակում է հետևյալը.

ա) Սահմանադրությամբ, օրենքներով սահմանված տա-  
րիքը լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ընտ-  
րելու և ընտրվելու պետական իշխանության, տեղական ինք-  
նակառավարման մարմիններում, ժողովրդական (ազգային)  
ներկայացուցչական այլ մարմիններում, ընտրովի պաշտոն-  
ներում՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված  
պայմաններով և կարգով.

բ) իշխանության, տեղական ինքնակառավարման մար-  
միններում, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ  
մարմիններում, ընտրովի պաշտոններում քաղաքացու ընտ-  
րելու և ընտրվելու իրավունքն իրականացվում է՝ անկախ սե-  
ռական, լեզվական, դավանական կամ կրոնական հատկա-  
նիշներից, առանց քաղաքական կամ այլ հայացքների, ազգա-  
յին կամ սոցիալական ծագումի, ազգային փոքրամասնության  
կամ էթնիկ խմբի պատկանելու, գույքային կամ այլ նմանա-  
տիպ հանգամանքների որևէ խտրական բնույթի սահմանա-  
փակումներին.

գ) ազգային ընտրությունների անցկացման ժամանակ իր  
պետության սահմաններից դուրս բնակվող կամ գտնվող յու-  
րաքանչյուր քաղաքացի ունի իր պետության մյուս քաղաքա-  
ցիներին հավասար ընտրական իրավունքներ: Դիվանագի-  
տական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմ-

նարկները, դրանց պաշտոնատար անձինք աջակցում են քաղաքացիների ընտրական իրավունքների և ազատությունների իրականացմանը.

դ) յուրաքանչյուր քաղաքացու երաշխավորվում է ընտրողների ցուցակում իրեն ընդգրկելու մասին տեղեկություն ստանալու, դրա ամբողջականությունը և իսկությունն ապահովելու նպատակով այդ տեղեկատվությունը ճշտելու, ընտրողների ցուցակում ընդգրկելու մերժումը օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու իրավունք»:

ԱՂՀ-ի ընտրությունների և հանրաքվեի մոնիթորինգ իրականացնող միջազգային դիտորդների համար նախատեսված ուղեցույցը<sup>82</sup> ևս ընդգրկում է ընդհանուր ընտրական իրավունքին վերաբերող դրույթներ: Այսպես, նշյալ իրավական փաստաթղթի համատեքստում՝ ընտրելու իրավունքը (ակտիվ ընտրական իրավունքը) պետք է տրամադրվի սահմանադրությամբ և (կամ) օրենքով սահմանված տարիքը լրացած քաղաքացիներին, սակայն տարիքային շեմը չի կարող գերազանցել 18 տարեկանը (1.1 կետ): Բացի այդ, ուղեցույցում նշվել է, որ ընտրված լինելու իրավունքը պետք է տրամադրվի սահմանադրությամբ և (կամ) օրենքով սահմանված տարիքը լրացած քաղաքացիներին, ընդ որում՝ խորհրդարանի ստորին պալատի կամ մեկ միասնական խորհրդարանի թեկնա-

<sup>82</sup> St'u, Рекомендации по совершенствованию законодательства государств – участников МПА СНГ в соответствии с международными избирательными стандартами Межпарламентская Ассамблея государств – участников Содружества Независимых Государств, приложение к постановлению // [www.cikrf.ru/international/docs/mpa\\_recomend.php](http://www.cikrf.ru/international/docs/mpa_recomend.php):

ծուն պետք է լինի 25 տարին լրացած, և խորհրդարանի վերին պալատի թեկնածուն՝ 35 տարին լրացած (1.3 կետ):

Վերոգրյալի լույսի ներքո կարելի գալ այն հետևությանը, որ ընտրական իրավունքի իսկապես ընդհանուր լինելը որոշվում է ընտրական ցենզերի (լատ.՝ census, censeo - ցուցակագրում եմ, հաշվեգրում եմ) առկայությամբ կամ բացակայությամբ, որոնց պարագայում հասարակության որոշակի կատեգորիայի անձինք ժամանակավոր կամ մշտապես հեռացվում են ընտրությունների միջոցով հասարակության և/կամ հասարակության գործերի վարման մասնակցությունից: Փաստորեն, ընտրական ցենզը կարելի է դիտարկել որպես պայման, որին բավարարելու դեպքում անձը կարող է օգտվել իր քաղաքական ընտրական իրավունքներից:

Իր հերթին, ժողովրդավարության զարգացման ընթացքում կարելի է նկատել ընդհանուր ընտրական իրավունքի սուբյեկտների ընդլայնման միտում, ինչը պայմանավորված է, օրինակ, սեռի, մաշկի գույնի, ռասայի, էթնիկական կամ սոցիալական ծագումի, կրոնի, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, գույքային վիճակի, անձնական կամ սոցիալական բնույթի ցենզերի վերացմամբ, ինչպես նաև տարիքային սահմանի իջեցմամբ: Որպես օրինակ, Անգլիայում ընթացող բարեփոխումների արդյունքում քանակական առումով փոփոխվում էր ընտրազանգվածը, այսպես՝ 1914 թվականին ընտրազանգվածը կազմել է երկրի բնակչության մեծահասակների

30.0% -ը, 1921 թվականին՝ 74.0%, 1931 թվականին՝ 96.6%:<sup>83</sup>

Ուշադրությանն է արժանի Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2016)7 հանձնարարականի պարզաբանող հուշագիրը<sup>84</sup>, որում նշվում է հետևյալը. «Որպեսզի անդամ պետությունները հաղթահարեն ժողովրդավարության ընդլայնվող դեֆիցիտը և եվրոպական հասարակության մեջ աճող անհավասարությունը, անհրաժեշտ է հեռացնել հասարակական կյանքին երիտասարդների մասնակցության խոչընդոտները: Անդամ պետությունների Կառավարություններին առաջարկվում է վերացնել այն խոչընդոտները, որոնք սահմանափակում են երիտասարդության ժողովրդավարական մասնակցությունը և անհրաժեշտության դեպքում քննարկել իրենց ընտրական համակարգերում փոփոխություններ կատարելու հարցը: Երիտասարդության քաղաքական ակտիվության փոփոխվող դեմքը, ինչպես վկայում է հասարակական կյանքում երիտասարդության մասնակցության մասին Կոնգրեսի զեկույցը, ընդգծում է երիտասարդ քաղաքացիների և ընտրված ներկայացուցիչների միջև երկխոսության բարելավմանն ուղղված միջոցների կիրառման անհրաժեշտությունը: Կոնգրեսի այս զեկույցում տեղական և տարածաշրջանային իշխանություններին առաջարկվել է «ընկալել հաղորդակցվելու նոր մշակույթ, որը լայնորեն կիրառվում է

<sup>83</sup> St' u Зарубежное избирательное право: Учебное пособие. Изд-во НОРМА, 2003:

<sup>84</sup> St' u, "Young people's access to rights" Recommendation CM/Rec(2016)7 adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 28 September 2016 and explanatory memorandum// www.rm.coe.int/1680702b6e:

երիտասարդների կողմից, ինչը թույլ կտա այս խմբին արդյունավետորեն մասնակցել քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներին, թույլ կտա նրանց հաշվի առնել իրենց խնդիրները և կարիքները՝ օգտագործելով այն գործիքները, որոնց իրենք նախապատվություն են տալիս»:<sup>85</sup> Անդամ պետություններին առաջարկվում է դիտարկել տեղական, տարածքային և ազգային մակարդակում քվեարկության համար տարիքային ցենզի նվազեցման փաստարկներն ու հիմնավորումները՝ որպես երիտասարդների ժողովրդավարական մասնակցության բարձրացման միջոց: Թվում է, որ նման միջոցը կկարողանա շտկել քվեարկող երիտասարդների թիվը նվազեցնելու միտումը»<sup>86</sup>:

Որպես օրինակ, Նորվեգիայում 2011 թվականի տեղական ընտրությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, թե ինչպես երիտասարդ ընտրողների ընտրական իրավունքի հզորացումը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ երիտասարդ թեկնածուների ընտրվելու վրա: Այդ տարվա տեղական ընտրությունները տարբերվում էին մյուս ընտրու-

<sup>85</sup> St' u Congress of Local and Regional Authorities (2015), CG/2015(29)7PROV, Bringing down barriers to youth participation: adopting a lingua franca for local and regional authorities// www.coe.int/Congress:

<sup>86</sup> St' u Zeglovts (2011), Vote at 16: turnout of the youngest voters – evidence from Austria, paper presented at the ÖGPW (Österreichische Gesellschaft für Politikwissenschaft), 2 December 2011, Salzburg; Franklin M.N. (2004), Voter turnout and the dynamics of electoral competition in established democracies since 1945, Cambridge University Press; Bhakti Y., Hansen K.M. and Wass H. (2012), The relationship between age and turnout: a roller-coaster ride. Electoral Studies 31: 588-593:

յուններից այն պատճառով, որ երկրի 20 համայնքներում փորձնական նվազեցվել է ակտիվ ընտրական իրավունք ունեցող անձանց տարիքային շեմը՝ 18-ից 16 տարեկանը: Արդյունքում 18-24 տարեկան ընտրված թեկնածուների ընդհանուր քանակը էականորեն ավելացել է<sup>87</sup>:

Փաստորեն տարիքային սահմանի նվազեցման միտումը երիտասարդների քաղաքական ակտիվությանը նպաստող առավել վառ իրավական լուծումներից մեկն է:

Մինևոյն ժամանակ, իրավական կարգավորման արդյունավետության առումով առաջադեմ երկրների գործող նորմատիվ իրավական ակտերում շարունակում են պահպանվել քաղաքացիների առանձին կատեգորիաների ընտրական իրավունքը սահմանափակող որոշակի իրավական դրույթներ: Որպես կանոն, ընտրական իրավունքի սահմանափակումն ենթադրում է քաղաքացիությանը, որոշակի տարածքում բնակության ժամկետին, տարիքին վերաբերող համապարտադիր իրավական պահանջների առկայություն: Նշյալ պահանջներն ամրագրվում են առավելապես պետությունների սահմանադրական կամ ընտրական օրենսդրությունում: Այսպես, տարիքային ցենզը որոշակի տարիք լրանալուց հետո անձի ընտրական իրավունքի ճանաչումն է: Ընդ որում՝ տարիքի հիմքով սահմանափակումն օբյեկտիվ պատճառներով՝ համապատասխան տարիքային շեմը հաղթահարելու դեպքում, ենթակա է վերականգման:

«Ընտրությունները աշխարհում. ընտրական ցենզեր» խո-

րագրով գիտական աշխատանքի<sup>88</sup> հեղինակները, վերլուծելով պետությունների օրենսդրությունները, եկել են եզրահանգմանն առ այն, որ գոյություն ունեն ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի սահմանափակման երեք մոդելներ՝ լիբերալ, ստանդարտ և պահպանողական: Ուշագրավ է, որ հենց գիտական աշխատանքի հեղինակները ընդգծում են, որ տվյալ դասակարգումը կրում է պայմանական բնույթ: Այսպես, ըստ աշխատության՝ լիբերալ մոդելի պետություններում նկատվում է ընդունված ցենզերի վերանայման շնորհիվ ընդհանուր ընտրական իրավունքի իրագործման շրջանակի ընդլայնման մոտեցում, որը դրսևորվում է, ի թիվս այլնի, տարիքային շեմի նվազեցմամբ, ստանդարտ մոդելի դեպքում ենթադրվում է միջազգային տարածում գտած ընտրական ցենզերի առկայությունը՝ ակտիվ ընտրական իրավունքի պարագայում 18 տարեկան տարիքային սահման և պասիվ ընտրական տարիքային դեպքում առնվազն 18 տարեկան, պահպանողական մոդելի պետություններում կիրառվում են ավելի խիստ սահմանափակումներ, ինչը, որպես կանոն, պայմանավորված է պետության պատմական, մշակութային, կրոնական և զարգացման այլ առանձնահատկություններով (Աղյուսակ 1): Ըստ ներկայացված հետազոտության՝ գրեթե բոլոր ԱՊՀ անդամ պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, կիրառելի է ընտրական իրավունքի ցենզերի ստանդարտ մոդելը:

<sup>87</sup> St' u, Youth participation in national parliaments: 2018, Inter-Parliamentary Union //www.ipu.org/file/6076/download?token=7Aog71dH

<sup>88</sup> St' u, Выборы в мире: избирательные цензы / И.Б. Борисов, А.Г. Головин, А.В. Игнатов, Ю.Ю. Комиссаров; Под общ. ред. И.Б. Борисова. М.: РОИИП, 2015. – 336 с.

**Աղյուսակ 1**

	<b>ԱԿՏԻՎ և ՊԱՍԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՑԵՆՁԵՐԻ ՍՈՂԵԼՆԵՐ</b>		
<i>Պետություն</i>	<b>Լիբերալ</b>	<b>Ստանդարտ</b>	<b>Պահպանողական</b>
<i>Հայաստան</i>		V	
<i>Ադրբեջան</i>		V	
<i>Բելառուս</i>		V	
<i>Թուրքմենստան</i>		V	
<i>Ղազախստան</i>		V	
<i>Ղրղզստան</i>		V	
<i>Մոլդովա</i>			V
<i>Ռուսաստան</i>		V	
<i>Տաջիկստան</i>			V
<i>Ուզբեկստան</i>		V	

Այսպես, ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի

հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 1-ին հոդվածի՝ Ազգային ժողովի, համայնքների ավագանիների, համայնքների ղեկավարների, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված համայնքների ղեկավարների, ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը նվիրված է ընտրական իրավունքին և հանրաքվեին մասնակցելու իրավունքին, որի համաձայն. «1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցե-

լու իրավունքը:»:

Իր հերթին, ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք»:

ՀՀ Սահմանադրության 148-րդ հոդվածի համաձայն. «1. Կառավարության անդամը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները:

2. Կառավարության անդամի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրա համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ»:

ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. «1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (այսուհետ՝ քվեարկության օրը) 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեզիստում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղա-

քացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից գորացրվելու կամ ազատագրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող)»:

Նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք»: Իսկ 107-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ «Համայնքի ղեկավար և ավագանու անդամ կարող են ընտրվել սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք»:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունում ևս գործում են ընտրական իրավունքի տարիքային ցենզեր: Մասնավորապես, ՀՀ-ում գործող իրավական կարգավորումների համաձայն՝ ակտիվ ընտրական իրավունքը սահմանվում է 18 տարեկանից: Պասիվ ընտրական իրավունքի պարագայում քաղաքական պաշտոնին հավակնելու համար պետք է հաղթահարել որոշակի տարիքային սահմանը, օրինակ, ՀՀ-ում ԱԺ պատգամավորի թեկնածուն, ինչպես նաև Կառավարության անդամը պետք է լինի 25 տարին լրացած անձ, ՀՀ նախա-



գահ կարող է ընտրվել 40 տարին լրացած անձ, իսկ համայնքի ղեկավար և ավագանու անդամ՝ 18 տարին լրացած անձը:

Ստացվում է մի իրավիճակ, երբ 18 տարին լրացած քաղաքացին օժտվում է ընտրելու իրավունքով, սակայն նույն քաղաքացին զրկվում է որոշակի քաղաքական պաշտոնում ընտրվելու իրավունքից: Ակնհայտ է, որ նման իրողությունը ստեղծում է տարաձայնություն՝ քվեարկության մասնակցելու իրավունքի և քաղաքական պաշտոն զբաղեցնելու իրավունքի տարիքային սահմանափակումների միջև: Հետազոտողների շրջանակում նկատվում է կարծիք, համաձայն որի՝ բոլոր դեպքերում անհրաժեշտ է հավասարեցնել ակտիվ և պասիվ ընտրական իրավունքների տարիքային սահմանները:

Մեր կարծիքով, տարիքային շեմի հիմքով ակտիվ ընտրական իրավունքի օրենսդրական սահմանափակումը նպատակաուղղված է այնպիսի ընտրական կորպուսի կազմավորմանը, որն իր որակական հատկանիշներով ունակ է գիտակցաբար, անկախ և պատասխանատու կերպով ձևավորել ներկայացուցչական մարմիններ, ուստի պատահական չէ որոշված ակտիվ ընտրական իրավունքի տարիքային շեմը՝ 18 տարեկանը՝ այսինքն՝ անձի չափահաս դառնալը:

Ինչ վերաբերում է նույն հիմքով պասիվ ընտրական իրավունքի սահմանափակմանը, ապա դա պայմանավորված է ընտրողների իրավունքների պաշտպանության, պաշտոնատար անձանց անկախության, պատասխանատվության և արհեստավարժության ապահովման դրդապատճառներով: Ընդ որում՝ որոշակի պաշտոններ, ինքնին («per se») պահանջում են, այսպես կոչված, «կյանքի փորձի» առկայություն, ինչը երիտասարդ կադրերի պարագայում օբյեկտիվորեն բացակայում

է: Նման պարագայում, յուրաքանչյուր դեպքում, պասիվ ընտրական իրավունքի տարիքային շեմն որոշելիս, պետք է հաշվի առնել պաշտոնատար անձի լիազորությունների խորքային բովանդակությունը:

Ավելին՝ ուսումնասիրության առարկա դարձնելով Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումները՝ կարելի է գալ այն հետևությանը, որ քաղաքական գործընթացներում երիտասարդ քաղաքացիների մասնակցության մակարդակն ապահովելու համար օրենսդրորեն նախատեսված չեն պարտադիր բնույթ կրող քվոտաներ: Նման պարագայում առաջարկվում է օրենսդրական մակարդակում երիտասարդ անձանց համար սահմանել նաև որոշակի տարիքային քվոտա, ինչպես դա առկա է, օրինակ, սեռական պատկանելիության հիմքով:

Այսպես, «Երիտասարդների մասնակցությունը ազգային խորհրդարաններում. 2018» աշխատանքի<sup>89</sup> հեղինակները իրականացված հետազոտության արդյունքում եկել են այն եզրահանգման, որ երիտասարդների համար նախատեսված քվոտաներ ստեղծվել են Աֆրիկայի, Ասիայի, Եվրոպայի, Լատինական Ամերիկայի և Մերձավոր Արևելքի մի շարք զարգացող երկրներում: Հեղինակները նկատել են, որ նշյալ երկրներում, որպես կանոն, երիտասարդների ներկայությունը երաշխավորելու համար խորհրդարանում սահմանվում է երիտասարդների համար կոնկրետ թվաքանակ (ռեզերվային քվոտա), սակայն սահմանված համամասնությունը հաճախ

<sup>89</sup> St' u Youth participation in national parliaments: 2018, Inter-Parliamentary Union //www.ipu.org/file/6076/download?token=7Aog71dH

շատ ցածր է լինում: Միննույն ժամանակ, քվոտաները կարող են կիրառվել նաև քաղաքական թեկնածուների թվաքանակի նկատմամբ, անկախ այն հանգամանքից, թե դրանք սահմանվել են օրենքով (օրենսդրական քվոտա) կամ մեկ/մի քանի կուսակցությունների նախաձեռնությամբ (կուսակցական քվոտա): Ուշագրավ է, որ օրենսդրական կամ կուսակցական քվոտաները ուղեկցվում են ընտրություններին երիտասարդների մասնակցության բարձր տոկոսային հարաբերակցությամբ, սակայն փաստացի չեն երաշխավորում երիտասարդների ընտրված լինելը (Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2**

Պետություն	Քվոտայի տեսակ	Տարիքային խումբ	Քվոտա %
Ռուանդա	Ռեզերվային	35<	7.7
Մարոկկո	Ռեզերվային	40<	7.6
Քենիա	Ռեզերվային	35<	-
Ստորին պալատ	Ռեզերվային	35<	3.4
Վերին պալատ	Ռեզերվային	35<	2.9
Ուգանդա	Ռեզերվային	30<	1.3
Տիվայիններ	Օրենսդրական	Անհայտ	50*
Թունիս	Օրենսդրական	35<	25**

\* Կուսակցական ցուցակների 50%-ը պետք է լինի տարբեր ոլորտներից, ներառյալ երիտասարդությունը:

\*\* Չորս կամ ավելի տեղ ունեցող տեղամասերում պետք է առաջադրվի մեկ երիտասարդ թեկնածու, որը տեղ է զբաղեցնում ցուցակի առաջատարների քառյակում:

Գաբոն	Օրենսդրական	40<	20
Ղրղզստան	Օրենսդրական	35<	15
Եգիպտոս	Օրենսդրական	35<	****
Նիկարագուա	Կուսակցական	Անհայտ	40.*** 15
Ռումինիա	Կուսակցական	Անհայտ	30
Մեքսիկա	Կուսակցական	30<	30, 20
Մոնտենեգրո	Կուսակցական	30<	30.20
Վիետնամ	Կուսակցական	40<	26.5
Էլ Սալվադոր	Կուսակցական	31<	25
Շվեդիա	Կուսակցական	35<	25
Մոզամբիկ	Կուսակցական	35<	20
Կիպրոս	Կուսակցական	45, 35 <	20
Լիտվա	Կուսակցական	35<	Անհայտ
Հունգարիա	Կուսակցական	Անհայտ	20
Սենեգալ	Կուսակցական	Անհայտ	20
Անգոլա	Կուսակցական	Անհայտ	15
Թուրքիա	Կուսակցական	Անհայտ	10
Խորվաթիա	Կուսակցական	Անհայտ	Անհայտ
Ուկրաինա	Կուսակցական	Անհայտ	Անհայտ

Կատարված ուսումնասիրության արդյունքում հետազոտողներն, ամփոփելով աշխատանքը, ներկայացրել են քաղաքական կյանքում երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացման առնչությամբ իրենց տեսլականը: Մասնավորապես, առաջարկվել է, նախ և առաջ, ներդնել պետությունների գործադիր մարմիններում, խորհրդարաններում և

\*\*\*\* Առնվազն 16 թեկնածու պետք է առաջադրվի 4 ընտրատարածքներում:

\*\*\* Կանայք և երիտասարդները միասին են:

կուսակցություններում երիտասարդական քվոտաների ինստիտուտը, որպեսզի կատարելագործվի երիտասարդ թեկնածուների ընտրության մեխանիզմը և ապահովվի նրանց համար հետագա առաջխաղացման հնարավորությունը: Այս սահմանել ավելի ցածր տարիքային սահմաններ՝ 20-ից մինչև 30 տարեկան երիտասարդ քաղաքական գործիչներին նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

Երիտասարդների քաղաքական ակտիվությանը նպաստելու տեսանկյունից ուշադրության է արժանի ներկայացված առաջարկն առ այն, որ հատկապես անհրաժեշտ է ամրագրել երիտասարդների համար քվոտաների ինստիտուտը տեղական կառավարման մարմինների ձևավորման գործընթացում, քանի որ նման մոտեցումը, անշուշտ, կապահովի երիտասարդների համար քաղաքական ասպարեզում հետագա գործունեության ծավալման նպատակով իրական փորձառություն:

Վերոգրյալի համատեքստում՝ հետաքրքիր է նաև ուսումնասիրության առարկա դարձնել ԱՊՀ անդամ պետությունների ներպետական փորձը: Այսպես, հատկանշական է, որ քվոտաների համակարգի միջոցով ընտրովի մարմիններում երիտասարդական ներկայացուցչության ապահովման համար սահմանադրական բարեփոխումների հետ մեկտեղ 2007 թվականին Ղրղզստանում ընդունվել է ընտրությունների մասին նոր օրենք: Օրենսդրական բարեփոխումների արդյունքում սահմանվել են պարտադիր քվոտաներ, այդ թվում՝ երիտասարդության ներկայացուցչության ապահովման համար (մինչև 35 տ.): Ընդհանուր առմամբ, քվոտայի համակարգի ներդրումը ապահովել է խորհրդարանում երիտասարդական

ներկայացուցչության ձևավորումը և արտացոլում է որոշումների կայացման գործընթացներում հասարակության բոլոր շերտերի ներկայացվածությունը: Այն նաև մոտիվացրեց երիտասարդության ակտիվ անդամներին մասնակցել տեղական քաղաքային և գյուղական համայնքների պատգամավորների ընտրություններին՝ դրանով ձևավորելով նոր սերնդի առաջնորդների<sup>90</sup>:

Ավելորդ չէ նշել, որ առողջ և կայուն ժողովրդավարությունը հիմնված է ընդգրկունության վրա, որի պաշտպանության գործում առանցքային տեղն ունեն քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: Մակայն նշյալ սուբյեկտների կողմից ներկայումս առավել դժվար է ապահովել ընդգրկունության մթնոլորտը, *inter alia*, այն պատճառով, որ երիտասարդության մեծամասնությունը հրաժարվում է դրանցում ունենալ որևէ մասնակցություն:

«2017թ. ժողովրդավարության գլոբալ վիճակը. ժողովրդավարության կայունության ուսումնասիրությունը» (The Global State of Democracy 2017: Exploring Democracy's Resilience) խորագրով աշխատանքի հեղինակները հայտնել են դիրքորոշումն առ այն, որ երիտասարդ սերունդները բավականաչափ ներկայացված չեն կուսակցություններում, ինչպես նաև կառավարման մարմիններում: Ընդ որում՝ «Աշխարհի արժեքները» հետազոտության (The World Values Survey) տվյալները ցույց են տվել, որ երիտասարդական կուսակցության անդամակցությունը հատկապես ցածր է Եվրոպայում և

---

<sup>90</sup> St´u Формирование молодежного представительства в парламенте с использованием системы квот. Опыт Кыргызской Республики. //www.bicis.kg/events/view/25:

Հարավային Ամերիկայում (1,8 և 1,5 % ակտիվ անդամներ): Հետազոտողների կարծիքով, նման իրողությունը Եվրոպայում համահունչ է Եվրոբարոմետր 2015-ի (2015 Eurobarometer) հետազոտության արդյունքներին այն մասին, որ երիտասարդների մեծամասնությունը քաղաքական կուսակցություններ է վարում ցածր մակարդակով և չեն ցանկանում միանալ նրանց կամ որևէ այլ քաղաքական, հասարակական կամ մասնագիտական կազմակերպության (European Commission 2015)<sup>91</sup>:

Վերոգրյալի լույսի ներքո հետազոտենք Հայաստանի Հանրապետությունում տիրող իրավիճակը:

Մասնավորապես, ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3–4-րդ մասերի՝ մինչև տասնչորս տարեկան անձը Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա, իսկ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

Նույն օրենքի 11-րդ հոդվածը նվիրված է կազմակերպություն ստեղծելու մասին պայմանագրի ինստիտուտին, որի 2-րդ մասով սահմանվում է, որ. «Եթե Կազմակերպություն հիմնադրել ցանկացող ֆիզիկական անձը՝

1) մինչև տասնչորս տարեկան է, ապա պայմանագիրը

նրա անունից կնքում է նրա օրինական ներկայացուցիչը.

2) տասնչորսից մինչև տասնութ տարեկան է և օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչված չէ, ապա պայմանագիրը կնքվում է իր օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ»:

Վերոգրյալից հետևում է, որ նույնիսկ անչափահաս անձինք հնարավորություն ունեն ստեղծելու հասարակական կազմակերպություններ և անդամագրվելու դրանց՝ որոշակի ընթացակարգային առանձնահատկությունների պահպանմամբ: Մասնավորապես, 14-18 տարեկան երիտասարդ անձը, օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չճանաչված լինելու դեպքում, կարող է դառնալ կազմակերպության անդամ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Ավելին՝ 14-18 տարեկան երիտասարդ անձը կարող է հանդիսանալ կազմակերպության հիմնադիր, ընդ որում՝ եթե օրենքով սահմանված կարգով վերջինս լրիվ գործունակ ճանաչված չէ, ապա նշյալ դեպքում կազմակերպություն ստեղծելու մասին պայմանագիրը կնքվում է իր օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

Նկատի ունենալով հասարակական և քաղաքական կյանքում երիտասարդների մասնակցության կարևորագույն դերը, գտնում ենք, որ երիտասարդների ներգրավվածության մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել որոշակի արտոնյալ պայմաններ, օրինակ, սահմանել երիտասարդական կազմակերպությունների գրանցման պարզեցված եղանակ:

Բացի այդ, երիտասարդական հասարակական կազմա-

<sup>91</sup> St' u International Institute for Democracy and Electoral Assistance (International IDEA), The Global State of Democracy 2017: Exploring Democracy's Resilience (International IDEA, 2017), www.idea.int/gsod,

կերպությունները երիտասարդների համար կարող են հանդես գալ որպես քաղաքական մասնակցության առանցքային ձևաչափ, ուստի կարևոր է զարգացնել երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներուժը, ապահովել նշյալ կազմակերպությունների համագործակցության լայն հնարավորությունը պետական և ոչ պետական կառույցների հետ:

Ուշագրավ է, որ Կանադայի վարչապետ Ջաստին Թրյուդոյի՝ սերունդների հերթափոխի կոչը ոգեշնչեց մեծ թվով երիտասարդների: Վարչապետը ստեղծել է երիտասարդական խորհուրդ (the Prime Minister's Youth Council)՝ մարմին, որը բաղկացած է 20 երիտասարդ անդամներից, ովքեր խորհրդատվություն են տրամադրում վարչապետին և կառավարությանը: Ջարգացնելով առաջարկած գաղափարը՝ երկրի բազմաթիվ քաղաքական ուժեր նույնպես ստեղծել են իրենց երիտասարդական խորհուրդները<sup>92</sup>:

Ինչ վերաբերում է կուսակցություններին, ապա օրենսդիրը հստակ նախատեսել է պայման, համաձայն որի՝ կուսակցության անդամ կարող է լինել 18 տարին լրացած ՀՀ գործունակ քաղաքացին («Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս): Այսինքն՝ բացառապես չափահաս անձինք կարող են լինել կուսակցության անդամներ:

Օբյեկտիվորեն գնահատելով կուսակցությունների կազմում երիտասարդների գործունեության պոտենցիալը՝ գտնում ենք, որ պետությունը պետք է խրախուսի կուսակ-

---

<sup>92</sup>Stéu, Youth participation in national parliaments: 2018, Inter-Parliamentary Union //www.ipu.org/file/6076/download?token=7Aog71dH

ցություններում երիտասարդական թևերի ձևավորումը:

Կուսակցությունների երիտասարդական թևերի ամրապնդման արդյունավետությունը հաստատվում է գործնականում: Այսպես, Բելգիայում կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել այդ ներուժը: Պարզվել է, որ քաղաքային խորհրդի անդամների 41 տոկոսը սկսել է քաղաքական կարիերան որպես երիտասարդական ակտիվիստ<sup>93</sup> և կուսակցությունների երիտասարդական թևերին անդամակցելը կարևոր դեր է խաղացել հետագա քաղաքական ուղու հարցում: Միջին հաշվով, նախկին երիտասարդական թևերի անդամները առաջին անգամ առաջադրվել են որպես տեղական թեկնածուներ 31 տարեկանում և առաջին անգամ պաշտոնավարել՝ 34 տարեկանում: Հարցման մյուս մասնակիցները, չունենալով նշյալ փորձը, առաջադրվել են 39 տարեկանում և պաշտոնավարել՝ 42 տարեկանում: Քանի որ քաղաքականության մեջ առաջընթացի հնարավորությունները սահմանափակվում են ընտրական փուլերով, այս ութամյա տարբերությունը կարող է զգալիորեն փոխել ցանկացած պաշտոնում ընտրվելու հեռանկարները: Քաղաքականությամբ զբաղվելու վաղ սկիզբը կարևորվում է Միացյալ Նահանգներում, որտեղ առաջատար քաղաքական առաջնորդների կեսից ավելին՝ նախագահներ, ներկայացուցիչներ, սենատորներ և կառավարիչներ, 35 տարեկանում առաջին անգամ զբաղեցրել են ընտրական պաշտոններ<sup>94</sup>:

---

<sup>93</sup> Stéu Marc Hooghe, Dietlind Stolle, and Patrick Stouthuysen. 2004. “Head start in politics: The recruitment function of youth organizations of political parties in Belgium (Flanders).” *Party Politics* 10 (2): 193–212.

<sup>94</sup> Stéu Ruth B. Mandel and Katherine E. Kleeman. 2004. *Political generation next: America's young elected leaders*. New Brunswick: Rutgers University Eagleton Institute of Politics.

Ըստ էության, երիտասարդական թևերի օգտագործմամբ կուսակցությունները կարող են ընտրել իրենց համար արժանի, երիտասարդ, միևնույն ժամանակ, փորձառու թեկնածուների: Օրինակ, Ռուսիայում և Իսպանիայում երիտասարդները դուրս են եկել սահմանված քաղաքական կուսակցություններից՝ իրենց կուսակցությունները ձևավորելու համար, ընդ որում, ընտրվածների մեծամասնությունը 45 տարեկանից ցածր էր<sup>95</sup>:

Մեր համոզմամբ, բոլոր քաղաքական կուսակցություններում պետք է ստեղծվեն երիտասարդական թևեր, իսկ եթե դրանք արդեն գոյություն ունեն՝ զգալի չափով միջոցներ հատկացնել դրանց գործունեության ամրապնդմանը: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ հենց երիտասարդական թևերը կարող են ծառայել մի կողմից՝ երիտասարդների քաղաքական ակտիվության բարձրացմանը, իսկ մյուս կողմից՝ ապագա քաղաքական գործիչների համար, այսպես կոչված, «ալմա մատեր» (լատ.՝ ալմա՝ սնուցող, բարի, մատեր՝ մայր):

Հարկ է նշել, որ Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիայի «Երիտասարդական մասնակցությունը հասարակական կազմակերպություններում (ՀԿ) և քաղաքական կուսակցություններում» վերտառությամբ II.8-րդ բաժնի համաձայն՝ «(...) 54. Աշխույժ, անկախ և ակտիվ հասարակական դաշտի առկայությունը ցանկացած իրական ժողովրդավարական հասարակության հիմնական բաղադրիչն է: Կարևոր է նաև, որ քաղաքացիական հասարակության մյուս ոլորտները, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները, ուժեղ և ակտիվ լի-

<sup>95</sup> St' u Youth participation in national parliaments: 2018, Inter-Parliamentary Union //www.ipu.org/file/6076/download?token=7Aog71dH

նեն տեղական և մարզային մակարդակում: Ցանկացած երկրի, մարզի կամ տեղանքի ժողովրդավարական կյանքում մասնակցությունն ավելին է, քան մի քանի տարին մեկ քվեարկության մասնակցելը: Այդ իսկ պատճառով մասնակցությունը հասարակական և քաղաքական կյանքում այդքան կարևոր է: Այն օգնում է քաղաքացիներին ներգրավվել և շարունակաբար ազդել որոշումների և գործողությունների վրա: Այդ իսկ պատճառով, շատ կարևոր է, որ երիտասարդները խրախուսվեն և աջակցություն ստանան իրենց համայնքների կյանքին մասնակցելու գործընթացում:

55. Տեղական և մարզային իշխանությունները պետք է ապահովեն ֆինանսական և այլ ռեսուրսներ այն ՀԿ-ներին, որոնք իրենց գործունեության և որոշումների կայացման ժողովրդավարական համակարգերում և գործընթացներում ակտիվորեն խթանում են երիտասարդական մասնակցությունը:

56. Տեղական և մարզային իշխանությունները, քաղաքական կուսակցությունների հետ միասին, պետք է անաչառորեն խրախուսեն երիտասարդների ներգրավվածությունը կուսակցության քաղաքական համակարգում, ընդհանուր առմամբ, և աջակցեն հատուկ միջոցառումներին, ինչպես օրինակ, վերապատրաստումներին<sup>96</sup>:

Քաղաքական և հասարակական կյանքում, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացներում երիտասարդների լայն շրջանում նկատվում է պետական և տեղական կառավարման համակարգերի, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, որոշումների կայացմանը մաս-

<sup>96</sup> St' u Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիա, «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան, 2017թ, // www.kasa.am/wp-content/uploads/2015/12/brochure.pdf

նակցության հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության ու գիտելիքի պակաս, ինչը կարող է ինչ-որ չափով լրացվել ժամանակակից տեղեկատվական միջոցներով: Միաժամանակ, անհրաժեշտ է ստեղծել երիտասարդների հաղորդակցման հմտությունները զարգացնելու և տեղեկություններն առավել արդյունավետ յուրացնելու համար համապատասխան հարթակներ: Մասնավորապես, անհրաժեշտ է կազմակերպել անվճար դասընթացներ, ակումբներ, ֆորումներ, սեմինարներ և այլ տեսակի միջոցառումներ՝ ներգրավելով երիտասարդներին: Իրավագիտակցության բարձրացման հիմնախնդրին անհրաժեշտ է անդրադառնալ դեռևս դպրոցական տարիքից:

Ավելորդ չէ նշել, որ երիտասարդության ներգրավածության հարցն առավել արդյունավետ լուծելու տեսանկյունից հանրապետության համայնքների որոշումների ընդունման առնչությամբ երիտասարդության մասնակցության ապահովման համար, բացի ընդունված միջոցներից, անհրաժեշտ է նաև զարգացնել վարչական մարմինների գործունեության իրավական մշակույթը և ապահովել իրականացվող աշխատանքի թափանցիկությունը:

Բացի այդ, ակնհայտ է երիտասարդության շրջանում համայնքային և/կամ հասարակական կյանքում մասնակցության մոտիվացիայի պակասը կամ դրա բացակայությունը, ինչը հաճախ պայմանավորված է հանրային կառույցների հանդեպ թերահավատությամբ և տեղեկացվածության բացակայությամբ:

Պետք է հաշվի առնել, որ երիտասարդները, հաճախ լինելով ծանրաբեռնված անձնական և ընտանեկան կյանքի առօրյա խնդիրներով, ի վիճակի չեն իրականացնել որևէ քաղաքա-

կան, հասարակական գործունեություն: Նշյալ համատեքստում քաղաքական կյանքում երիտասարդների մասնակցության ապահովման համար քննարկման առարկա կարող է հանդիսանալ նաև լրացուցիչ սոցիալական երաշխիքների տրամադրման հնարավորությունը, օրինակ, երիտասարդ քաղաքական գործիչներին լրացուցիչ ծնողական արձակուրդով կամ պետական բյուջեի միջոցներով դայակների ծառայությունով ապահովելը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ ենք համարում ընդգծել, որ երիտասարդների քաղաքական ակտիվությանը նպաստելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է բարձրացնել երիտասարդների իրավագիտակցությունը, մշակել երիտասարդներին մոտիվացնելու կառուցակարգեր, զարգացնել երիտասարդական հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների երիտասարդական թևերի ներուժը, ապահովել մատչելի տեղեկատվության հասանելիությունը հանրապետության ողջ տարածքում, ներդաշնակեցնել և վերակենդանացնել գործող օրենսդրությունը, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել երիտասարդների համար քվոտաների մեխանիզմի ներդրման հնարավորությունը:

**ԳԼՈՒԽ 2. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1. Երիտասարդության դերակատարությունը  
հասարակական քաղաքական կյանքում**

Քաղաքական գործընթացները ժամանակակից աշխարհում դինամիկ բնույթ ունեն: Առանձնահատուկ նշանակություն ունեն քաղաքական գործընթացի ակտորները: «Քաղաքականության ակտոր» եզրույթը սովորաբար ընկալվում է որպես քաղաքական գործընթացի սուբյեկտ, որի գործողությունները ուղղակիորեն առաջացնում կամ անուղղակի հանգեցնում են հասարակության հիմնական ինստիտուտների փոփոխություններ (անկախ այն բանից, թե բուն սուբյեկտը գիտակցել է այդ, թե ոչ):

Ներկա փուլում ժողովրդավարական պետության զարգացման կարևոր վեկտորը քաղաքացիական հասարակության կատարելագործումն է: Հասարակությունը հավասարակշռում է պետական իշխանության ազդեցությունը և այլ անկախ ակտորների քաղաքական մասնակցությունը՝ հասարակական կազմակերպություններով և շարժումներով, երկրում արձանագրված բոլոր հասարակական միտումներով: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ ոչ կառավարական կազմակերպությունները և քաղաքական գործընթացի այլ ակտորները կարող են դառնալ քաղաքացիների շահերի ակտիվ պաշտպան, որոշակիացնելով դեպի օրենքի գե-

րակայության պետություն շարժման գործընթացը<sup>97</sup>:

Քաղաքացիական հասարակության դրական զարգացման կարևորագույն պայմաններից մեկն այն մարդկանց ներկայությունն է, որոնք ունակ են հասարակական ուժերի հետ կառուցողական փոխհարաբերությունների՝ հանուն ընդհանուր նպատակների, շահերի և արժեքների իրագործման: Նրանք պետք է պատրաստ լինեն ստորադասել մասնավոր շահերը և դրանց հասնելու միջոցները համընդհանուր բարօրությանը, որն արտահայտված է իրավական նորմերում: Քաղաքացիական հասարակության ակտիվ սուբյեկտի դաստիարակության գործընթացն անհրաժեշտ է սկսել դեռևս այն տարիքում, երբ ձևավորվում է բուն անձը, հետևաբար, պետք է աշխատել երիտասարդ սերնդի հետ, որն ապագայում պետք է ինքնուրույն ապրի պետության մեջ, ձևավորի դրա քաղաքականությունը և կենսագործունեությունը:

Քաղաքացիական հասարակության և իրավական պետության ստեղծումը անհնարին է առանց երիտասարդության լայն քաղաքական մասնակցության: Այսօր քաղաքական գործընթացում երիտասարդության տեղի ու դերի որոշման հարցն արդիական է և սկզբունքային ցանկացած պետության համար: Երիտասարդությունը սոցիալական խումբ է, որը մշտապես աչքի է ընկնում աշխուժությամբ, շարժունակությամբ և դինամիզմով, բայց կյանքի փորձի պակասի պատճառով, և նոր-նոր ձևավորվող աշխարհայեցողությամբ, տարբեր ծայրահեղական ուժերի ազդեցության հանդեպ ցածր կայու-

<sup>97</sup> Տե՛ս Մամիջանյան Հ., Երիտասարդությունը որպես քաղաքական գործընթացի կառավարման դերակատար, Այլընտրանք, Երևան 2017, էջեր 153-161:



նություն է ցուցաբերում: Վերջին տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ պետությունները, որոնք կարողանում են արդյունավետ կուտակել և օգտագործել մարդկային կապիտալը, որի հիմնական կրողը երիտասարդ սերունդն է, ունեն հստակ ռազմավարական առավելություններ:

Պետությունն ու հասարակությունը պետք է ձգտեն ստեղծել պայմաններ երիտասարդության ինքնադրսևորման ու հասարակական և քաղաքական գործընթացներին նրանց ակտիվ ներգրավվածության համար:

Երիտասարդության դերը քաղաքական գործընթացում միանշանակ չէ: Անկասկած, երիտասարդությունը քաղաքական գործընթացի ակտորներից մեկն է այլ սոցիալական խմբերի, ինչպես նաև քաղաքական էլիտաների, հասարակական շարժումների և միավորումների, ասոցիացիաների (օրինակ, գործարարների միությունների), պետության (օրինակ, զլոբալ քաղաքական գործընթացներում), և այլոց հետ միասին: Միննույն ժամանակ, երիտասարդության որոշակի մասը քաղաքականապես ակտիվ չէ. երիտասարդական միջավայրին բնութագրական է արսենտեիզմի՝ քաղաքական մասնակցությունից խուսափելու որոշակի մաս: Նշված խնդրի արդիականությամբ պայմանավորված ամենայն ակներևությամբ հասունացել է երիտասարդության պետական քաղաքականության նոր ռազմավարության մշակման անհրաժեշտությունը, որը ունակ կլինի բարձրացնել քաղաքական հաստատությունների, իշխանական և կառավարման մարմինների գործունեության արդյունավետության աճը, նպաստել պետության և հասարակության դինամիկ զարգացմանը:

Ըստ Օ.Կորպենկոյի կարծիքի՝ ընդհանուր քաղաքական

զարգացումներն, ընդհանուր առմամբ, արտացոլում են հասարակության քաղաքական համակարգի շարժումը և դրսևորվում են վիճակների փոփոխմամբ, իսկ մասնավորները՝ իրենցից ներկայացնում են քաղաքական գործունեության բազմազան ձևեր, որոնք ուղղված են որոշակի քաղաքական նպատակների իրագործմանը, սակայն չեն ազդում հասարակության քաղաքական համակարգի վիճակի վրա<sup>98</sup>: Յուրաքանչյուր քաղաքական գործընթացին բնորոշ է ցիկլայնությունը կամ կրկնելիությունը: Մասնավորապես, ընտրական գործընթացի ձևավորումը տեղի է ունենում ընտրական ցիկլերի հիման վրա. քաղաքացիների քաղաքական գործունեությունը զարգանում է իշխանական մարմինների թեկնածուների առաջադրման, ընտրության և նրանց գործունեության վերահսկողության փուլերին համապատասխան: Քաղաքացիական ակտիվության գագաթնակետը համընկնում է ընտրությունների ժամանակի հետ:

Իշխանության, հասարակության և անհատի հարաբերությունների բնույթից և մեթոդներից (քաղաքական ռեժիմից) կախված քաղաքական գործընթացը բաժանվում է տոտալիտար, ավտորիտար և ժողովրդավարական տեսակների: Որպես ժողովրդավարական քաղաքական գործընթացի հիմնական հատկանիշներ նշենք սահմանադրության առկայությունը, գործառության ինտեգրացիան և անկախ իշխանական թևերը, քաղաքական բազմակարծությունը, տեղեկատվական աղբյուրների բազմազանությունը, քաղաքական շահերի ար-

<sup>98</sup> St' u Karpenko O.M., Lamanov I.A. Молодежь в современном политическом процессе в России. - М., 2006, с.19:

տահայտման ազատությունը, զարգացած բազմակուսակցական (կամ երկկուսակցական, ինչպես Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան և այլն) համակարգի առկայությունը:

Քաղաքական իշխանության համակարգային կազմակերպման առանձնահատկությունները թույլ են տալիս տարանջատել ժողովրդավարական (երբ տեղի է ունենում կամքի ուղղակի և ներկայացուցչական արտահայտման ձևերի սինթեզ) և ոչ ժողովրդավարական (բնորոշ է տոտալիտար կամ ավտորիտար ռեժիմների քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների առկայությունը) քաղաքական գործընթացներ:

Արտասահմանյան քաղաքագետները առաջարկում են քաղաքական գործընթացների մի քանի տիպաբանական դասակարգում: Առաջինը մշակել է Լ. Պայը<sup>99</sup> համեմատական քաղաքագիտության շրջանակներում, ով արևմտյան և ոչ արևմտյան երկրների քաղաքական զարգացման սկզբունքային տարբերությունները պայմանավորել է նրանց մշակութային «կոդով», որը հիմնականում պայմանավորված է այս կամ այլ հասարակության անդամների վարքագծով:

Ժամանակակից հայ քաղաքագիտությունը որպես քաղաքական գործընթացների դասակարգման հիմնական ցուցանիշ դիտարկում է սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական հատկանիշները, որոնց հիման վրա նշված գործընթացները բաժանվում են տեխնոկրատական, իդեոկրատիկ և խարիզմատիկ տեսակների:

<sup>99</sup> St' u Paj D., Незападный политический процесс // Политическая наука. - 2003. № 2. - С. 66-85:

Արդի ժամանակաշրջանում ցանկացած ժողովրդավարական պետությունում երիտասարդներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը երիտասարդության շահերի վրա ազդող որոշումների կայացման բոլոր մակարդակներում: Այս առումով անհրաժեշտ է աջակցել երիտասարդներին և պայմաններ ստեղծել միջոցառումների և գործունեության տարբեր ձևերի մեջ նրանց ներգրավելու համար: Որպեսզի հասարակական կյանքին մասնակցությունը իսկապես իրական և իմաստալից լինի երիտասարդների համար, այն պետք է ոչ թե պարզապես բավարարի երիտասարդների կարիքները, այլ պարտադրի լուրջ և տևական հանձնառություններ հատկապես մարզային և տեղական իշխանությունների համար:

Երիտասարդության ներուժը՝ որպես քաղաքական գործընթացի ռեսուրս, դեռևս լիարժեք չի օգտագործվում, այդուհանդերձ, այդ տարիքային խմբի ներկայիս անդամները ժամանակի ընթացքում հասարակության կյանքի տնտեսական և քաղաքական, սոցիալական և հոգևոր ոլորտներում կգրադեցնեն առաջատար դիրքեր: Երիտասարդության մեջ այսօր արդեն կարելի է նշմարել ապագայի նախատիպը, որից կախված է պետության հետագա զարգացումը:

Պետական իշխանության մարմինների համագործակցությունը երիտասարդության հետ ենթադրում է տարբեր սոցիալ-քաղաքական ուժերի շահերը կոնսոլիդացում: Ընտրություններին, քաղաքական ասպարեզում ուժերի բաշխման այլ զանգվածային իրադարձություններին ու քաղաքական միջոցառումներին երիտասարդության մասնակցության միջոցով բազմազան քաղաքական ակտորներ կարող են ուժեղացնել իրենց ազդեցությունը քաղաքական գործընթացի վրա: Այսօր-

վա սրընթաց փոփոխվող և գլոբալացման ակտիվ գործընթացների ազդեցության ներքո գտնվող աշխարհում, որ ներթափանցված է տեղեկատվության տարափով և պահանջում է նոր գիտելիքների մշտական հոսք, երիտասարդության<sup>100</sup> դերը նշանակալիորեն աճում է:

Տարիք առնելով և կենսափորձ կուտակելով քաղաքականության նկատմամբ երիտասարդների հետաքրքրությունն աճում է: Այսօր երիտասարդների մասնակցությունը ենթադրում է երիտասարդների ակտիվ, տեղեկացված և կամավոր ներգրավումը ինչպես տեղական, այնպես էլ համընդհանուր մակարդակներում համայնքային կյանքի որոշումների կայացման գործընթացներին: Մասնակցությունը տվյալ դեպքում պետք է ընկալել որպես համատեղ աշխատանք երիտասարդների հետ, որը հիմնվում է իրենց սեփական ջանքերի վրա:

Ըստ որոշ հետազոտողների՝ երիտասարդությանը բնորոշ է քաղաքացիական պասիվությունը և քաղաքական անտարբերությունը: Նրանք բացասաբար են տրամադրված իշխանության քաղաքական իրավիճակի հեռանկարների նկատմամբ, իսկ սեփական մասնակցությունը քաղաքական կյանքին անհնար են համարում: Այլ հետազոտողներ գտնում են, որ ժամանակակից երիտասարդությանը բնութագրական է հետաքրքրության աճը քաղաքականության նկատմամբ: Մեր համոզմամբ՝ արդի քաղաքական գործընթացում երիտասարդության քաղաքական մասնակցության երկու նշված միտումներն էլ գոյություն ունեն և մեկը մյուսին փոխադարձ դետեր-

<sup>100</sup> «Երիտասարդություն» հասկացության վերլուծությունը մանրամասն տե՛ս սույն աշխատության 1.1-րդ պարագրաֆը:

մինացնում են:

Երիտասարդությունը, լինելով ազդեցիկ իշխանական ռեսուրս, քաղաքական առաջնորդների և վերնախավի լեզվափոխության հենարանը, գրավում է քաղաքագետների և հասարակական առաջնորդների ուշադրությունը և ինքնին իրագործում քաղաքական գործընթացը որպես ակտոր:

Երիտասարդներին հետաքրքրում է դերը, որը նրանք կարող են կատարել ժողովրդավարության զարգացման, իրավական պետության, քաղաքացիական հասարակության և շուկայական տնտեսության կայացման գործընթացում: Մակայն այսօր փաստացի մասնակցությունը այդ գործընթացներում նրանք ունենալ չեն կարող: Սոցիոլոգներն ու քաղաքագետները վաղուց են որոշել քաղաքականապես ակտիվ խմբի տարիքը՝ «60-ից ավել»: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ միայն այն հասուն տարիքի մարդիկ, որոնց բնորոշում է «հասել է որոշակի հիերարխիկ մակարդակի կուսակցության մեջ» նախադասությունը, պետք է զբաղվեն քաղաքականությամբ:

Նախընտրական պայքարի ժամանակ քաղաքագետների հիմնական խնդիրն է կենտրոնացնել երիտասարդների ուշադրությունը երկրի քաղաքական կյանքի շուրջ: Քսաներորդ դարի 90-ականների սկզբից նկատվում է աճող սերնդի ապաքաղաքականացման միտումը, արժեքաբանության փոփոխությունը: Միևնույն ժամանակ, համաշխարհային քաղաքակրթության զարգացման ընդհանուր միտումները ցույց են տալիս, որ երիտասարդության համար արված ներդրումները բազմակի են վերադառնում: Այսօր երիտասարդները, կորցնելով հավատը իշխանական բոլոր կառույցների նկատմամբ,

անտարբեր են հասարակական-քաղաքական ակտիվության ցանկացած ձևերի նկատմամբ: Երիտասարդությունը բաժանվում է ինչպես ըստ տարիքային, այնպես էլ ըստ սոցիալական հատկանիշների: Ըստ այդմ՝ երիտասարդության հասարակական ակտիվությունն ընդունված է դիտարկել որպես պատասխան սոցիալական և կադրային «վերելակների» բացակայությանը:

Երիտասարդության ակտիվությունը հնարավոր է դառնում վերլուծել տարբեր հասարակական շարժումների ուսումնասիրության ընթացքում: Նման ակտիվության վերլուծության և տեսական իմաստավորման առաջին փորձերն արվել են հոգեբանական վերլուծության դիրքերից, դրա հոգեբանական-դինամիկական տարբերակով (Դ. Յում, Ջ. Ֆրեյդ և ուրիշներ): Բերված մոտեցման կողմնակիցներն ապացուցում էին, որ սոցիալական ակտիվությունը ավանդական հասարակական ինստիտուտների շրջանակներում (ընտանիքի, կրթության և եկեղեցու) անձի ներքին կոնֆլիկտի լուծման անհնարինության հետևանքն է:

Ինչպես նշվել է՝ երիտասարդությունն իր հասարակական ակտիվության ներուժն իրացնում է հասարակական շարժումների շրջանակներում, որոնց հաջողությունը կախված է առաջադրված նպատակներից հասնելուց և իրենց առաջնորդներին ու մասնակիցներին որպես այս կամ այն սոցիալական խմբի լիիրավ ներկայացուցիչ ճանաչելուց:

Մնայուն կարծիք է ձևավորվել, որ երիտասարդական կազմակերպությունների քաղաքական գործունեության նպատակն այս կամ այն քաղաքական կուսակցություններին ծառայելն է: Անկասկած, երիտասարդական կազմակերպությո-

յուններն ու շարժումները հարկավոր են, բայց նրանք պետք է ավելի անկախ լինեն և իրենց աշխատանքով հետապնդեն երիտասարդական խնդիրները լուծելու հիմնական նպատակ:

Ռուս գիտնական Վ.Ա. Լուկովն ընդգծում է, որ երիտասարդական շարժումներում երիտասարդի անձը շատ հպանցիկ է ներկայացված, իսկ երիտասարդական շարժման յուրահատկությունը կայանում է հենց խմբակային գործունեության մեջ<sup>101</sup>, որն ընդգծվում է կոլեկտիվ վարքի առկայությամբ, ինչը նկարագրված է անգլո-ամերիկյան քաղաքագիտական դպրոցի ներկայացուցիչների կողմից ու հարում է կոլեկտիվ պայմանագրի մասին Ջոն Լոկի և Տ.Նոբսի գաղափարներին:

Ժամանակակից երիտասարդներին հնարավոր է ներգրավել տարբեր երիտասարդական խմբերի մեջ միայն այն դեպքում, եթե նրանք համոզվեն, որ իրենք կկարողանան ազդել շրջակա աշխարհի ու մարդկանց վրա՝ արտահայտելով իրենց անհատականությունը: Բայց հենց գործունեությունը ձանձրալի է դառնում, հետաքրքրությունը դրա նկատմամբ անհետանում է:

Կարծում ենք՝ ժամանակակից երիտասարդության շրջանում ավելի մեծ տարածում են գտնում ժողովրդավարական մտածողության նոր գաղափարները, և երիտասարդությունը դառնում է դրանց ակտիվ իրագործողը: Երիտասարդությունը, կախված նրանից, թե ինչ աստիճանի է իրականացրել իր հասարակական դերը և որքանով խորն է ընդունում պետական և հասարակական զարգացման նպատակները և խնդիր-

<sup>101</sup> St' u Ковалева А.И., Луков В.А. Социология молодежи: Теоретические вопросы. - М., 1999. с.253

ները, կարող է հանդես գալ թե՛ որպես խթանիչ, թե՛ արգելա-  
կող գործոն:

Այդուհանդերձ, երիտասարդությունը մշտապես ձգտել է  
ակտիվ քաղաքական կյանքի: Դրա վառ օրինակն է XIX դարի  
առաջին կեսը, երբ առավելապես ուսանողական երիտասար-  
դությունն էր մասնակցում ազգային-ազատագրական շարժ-  
մանը: XIX դարի երկրորդ կեսին հեղափոխական շարժմանը  
սատարող երիտասարդական կազմակերպությունների կող-  
քին ծագում են նաև քրիստոնեական երիտասարդական միա-  
վորումներ: XX դարի սկզբին մի շարք արևմտաեվրոպական  
երկրներում սկսեցին գործել երիտասարդության սոցիալիս-  
տական բանվորական միությունները (մասնավորապես,  
1907թ.՝ երիտասարդության սոցիալիստական ինտերնացիո-  
նալը), իսկ Ռուսաստանում 1917թ. հեղափոխությունից հետո՝  
երիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալը:  
1945թ. նոյեմբերի 10-ին ժողովրդավարական երիտասար-  
դության Մեծ կոնֆերանսը որոշում ընդունեց Համաշխարհա-  
յին ժողովրդավարական երիտասարդության ֆեդերացիա  
ստեղծելու մասին: Այս տարեթիվը համարվում է երիտասար-  
դության քաղաքական «ձայն» ձեռքբերելու օր և նշվում է որ-  
պես Երիտասարդության համաշխարհային օր:

Երիտասարդական գիտակցության քաղաքականացմանը  
շեշտակի հզոր խթանի դեր խաղացին խորհրդային միության  
փլուզման ընթացքում տեղի ունեցող իրադարձությունները:  
Վառ օրինակ է Հայաստանում ծավալվող Ղարաբաղյան շար-  
ժումը, որի շարժիչ ուժը կարող են համարվել երիտասարդնե-  
րը: Անցումային շրջանը ԱՊՀ բոլոր երկրների համար նշանա-  
կում էր, որ վերափոխվելու են և՛ արտադրական հարաբե-

րությունները, և՛ սոցիալական ինստիտուտները, և՛ հանրութ-  
յան աշխարհայացքը: Այդ պահին սոցիալական էվոլյուցիան  
համընկնում էր սերնդափոխությանը: Երիտասարդները հան-  
կարձ իրենց գիտակցեցին որպես անձինք, որոնք ի գորու են  
ներգործել քաղաքականության վրա և նույնիսկ ողջ քաղաքա-  
կան համակարգի բնույթի վրա:

Օրինակ, նախկին սոցիալիստական երկրներում վերա-  
փոխումները հանգեցրին երիտասարդական շարժման բուն  
կերպարի նորացմանը: Զանգվածային երիտասարդական  
կազմակերպությունները, որոնք անցյալում թվում էր, թե սո-  
տալ գաղափարական ազդեցություն ունեին աճող սերնդի  
վրա, արագ կորցրեցին իրենց արդիականությունը և վերա-  
ցան քաղաքական ասպարեզից: Նրանց փոխարինելու եկան  
երիտասարդական նոր շարժումներ ու կազմակերպությու-  
ններ, որոնք ընդգրկում են քաղաքական և այլ շահերի ավելի  
լայն շրջանակ:

Դժվար է գերազնահատել հասունացող սերնդի իրավա-  
գիտակցության ձևավորման գործում հասարակական կազ-  
մակերպությունների քաղաքական դերը: Քաղաքականությու-  
նը երիտասարդության համար առաջին հերթին գործիք է, որի  
միջոցով նա ի վիճակի է լուծել իր առջև ծառայած մարտահ-  
րավերները: Մեր համոզմամբ, այս դիրքորոշումը առանցքա-  
յին է: Այսօր երիտասարդությունը չի կարող հեռու մնալ քա-  
ղաքականությունից, քանի որ ժամանակակից հասարակույթ-  
յան և պետության համար այն ժողովրդի շահերը ապահովե-  
լու այսօրվա և ապագայի գործիք է, որով անհնարին է միայ-  
նակ աշխատելը: Դրա համար անհրաժեշտ է կազմակեր-  
պություն՝ քաղաքական կուսակցություն կամ հասարակա-

կան-քաղաքական շարժում և այլն: Այսօր երիտասարդները նախապատվությունը տալիս են ոչ թե քաղաքական, այլ հասարակական կազմակերպություններին, որոնք ունակ են պաշտպանել իրենց օրինական շահերը, օգնել որևէ սոցիալական խնդիրներ լուծելիս, կազմակերպել ժամանցը: Ընդհանուր առմամբ, հասարակական կազմակերպություններին դիմելու պատճառը սեփական կարիքների և շահերի բավարարման հնարավորությունն է: Գաղափարական հիմնավորումը երիտասարդների ազատ ժամանցը բովանդակալի կազմակերպելն է, նրան դեվիանտային վայրերից շեղելը:

Երիտասարդական կուսակցական կազմակերպությունների հիմնական խնդիրը հանգեցվում է քաղաքական գործունեության համար կադրեր պատրաստելուն, ինչպես նաև կուսակցության գաղափարները ապագայի երիտասարդ ընտրողներին հասցնելուն, հասարակական կարծիք ձևավորելուն: Ինքնավար երիտասարդական հասարակական-քաղաքական կազմակերպությունների համար գործունեություն իրականացնելը շատ ավելի դժվար է, քանի որ դա պայմանավորված է որևէ քաղաքական ուժի հետ նույնականանալու բարդությամբ, նյութական ռեսուրսների բացակայությամբ:

Որպես քաղաքական հարաբերությունների սուբյեկտ՝ երիտասարդների առանձնահատկությունը արտահայտվում է քաղաքական գիտակցության յուրահատկությամբ, որը պայմանավորված է նրա ներկայացուցիչների տարիքային հատկանիշներով ու սոցիալական դիրքով: Հստակ երևում է, որ երիտասարդների ինքնագիտակցումը հեշտությամբ փոփոխվում է տարբեր գործոնների ազդեցությունից (տնտեսական, սոցիալական և քաղաքական և այլն), ինչը պայմանավորված

է նրա կյանքի թույլ դիրքորոշմամբ, քաղաքական հասունության բացակայությամբ, սոցիալական կողմնորոշման անկայունությամբ: Ցանկացած քաղաքական ուժ շահագրգռված է, որ իրեն աջակցեն, և երիտասարդության նկատմամբ ներգործությունը իրականացվում է այնպես, որ հնարավոր լինի նրան խրախուսել որոշակի քաղաքական գործողությունների շահ կոնկրետ քաղաքական համակարգի: Սակայն հաճախ, հանուն սեփական շահադիտական նպատակների, քաղաքական գործիչները մանիպուլացնում են երիտասարդներին որպես դեռ ամբողջովին չձևավորված քաղաքական գիտակցության կրողների:

Վերջին տարիներին, քաղաքական կուսակցությունները սկսեցին ձևավորել արդյունավետ գործող երիտասարդական քաղաքականություն, որի նպատակը նրա քաղաքականության իրագործման, իշխանություն նրա մուտքի համար պայմանների ստեղծումն է, քանի որ երիտասարդներին քաղաքական գործընթացներին որպես պասիվ մասնակից ներգրավելն արդեն բավարար չէ:

Փորձառու քաղաքագետ-մեթոդաբանների և քարոզիչների կոլեկտիվներ զբաղվում են երիտասարդությանը քաղաքական գործընթացի մեջ ներգրավման ռազմավարությունների մշակմամբ: Ընդ որում, հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդ սերնդի հետ աշխատանքի ձևերի և մեթոդների բազմազանությանը (հետազոտություններ, հարցումներ, հանրահավաքներ, հանդիպումներ և այլն):

Մինևույն ժամանակ, հասարակության քաղաքական կյանքին երիտասարդության արդեն ձևավորված ակտիվ մասնակցության կողքին դիտվում է նաև հակառակ վարքա-

գիծը: Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության այն մասը, որը քաղաքական ակտիվության գործընթացից և կյանքի տարբեր ոլորտներում մասնակցությունից դուրս է մղված, դժվարանում է ինտեգրվել հասարակության մեջ: Եվ չնայած երիտասարդների մեծամասնությունը հակված չէ համարել, որ իրենց անձնական բարեկեցությունը կապված է երկրում և արտասահմանում քաղաքական զարգացումների հետ, չարժե ժխտել, որ քաղաքական մեծ ասպարեզում տեղի ունեցող նման իրադարձությունները այս կամ այն չափով ազդեցություն են գործում բոլոր սոցիալական խմբերի վրա:

Գիտության բնագավառում պահպանվում է այն պատկերացումը, որ երիտասարդ սերունդը քաղաքականապես հակված է անտարբերության, սակայն տեսանելի ապագայում, կարծում ենք, երիտասարդության ազդեցությունը հասարակական կյանքի բազմաթիվ ասպեկտների վրա կաճի, ու նրանց թիվը կավելանա: Երիտասարդությունը կարող է հասարակական և, այսպես կոչվող, «խորհրդարանական» կազմակերպությունների ստեղծման միջոցով դառնալ նոր քաղաքական հայացքների տարածման շարժիչ ուժերից մեկը:

Մեր պատկերացմամբ, խոսել երկրի ու հասարակության կայուն զարգացման մասին կարելի է միայն այն պայմանով, որ ձևավորված պետք է լինի պետական երիտասարդական արդյունավետ քաղաքականություն, որպես պետության գործունեության անկախ ուղղություն, ինչի իրականացումը կպահանջի ակտիվ, շահագրգիռ համագործակցություն քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ բաղադրիչների, երիտասարդական կազմակերպությունների և շարժումների հետ, և միտված կլինի երկրի ինովացիոն զարգացման գոր-

ծում սոցիալական միջավայրի ձևավորմանը: Նման միավորումները քաղաքական գործընթացը խթանում են «ներքևից», հասարակական հարաբերությունների մեջ ինքնակառավարման նոր տարրեր են ներարկում, ուշադրությունը կենտրոնացնում են իրական արժեքների վրա, ձևավորում են երիտասարդների վստահությունն առ այն, որ իրենց կարգավիճակը հավասարազոր է պետությանը և սոցիալական ինստիտուտներին:

Գոյություն ունի նաև ոչ ֆորմալ երիտասարդական խմբավորումների գոյացման միտում, ինչը պայմանավորված է սոցիալական ձևափոխումների մասշտաբայնությամբ: Քաղաքական անկայունության համատեքստում նման միավորումները իրենցից զգալի վտանգ են ներկայացնում, գործիք դառնալով արմատական և ծայրահեղական քաղաքական կազմակերպությունների ձեռքին:

Պատմական դարաշրջանների փոփոխման հետ փոխվում է վերաբերմունքը երիտասարդության հանդեպ: Փոխվում է նաև նրա դերը հասարակության կյանքում: Օրինակ, XX դարի երկրորդ կեսին երիտասարդների համար առաջնային նշանակություն ստացավ խաղաղության պահպանումը համայն աշխարհում, սառը պատերազմի դադարեցումն ու երկրների միջև գործընկերական հարաբերությունների հաստատումը: Հենց երիտասարդությունն է առանցքային դերը խաղացել «թշնամու կերպարի» ոչնչացման գործում: Այդ ընթացքում երիտասարդությունը վերապրեց նաև մի շարք ճգնաժամեր, ինչպիսին էին ինքնաիրացման, սոցիալիզացման և ադապտացման, պետական իշխանության մարմիններին վստահության, անհատականացման ճգնաժամները:

Երիտասարդության գիտակցության ընդհանուր քաղաքական ակտիվացումը դրսևորվում է հասարակական սուր խնդիրների քննարկումներում և քաղաքական գործիչների կողմից առաջարկվող լուծումների քննադատմամբ: Քաղաքական ասպարեզում ընթացող գործընթացների մասին իրազեկության աստիճանի բարձրացումը ազդում է երիտասարդների մտածելակերպի և գործողությունների վրա. նրանց միջավայրում նվազեցվում է կոնֆորմիզմի աստիճանը, կատարվում է ավանդական շահագրգռվածության և հասարակական հակասությունների պատճառները բացատրող սխեմաների վերազնահատումը, ավելի ակտիվ են դառնում հանապազօրյա հարցերի լուծումների աննախադեպ տարբերակները:

Չնայած երիտասարդության որոշ խնդիրների լուծման հարցում նկատելի փոփոխություններին և իրական արդյունքներին՝ պետությունը դեռևս կանգնած է տնտեսական, իրավական և կազմակերպական պայմանների ու երիտասարդների ինքնորոշման իրականացման երաշխիքների տրամադրման, կարգավորիչ և սոցիալիզացման գործառույթների լիարժեք իրականացմանն ուղղված լուրջ աշխատանք իրականացնելու անհրաժեշտության առջև:

Անցման փուլում գտնվող հասարակության ներկայիս պայմաններում երիտասարդությունը, թերևս, ամենակարևոր սոցիալական ռեսուրսն է հասարակությանն առերեսվող ռազմավարական խնդիրների տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ երիտասարդների միջավայրում նկատելի է առաջընթացը դեպի ժողովրդավարություն (համապատասխան դրույթների ու նորմերի ընկալման և ընդունման իմաստով), վերջնականապես փոխել երիտասարդների վերաբերմունքը

քաղաքականության հանդեպ հնարավոր է միայն այն բանից հետո, երբ ինքն իրեն քաղաքական գործընթացի իրական ակտոր գիտակցի: Դա հնարավոր կլինի այն ժամանակ, երբ պետությունը պետական երիտասարդական քաղաքականությունը իրապես, այլ ոչ միայն պաշտոնապես առաջնահերթ դարձնի:

Երիտասարդների մասնակցության աստիճանը մեծապես կախված է երիտասարդության հանդեպ պետական իշխանության լոյալությունից, կոնկրետ քաղաքական գործընթացի ընթացքից՝ բնակչության քաղաքական ակտիվության աճի կամ անկման, ինչպես նաև երկրում քաղաքականության մեջ զանգվածային ներգրավվածության աստիճանից: Երիտասարդության՝ ժամանակակից քաղաքական գործընթացի ակտոր դառնալու պայմանները կախված են նաև քաղաքական ռեժիմից, ինքնին քաղաքական գործընթացի ձևից և փուլից, պաշտոնական կառույցների՝ ՋԼՄ-ներին հաշվետվողականության աստիճանից, սոցիալ-քաղաքական կյանքի տեղեկատվական բաղադրիչի զարգացման մակարդակից, «սպառողական հասարակության» իդեալների տարածման աստիճանից:

Երիտասարդության քաղաքական ձևավորման գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդ սերունդը, ինչպես նաև ժամանակակից հասարակությունն ընդհանրապես, բավականաչափ մասնատված է, այսինքն՝ քաղաքական մասնակցության բնույթի և բովանդակության տեսանկյունից անհամասեռ է: Մի կողմից, կա իր վճիռներում անկախ երիտասարդների ոչ բազմաթիվ մի խումբ, ովքեր արդեն ունեն հաստատված քաղաքական տեսակետներ ու հա-



մոզմունքներ: Նրանք ակտիվ են և ինքնուրույն, նրանցից է ձևավորվում կուսակցական մեծահասակ վերնախավի կադրային ռեզերվը: Իսկ մյուս կողմից, կա երիտասարդների մի մեծ խումբ, ովքեր մասնակցում են ընտրություններին միայն ժամանակ, երբ քաղաքական ուժը կարող է դիպչել նրանց շահերին: Այս առումով եզրակացնում ենք, որ կարևոր է տարբերակված կիրառել քաղաքական մեթոդները. նրանցից որոշները պետք է հաշվի առնեն երիտասարդությանը՝ որպես ամբողջություն, իսկ մյուսները՝ ուղղված լինեն երիտասարդության միայն առանձին հատվածներին և խմբերին:

Ամփոփելով վերը նշված եզրակացությունները, նշենք, որ քաղաքական գործընթացները ժամանակակից աշխարհում բնութագրվում են բազմաչափողականությամբ և բազմազանությամբ: Ուսումնասիրության առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում արդիականացման գործընթացները, քանի որ արդիականացումն ինքնին ազդում է բնակչության բոլոր հատվածների, այդ թվում, և նույնիսկ ավելի շատ, երիտասարդության վրա, որը երկրների և տարածաշրջանների ապագա քաղաքական զարգացման իրական ներուժ ունի:

Սոցիալապես նշանակալի հրատապ խնդիրներից է ժամանակակից ժողովրդավարական պետության արդիականացման միտումների հետ կապված քաղաքականության խնդիրների լուծման հարցերում երիտասարդական ռեսուրսի ներգրավումը: Հարկ է նշել, որ արդիականացման հեռանկարներն ավելի սերտորեն կապվում են սոցիալական այն շերտի հետ, որը կոչված է իրականացնել կյանքում նախանշված փոփոխությունները (հաղթահարել համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքները, հասկանալ գլոբալիզացիայի

հակասական գործընթացները), հետևաբար երիտասարդ սերնդի որակական կարգավիճակից է կախված սպասվող բարեփոխումների հնարավորությունն ու հաջողությունը: Այդ պատճառով իշխանությունների խնդիրն է ուղղել երիտասարդների էներգիան դեպի ստեղծագործական կիրառելիություն:

Տեսական ժամանակ քաղաքական կուսակցությունների կողմից երիտասարդությունը դիտարկվում էր գուտ որպես ժողովրդագրական խումբ, որի կարևորությունն աճում էր միայն ընտրական գործընթացների ժամանակ: Երիտասարդները ներգրավված էին քարոզչական պարզագույն աշխատանքներում, սակայն իրավիճակը փոխվեց այն ժամանակ, երբ երիտասարդության ձայնը սկսեց որոշիչ դեր խաղալ նաև ընտրական գործընթացներում: Օրինակ, 1996 թվականին կայացած ՌԴ նախագահի ընտրությունների ժամանակ առաջին անգամ իրականացվում էին հատուկ երիտասարդների ձայների ներգրավմանը ուղղված միջոցառումներ:

2000-ական թվականներին երիտասարդական քաղաքականությունը դարձավ մոդայիկ: Նոր գաղափարների և քաղաքական դեմքերի կարիք ունեցող հասարակությունը, քաղաքագիտական և լրագրողական հանրույթը սկսեցին կերտել նոր քաղաքական աշխարհ: Երիտասարդները սկսեցին ներգրավվել քաղաքական գործընթացներին՝ որպես դերակատարներ, և երիտասարդության համար քաղաքական դաշտը դարձավ անձնավորված: Երիտասարդները հնարավորություն ստացան երիտասարդ քաղաքական գործիչների միջոցով ինքնանույնացվել դրա հետ: Երիտասարդների համար քաղաքական գործընթացների գրավչության ուսումնասիրման հա-

մար մենք դիտարկել ենք ամերիկացի մարդաբան Մ. Միդի հետազոտությունները<sup>102</sup>:

Մշակութային էվոլյուցիան տեղի է ունենում հետֆիզուրատիվ մշակույթից կոնֆիզուրատիվ մշակույթի, ապա նախաֆիզուրատիվ մշակույթի անցման ընթացքում: Եթե դիմենք այլաբանական օրինակների, ապա առաջին դեպքում՝ «պապերը, իրենց գրկում օրորելով իրենց նորածին թոռների համար պատկերացնում են այնպիսի ապագա, ինչպիսին եղել է իրենց կյանքը», Երկրորդ դեպքում՝ անհատի համար ուղղորդիչ են իր ժամանակակիցների կենսակերպն ու պարադիգմը, իսկ երրորդում՝ «երիտասարդները կանգնած են ապագայի մարտահրավերների առջև, որոնք այնքան անկանխատեսելի են, որ չեն կարող կառավարվել նախկինում մշակված առկա մոդելներով»: Հենց այդ մարտահրավերների դիմակայման հրամայականն է ձևավորում երիտասարդների քաղաքական ընտրությունը<sup>103</sup>:

Մ. Միդի ուսումնասիրությունները երիտասարդության ոլորտում գտան իրենց շարունակությունը Կ.Մայնհեյմի աշխատություններում: Ըստ Մայնհեյմի՝ յուրաքանչյուր սերունդ «սահմանափակ պատմական փուլի» հատվածն է, հետևաբար կուտակում է իր չկրկնվող կենսափորձը: «Մեր ժամանակի ախտորոշումը» աշխատության մեջ<sup>104</sup> ներկայացված է երիտասարդությանը բնորոշող երկու ասպեկտ՝ երիտասարդու-

յունը ինչ է կարող տալ հասարակությանը և ինչ է ակնկալում հասարակությունից: Փիլիսոփա և սոցիոլոգ Հ.Մառկուզեն իր «Միաչափ մարդ»<sup>105</sup> աշխատության մեջ նշում է, որ երիտասարդության բնորոշ հատկանիշը «աութսայդերությունն է», որը հեղինակը բացատրում է անհատականության պահպանման և աներկբա կառավարման վերացման ձգտմամբ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այսօր քաղաքական և հասարակական շարժումներն ոչ միայն երիտասարդների սոցիալիզացիայով են պայմանավորված, այլ նաև հենց իրենց՝ երիտասարդների նախաձեռնողականության արդյունք են: Նույնիսկ «երիտասարդական շարժում» հասկացությունը վերաճել է պարզապես համընկնող հետաքրքրություններ ունեցող երիտասարդների խմբից (ժամանցային, մշակութային և այլն) լիիրավ քաղաքական և/կամ հասարակական կազմակերպությունների: ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգում նշվում է, որ երիտասարդական հասարակական կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական այն կազմակերպություններն են, որոնք համաձայն իրենց կանոնադրության, զբաղվում են երիտասարդության հարցերով և/կամ իրականացնում են երիտասարդական աշխատանք:

Վերջին տասնամյակում երիտասարդության քաղաքական սոցիալականացման սկզբունքների և կառուցակարգերի ոլորտում շրջադարձային փոփոխություններ են տեղի ունեցել. պետության կողմից երիտասարդության դաստիարակության տոտալ վերահսկողությունից մինչև երիտասարդ

<sup>102</sup> Տե՛ս Мид М. Культура и мир детства. М.: Наука, 1988, 429 с.

<sup>103</sup> Տե՛ս Мид М. Культура и преемственность. Исследование конфликта между поколениями: М.: Наука, 1970, 379 с.

<sup>104</sup> Տե՛ս Манхейм К. Диагноз нашего времени. -М.: «АКАЛИС», 1994. – 168, с.13

<sup>105</sup> Տե՛ս Marcuse H., One-Dimensional Man, Beacon Press, 1964, 257 p.

սերնդի վրա ազատ գաղափարական աշխարհայացքային ազդեցությունը, այնուհետև՝ գաղափարական բազմակարծությունը և երիտասարդության քաղաքական կրթության պետական կառուցակարգը միավորելու մերօրյա ջանքերը:

Մուրյեկտ-օբյեկտ հարաբերությունների արդիականացման ներուժի համատեքստում ժամանակակից երիտասարդությունը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինը խորհրդային քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի ապամոնտաժման մասնակից դարձավ: Տեղի ունեցավ պատերնալիզմից պոպուլիզմի կտրուկ անցում, որը նպաստեց երիտասարդության ինքնավար քաղաքական պահվածքի կանխարգելմանը: Այդ սերնդի ներկայացուցիչները ներգրավված էին պատերազմական գործողություններում, 2000-ական թվականներին 25-ից 30 տարեկան քաղաքացիները պետության հզորացման, կուսակցական համակարգի ոլորտում փոփոխությունների և այլ լուրջ տրանսֆորմացիաների վկա էին ու մասնակից: Երիտասարդության այդ խմբի արդիականացման ներուժը քաղաքական կյանքում դիտարկվում են որպես համեմատաբար ցածր, նրանց առաջնահերթությունները կենտրոնացած էին ընտանիքի և աշխատանքի վրա:

Երիտասարդների ավելի կրտսեր խումբը (14-25 տարեկան) կազմավորվել է ազատական միտումների, բազմակարծության և պետականության ապագա գաղափարայնականացման պայմաններում: XX և XXI դարերի հատման կետում, երիտասարդության նշված տարիքային խումբը դարձել էր նպատակաուղղված դիտավորյալ ներագդեցությունների և դաստիարակության օբյեկտ, ինչի արդյունքում այն դարձավ հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մասնակից:

Պետության, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ցուցաբերած հետաքրքրությունը ստացավ ակտիվ արձագանք, և երիտասարդությունը (հատկապես ուսանողությունը) ինքն առաջ քաշեց պատասխան նախաձեռնությունները:

Բոլոր այդ փոփոխությունները հանգեցրին ոչ միանշանակ հետևանքների: Երիտասարդության քաղաքական ակտիվության բնութագրերի և ձևերի, նրա գաղափարական արժեքների, քաղաքական մասնակցության շարժառիթների ուսումնասիրությունը արդիական է դառնում գլոբալացման համատեքստում և կնպաստի երիտասարդության քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ձևավորման, ինչպես նաև ժամանակակից քաղաքական արդիականացման ապագա կողմնորոշիչների վերաբերյալ նոր դրույթների ձևակերպմանը:

Երիտասարդությունը՝ որպես ժառանգորդ, կուտակում է նախորդ սերունդների պատմական փորձը, դառնում հասարակության կայունության յուրովի մի ցուցանիշ, և միևնույն ժամանակ, նորարարության հզոր ռեսուրս: Սակայն արդիականացումների պատմական փորձը ցույց է տալիս, որ երիտասարդական ռեսուրսի պետական կառավարման և վերահսկողության քաղաքականության բացակայությունը հանգեցնում է լուրջ սոցիալական և տնտեսական հետևանքների, որոնք արտահայտվում են տարանպատակ միտումներով և ռեսուրսների արտահոսքով:

Երիտասարդության հանդեպ կայուն դիրքի ձևավորումը ժամանակակից պետության և հասարակության ակտուալ մարտահրավեր է, և պետությունը պետք է իմանա, թե որքան բարձր է երիտասարդությունը գնահատում կյանքի որակը և

պետական ապարատի գործունեության արդյունավետությունը տվյալ հասարակության մեջ, թե ինչ նորամուծություններ է անում երիտասարդ սերունդը երկրի սոցիալ-քաղաքական և սոցիալական զարգացման գործում: Կարող ենք եզրակացնել, որ հասարակության սոցիալական զարգացումը ամբողջովին կախված է երիտասարդ սերնդի դիրքորոշումից, նրա պատկերից և բարոյապես առողջ լինելուց, որոնք հենց որոշելու են ժողովրդի ճակատագիրը և ապագան:

Չնայած այն հանգամանքին, որ XXI դարի սկզբից ի վեր երիտասարդության խնդիրների ուսումնասիրությանը հատկացվում էր ավելի մեծ ուշադրություն (մասնավորապես, արդիականացման քաղաքական գործընթացներում նրա դերին), այդուհանդերձ տեղի չունեցավ երիտասարդ սոցիումի՝ որպես արդիականացման գործընթացում ռազմավարական ռեսուրսի տեսակի ընկալումը: Նոր դարի սկզբին որպես արդիականացման սուբյեկտ իր ձևավորման ժամանակ երիտասարդությունը հայտնաբերեց մի շարք խնդիրներ և հակասություններ, որը ներառում է կենտրոնում և մարգերում երիտասարդական քաղաքականության զարգացման տարբերությունների ու տարաձայնությունների ի հայտ գալը, երիտասարդության մասին օրենքի բացակայությունը, մարգերում ձեռք բերված փորձի փոխանակման իրական մեխանիզմների թույլ գործունեությունը, երիտասարդ աշխատողների վերաբերյալ աննշան ուշադրությունը: Այսպիսով, երիտասարդության արդիականացման միտքը արտահայտվեց համախմբման/մոբիլիզացված քաղաքական ակտիվությունից անհատական ընտրությանն անցման մեջ, ինչը ձևավորեց կուսակցական կառույցներում երիտասարդության դերի «հա-

մակարգային» տեսլականը և հանգեցրեց կուսակցական ցուցակներում ավելացման տեսքով երիտասարդական ընտրականգվածի արդյունավետ ներգրավմանը քաղաքական գործընթացում: Չնայած դրան, երիտասարդությունը չի հավատում սոցիալական և քաղաքական խնդիրների լուծման վերաբերյալ իր ազդեցությանը, և երիտասարդների շատ փոքր հատվածն է վստահում քաղաքական կուսակցություններին:

Կարծում ենք՝ արդիականացման հաջողությունը կախված է այլոց թվում նաև հասարակության իրավական նորմերից: Նորմերը, որպես կանոն, որոշվում են քաղաքական ոլորտում, հետևաբար, իրավական կանոնների և կանոնակարգերի քաղաքական բաղադրիչը պետք է արտահայտի տվյալ երկրի ժողովրդի շահերը, և առաջին հերթին, նրա երիտասարդ սերնդի շահերը: Երիտասարդությունը պետք է ոչ միայն ինտեգրման գործընթացների ուղղորդիչը դառնա, այլև դրանց սուբյեկտը, որը կարող է ազդել հասարակության ինտեգրման արագության և ուղղության վրա: Երիտասարդության դերի ավելացումը հասարակության կյանքում բնական միտում է, որը արդիականացման ներկա փուլում հստակորեն է արտահայտվում: Երիտասարդ սերնդի քաղաքական ակտիվության արդիականացման գործընթացը կապված է քաղաքական համակարգի կառուցվածքային փոփոխությունների հետ: Երիտասարդ սերնդի ներգրավումը քաղաքական գործընթացում պետք է ապահովվի երիտասարդության հանդեպ հետևողական պետական քաղաքականությամբ: Իշխանական կառույցների երիտասարդացումը, երիտասարդական կազմակերպությունների ստեղծումը, երիտասարդական քաղաքական էլիտաների կառուցումը ու նոր տեսակների քաղաքական

մշակույթի ձևավորումը արդիականացման գործընթացները ուղեկցող դրական կողմերն են:

Հարկ է նշել, որ երիտասարդությունը, ձեռք բերելով որոշակի ընտրական փորձ, դառնում է արդիականացման ռազմավարական կարևոր միջոց: Իսկ ժողովրդավարական պետություններում սոցիալական և քաղաքական փոփոխումների շարժիչ ուժը սերունդների փոփոխությունն է կամ դրանց շարունակականությունը: Ժամանակակից երիտասարդությունը, ներկայանալով որպես արդիականացման փոփոխությունների սուբյեկտ, ավելի արագ է հարմարվում ժամանակակից աշխարհում, քան ավագ սերունդը: Այսպիսով, արդիականացման գործընթացն ուղեկցող երիտասարդական միջավայրին անցումը կարող է օգնել լուծել իշխանական ուժերի հարաբերակցության, երիտասարդական հասարակության ինստիտուտալացման, երիտասարդական ծայրահեղականության և բողոքի տրամադրությունների, երիտասարդների միջավայրում էթնիկ և կրոնական ուղղությունների և այլի հետ կապված որոշ խնդիրներ:

Ժամանակակից հասարակությունում քաղաքական համակարգը չի կարող գործել առանց երիտասարդության ներկայացուցչության: Դա կոժվարացի արդիականացման գործընթացները, կնպաստի քաղաքական ինստիտուտների նկատմամբ երիտասարդ սերնդի անվստահության առաջացմանը: Այս խնդրի լուծումն է առաջին հերթին իրավական և ինստիտուցիոնալ այնպիսի հիմքերի ապահովումը, որոնք կխրախուսեն երիտասարդների մուտքը պետական մարմինների կառույցներ: Պետության երիտասարդական քաղաքականությունը նպատակահարմար է կառուցել տարբերակված

մոտեցման հիման վրա: Անհրաժեշտ է երիտասարդության տարբեր շերտերը ակտիվացնել կատարելու հասարակության մեջ իրենց՝ որպես ռազմավարական անհրաժեշտ ռեսուրսի դերը: Չնայած XX դարի 90-ական թվականների գլոբալ փոխակերպումներն ուղեկցող՝ երիտասարդության շրջանում ճգնաժամին, վերջերս ձեռք է բերվել երիտասարդական որոշակի պոտենցիալ, որը ստեղծում է արդիականացման գործընթացներում երիտասարդության ներառման բարենպաստ հիմք<sup>106</sup>: Դա հիմնականում արտահայտվում է պետության քաղաքակրթական առանձնահատկությունները համաշխարհային քաղաքական պրակտիկայի ձեռքբերումների հետ համատեղելու գործում, ինչը կատարում է երիտասարդությունը՝ որպես ռեսուրս: Երիտասարդությունը իսկապես կարող է դառնալ գիտելիքների ու եռանդի հզոր ռեզերվով նորարարական մի ռեսուրս, որի էներգիան կարելի է ուղղել քաղաքական և սոցիալական գործողությունների հոսքին: Այդ գործողությունների ամենախոստումնալից ոլորտները բացահայտելու հարցին կնպաստի ռեսուրսի կառուցվածքային վերլուծությունը և պետական ու մարզային մակարդակներում երիտասարդական ռեսուրսի կառուցվածքի առանձին տարրերի որակական բնութագրիչների ուսումնասիրությունը:

<sup>106</sup> Sté u Чекмарев Э.В. Молодежь - политический ресурс модернизации постсоветской России. Саратов, 2009, 244 с., с.15.

## 2.2. Քաղաքական գործընթացներում երիտասարդության մասնակցության ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ ձևերը

Ժամանակակից երիտասարդական շարժումները կարելի է դասակարգել ամենատարբեր սկզբունքներով: Առաջին տեսակը ոչ քաղաքական հասարակական շարժումներն են, երբորոշը՝ համացանցում իրենց գործունեությունը ծավալող երիտասարդական կազմակերպությունները, երբորոշը կուսակցություններին կից ստեղծված երիտասարդական կազմակերպություններն են, իսկ վերջինը ծայրահեղական տրամադրված երիտասարդների միավորումները: Առաջին խմբին է պատկանում օրինակ «Սթրեյթ Էջ» (Straight Edge) կազմակերպությունը (կրճատ անվանումը sXe), որը ստեղծվել է անցյալ դարի 70-ական թվականներին՝ ի հակադրություն սեքսուալ հեղափոխականության և ազատականության մշակույթի: Շարժման անդամները բացառում էին ալկոհոլի, թմրանյութերի և ծխախոտի օգտագործումը, անկանոն սեռական կապերը և մի շարք այլ սովորույթներ ու մոտեցումներ, որոնք այդ ժամանակ ասոցացվում էին պանկ-ռոկի հետ: Շուտով այն վերածվեց էթնիկ-աշխարհայացքային շարժման, որի անդամները կարևորում էին ինքնակառավարումը և ազատությունը: Այդ շարժման գաղափարախոսությունը բացառում էր նաև խտրականության բոլոր դրսևորումները, առաջին հերթին՝ ռասայական: Շարժումը ազդեցիկ քարոզչական աշխատանքներ չէր վարում և այդ պատճառով լայն տարածում վայելող տարբերանշաններ չունեցավ: Շարժման ամենախիստ կանոնակարգով ապրող խմբավորման անդամները՝ սթրեյթ էջ – հեղ-

լայներները, բացառում էին սուրճի, էներգետիկ ըմպելիքների, ծխախոտի և ոգելից խմիչքների օգտագործումը: Այս շարժման փիլիսոփայության հենասյուններն են բարոյականությունը և ֆիզիկական մաքրությունը: Շուտով շարժման մասնակիցներից շատերը միախառնեցին իրենց կազմակերպության փիլիսոփայությունը քրիստոնեական ուսմունքի հետ՝ ստանալով հոգու և մարմնի մաքրությունը քարոզող գաղափարախոսական սինթեզ:

Այս դասակարգման մեջ կարելի է դիտարկել նաև մի շարք այլ երիտասարդական շարժումներ. դիզգերներ, թրեյսերներ (պարկուրի սիրահարներ), ստալկերներ, ռաստամաններ և այլն:

Համացանցում գործող երիտասարդական միավորումների ամենավառ օրինակը հաքերական միավորումներն են: Դեռևս համացանցի զարգացման վաղ փուլերում՝ տեխնոլոգիական առաջընթացին զուգահեռ ձևավորվում էին ցանցահենական և հաքերական միավորումները: Այսօր արդեն դրանք ունեն բազմաթիվ հետևորդներ և իրականացնում են համաշխարհային տարածում ունեցող մի շարք նախագծեր: Այս կազմակերպությունների անդամները սովորաբար հանդես են գալիս տեղեկատվության հասանելիության օգտին, ինչպես նաև պետական և կորպորատիվ շահերի դեմ: Դրանցից կարելի է նշել Wikileaks պորտալի ստեղծումը, Anonymus միջազգային հաքերական խմբի գործունեությունը և այլն:

Երիտասարդական շարժումների երբորոշ տեսակը կուսակցական երիտասարդական կազմակերպություններն են: Հիմնականում նման երիտասարդական շարժումներին ան-

դամագրումն իրականացվում է հետևյալ տարբերակներով<sup>107</sup>.

- **կուսակցությանը կից** ստեղծվում է կազմակերպություն և նշանակվում ղեկավար, որի խնդիրն է իրականացնել երիտասարդների համախմբումը կուսակցության հովանու շուրջ: 2017 թվականի ԱԺ ընտրությունների արդյունքում Ազգային ժողով անցած չորս կուսակցություններից երեքը (Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, Բարգավաճ Հայաստան կուսակցությունը) ունեն երիտասարդական կազմակերպություններ, որոնք կուսակցական առանձին ստորաբաժանումներ են: Հայ Յեղափոխական Դաշնակցության կազմում գործում են երկու կառուցվածքային միավորներ, որոնք զբաղվում են երիտասարդների հետ տարվող աշխատանքներով՝ երիտասարդական և ուսանողական կազմակերպությունները: «Ելք» նախընտրական դաշինքի անդամների զգալի հատվածը երիտասարդներն են, ուստի կառույցը չունի առանձին երիտասարդական կազմակերպություն: 2018 թվականի արտահերթ ընտրությունների արդյունքում ԱԺ անցած 3 հիմնական կուսակցություններից միայն Բարգավաճ Հայաստանը ունի կայացած երիտասարդական կազմակերպություն, իսկ Լուսավոր Հայաստան կուսակցությունը գտնվում է երիտասարդական կազմակերպության ձևավորման փուլում: Մա ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու, որ քաղաքական կուսակցությունները կարիք ունեն վերանայելու երիտասարդության հետ աշխատանքի իրենց ընտրած ձևաչափը:

<sup>107</sup> Տե՛ս В.К. Мокшин, С.И. Шубин, Политическая социология, Архангельск, 2014, 363 с.

- **Գաղափարական հենքի վրա** միավորվում են երիտասարդական խմբեր, որոնք հետագայում միանում են այս կամ այն քաղաքական ուժին: Այս տարբերակը շատ ավելի հազվադեպ է հանդիպում, որովհետև գաղափարախոսության մշակումը և հանրայնացումը շատ ավելի երկար ժամանակ է պահանջում, քան առաջին տարբերակը: Մույն ճանապարհով է ձևավորվել ազգայնական «Հայազն» կուսակցության պատմությունը. 2009 թվականին ձևավորվելով որպես հասարակական կազմակերպություն՝ հետագայում՝ 2014-ին, այն վերագրանցվեց որպես կուսակցություն: Մույն համատեքստում կարող է նաև դիտարկվել ՄԻԱՄԻՆ շարժումը, որի քաղաքական բաղադրիչն էր ՄԻԱԿ կուսակցությունը: Նշյալ կազմակերպությունը չէր մտնում Հայաստանի Հանրապետական Կուսակցության կազմի մեջ, սակայն հրապարակային հանդես էր գալիս ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանի օգտին: Կազմակերպությունն ուներ բրգաձև կառուցվածք, իսկ աշխատանքները կազմակերպվում էին «հազարապետներ, հարյուրապետներ և տասնապետներ» համակարգի միջոցով:

- Որոշ երիտասարդական շարժումներ իրականացնում են իրենց հավաքագրումը «նորաձև» լինելու հաշվին. մասնակիցների համախմբումն իրականացվում է ոչ այնքան գաղափարական հենքի վրա, որքան ազդեցիկ և ճանաչված առաջնորդների շուրջ: Այլ կերպ ասած՝ **երիտասարդներն իրենց ինքնանույնականացումն իրականացնում են ելնելով ժամանակակից թրենդային հոսքերի թելադրանքից:** Մույն գործընթացի թերևս լավագույն օրինակ կարող է ծառայել հանրային տրանսպորտի սակագնի թանկացման դեմ շարժումը («չեմ վճարելու 150 դրամ» շարժում): Երիտասարդների նախաձեռ-

նությանը ավտոսիբոդները կանգնում էին հանրային տրանսպորտի կանգառներում և իրականացնում անվճար ուղևորափոխադրումներ: Ստեղծվեցին նաև համացանցային պորտալներ, որտեղ յուրաքանչյուրը կարող էր տեղադրել իր ուղերթը: Carpool կոչվող շարժման մասնակիցներից շատերը դրան մասնակցում էին ոչ թե սոցիալական կամ գաղափարական հիմքի վրա, այլ նորաձևությանը հետևելով: Նույն տրամաբանությունը նաև մասամբ տարածվում է Electric Yerevan շարժման վրա, որն ուղղված էր էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ: Մասնակից երիտասարդներից շատերը շարժմանը մասնակցում էին նաև նորաձևության թելադրանքով: Նույն տրամաբանությամբ էր կառուցված նաև 2018 թվականի ապրիլին ՀՀ-ում տեղի ունեցած դեպքերի քաղաքական մեթոդոլոգիան:

- Մի շարք երիտասարդական կազմակերպություններ ստեղծվում են **կարճաժամկետ մասսայական միջոցառումների կազմակերպման համար**: Դրանք չեն հետապնդում որևէ գաղափարական կամ նույնականացման նպատակ, իսկ մասնակիցները հաճախ ներգրավվում են թեմատիկ հագուստի, արսեսուարների միջոցով: Դրանց շարքին կարելի է դասել Armenian Flashmob Division կազմակերպությունը, որը ստեղծվել էր 2010 թվականին և զբաղվում էր կայծակնամբիտների (flashmob) կազմակերպմամբ:

- **Բուհական երիտասարդական կազմակերպությունները** կազմակերպվում են բուհերի ներսում և, որպես կանոն, ունենում հստակ կանոնակարգված հիերարխիկ կառուցվածք: Դրանց գոյությունը ՀՀ-ում ամրագրված է «Կրթության մասին» օրենքով: Ուսանողական ինքնակառավարման մարմինների

անկախության ապահովման նպատակով դրանց կանոնադրության հաստատումը կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանվում է օրենքով, իսկ ֆինանսավորումը և բուհի կառավարման բոլոր մարմիններում առնվազն 25% ներգրավվածությունը սահմանվում է բուհերի տիպարային կանոնադրության մեջ<sup>108</sup>:

- **Ցանցային կամ հովանոցային կազմակերպությունների** մասին խոսելիս թերևս անհրաժեշտ է հիշատակել Հայաստանի Երիտասարդության Ազգային Խորհուրդը, որը հիմնադրվել է 1997 թվականին: Միավորելով շուրջ 60 երիտասարդական հասարակական, քաղաքական և ուսանողական կազմակերպություններ՝ այն համարվում է ամենամեծ հովանոցային երիտասարդական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում:

- **Ծայրահեղական կազմակերպությունները**, ի տարբերություն նախորդ տեսակների, որպես կանոն, բացասական են ընկալվում հասարակության կողմից: Վերլուծաբանները առանձնացնում են դրանց կազմավորման երեք հիմնական փուլեր՝ պատճառային, կազմակերպչական և գործնական: Առաջին փուլում ձևավորվում է ծայրահեղական կազմակերպության ձևավորման պատճառը՝ հասարակական բողոք, մասնակցության ճգնաժամ, երիտասարդության որոշակի խմբի մարգինալացում և այլն: Երկրորդ փուլում տեղի է ունենում երիտասարդների միավորումը, որից հետո՝ երրորդ փուլում իրականացվում են բուն ծայրահեղական գործողությունները: Մի շարք հետազոտողներ պնդում են, որ ծայրահեղա-

<sup>108</sup> Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 10:



կան երիտասարդական խմբերը ձևավորվում են բացառապես քաղաքներում՝ ծայրամասային, աղքատ թաղամասերում: Նմանօրինակ «շարժում» կարելի է անվանել 2016 թվականի հուլիսին Երևանում ՊՊՕ գնդի գրավման ժամանակ ծագած զանգվածային անկարգությունները Երևանի «Սարի թաղ» կոչվող թաղամասում, որոնք հիմնականում կրում էին կենցաղային բողոք, քանի որ ամբողջ թաղամասի գազամատակարարումը դադարեցվել էր անվտանգության նկատառումներով:

Տեղեկատվական դարաշրջանի զարգացմամբ պայմանավորված եվրոպական երկրները ենթարկվում են սրընթաց փոփոխությունների տնտեսական, տեխնոլոգիական, քաղաքական և հասարակական կյանքում: Այս գործընթացները այնքան արագ են և անդառնալի, որ որոշ գիտնականներ դրանց նկարագրման համար օգտագործում են «հետինդուստրիալ», «հետֆորդիստական», «պոստմոդեռն» կամ «ինֆորմացիոն հասարակություն» հասկացությունները: Անկախ գիտական հանրության կողմից այս եզրույթների ընդունված լինելուց՝ բոլոր գիտնականները համաձայնում են այն պնդմանը, որ S2S գործիքակազմն օգտագործող հասարակությունները խիստ տարբերվում են հետպատերազմյան հասարակություններից: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում ներկայացնել եվրոպական մայրցամաքում տեղի ունեցած երիտասարդական շարժումները, որոնք էապես ազդել են հանրային քաղաքականության մոդեռնիզացման վրա:

Երիտասարդության տեսանկյունից կարելի է ասել, որ ժամանակակից արագ փոխվող հասարակարգը՝ իր սրընթաց տեխնոլոգիական և կառուցվածքային փոփոխություններով

հասարակության մեջ խթանում է նաև խորքային մոդեռնիզացիոն գործընթացներ:

Երիտասարդության շրջանում փոփոխությունների խթանիչ գործոններից է համարվում դպրոցական կրթության երկարացումը: Դրա արդյունքում երիտասարդները ավելի ուշ են մուտք գործում աշխատաշուկա և, որպես արդյունք, ավելի երկար ժամանակ ֆինանսական կախում ունեն ծնողներից<sup>109</sup>:

Մեկ այլ խթանիչ գործոն է ընտանիքի ինստիտուտի փոփոխությունը. վիճակագրական հետազոտությունները վկայում են, որ ավանդական ընտանիքներից զատ այժմ մեծ տեսակարար կշիռ են կազմում ամուսնալուծված ընտանիքները, որտեղ երեխային խնամում է ծնողներից միայն մեկը: Սա պոստմոդեռն հասարակարգերում անձի ազատությունների և ազատականության դերի բարձրացման հետևանքն է: Այդ դերը բարձրացել է ի հաշիվ հասարակության, համայնքի և միջանձնային հարաբերություններում պարտավորությունների նվազման:

Ակնհայտ է, որ գլոբալացման և, մասնավորապես, եվրոպականացման գործընթացը կրնձեռի շատ ավելի լայն հնարավորություններ երիտասարդների՝ լավ կրթված և մրցունակ խմբերին, մինչդեռ մնացածի համար այն կարող է դառնալ աշխատաշուկայում պահանջարկ չունենալու և հասարակության մեջ մարգինալացվելու պատճառ:

Մեկ այլ ահագնացող խնդիր է ԵՄ անդամ գրեթե բոլոր երկրների համար բնակչության ծերացումը: Մեծահասակներ

---

<sup>109</sup> Տե՛ս Մամիջանյան Հ., Եվրոպական երիտասարդական շարժումների դերը երիտասարդության քաղաքական սոցիալականացման մեջ. Երևան. 2017. Տարածաշրջան և աշխարհ, էջ 35-40:

րի և չափահաս երիտասարդների՝ օր-օրի վատթարացող հարաբերակցությունը ծնում է «միջսերնդային պայմանագրի» փոփոխություն, որը բացասական է ազդում տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքի վրա: Չմանրամասնելով տնտեսական հետևանքները, որոնք ակնհայտ են, որպես քաղաքական և սոցիալական ազդեցության օրինակ կարող է դիտարկվել BrExit արշավը. ըստ հանրաքվեի ընթացքում իրականացված հարցումների երիտասարդ բրիտանացիների ճնշող մեծամասնությունը դեմ է արտահայտվել ԵՄ կազմից հեռանալու որոշմանը, սակայն մեծահասակ ընտրողների զգալի տեսակարար կշռի հետևանքով՝ փաստացի մեծահասակները կայացրեցին մի որոշում, որի հետևանքները հիմնականում ընկնելու են երիտասարդների ուսերին:

Եվրոպական գիտական դպրոցը սահմանազատում է երիտասարդական հետազոտությունների մի քանի տրամաբանություն: Առաջինը երիտասարդությունը դիտարկում է որպես տարիքային խումբ՝ 15-25, իսկ երբեմն 14-30: Սակայն երիտասարդությանը որպես տարիքային խումբ դիտարկելով՝ գիտնականները կանգնում են խնդրի առաջ. ըստ հետազոտությունների երիտասարդները իրենց զբաղվածությամբ բաժանվում են «ուսանողների, որոնք աշխատում են», «երիտասարդ աշխատակիցների, որոնք սովորում են», «ուսանողների», «երիտասարդ աշխատողների» և «գործազուրկների»: Նշված դասակարգման պարագայում բացակայում են տարիքային ընդհանրությունները, այսինքնով երիտասարդությանը միայն որպես տարիքային խումբ դիտարկելը սխալ է:

Գիտնականների մեկ այլ խումբ երիտասարդությանը դիտարկում է որպես ռիսկային խումբ: Ըստ ուսումնասիրությունների երիտասարդները ավելի հակված են մտավոր հի-

վանդությունների, ակտիվիզմի և թմրամոլության: Այս համատեքստում հետաքրքրական է «ենթադասի» ֆենոմենը: Որոշ երիտասարդներ՝ ներգրավվելով անկանոն սեռական հարաբերությունների մեջ դառնում են չալանավորված և/կամ վաղաժամ հղիությունների քանակի բարձրացման պատճառ, որը բերում է առանց ծնողական հոգածության կամ առանց հայրական ծնողական խնամքի երեխաների թվի աճին: Այս ցուցանիշը, իր հերթին բերում է հանցագործությունների, դաժանության, թմրամոլության և նմանօրինակ արատավոր երևույթների քանակի աճին: Հենց այս երևույթներով կաղապարված մարդկանց խումբն էլ կազմում է «ենթադասը», որը ունի ինքնավերարտադրման հատկություն: Ֆրանսիայի մեծ քաղաքներում Banlieue կոչվող արվարձանների առաջացումը կարող է ծառայել այս երևույթի խոսուն օրինակ:

Մեկ այլ տեսանկյունից «երիտասարդությունը» հաճախ դիտարկվում է որպես անցման շրջան:

Գաղտնիք չէ, որ ԵՄ երկրներում, ինչպես և ամբողջ աշխարհում երիտասարդության մասնակցությունը քաղաքական գործընթացներին ընտրությունների միջոցով ցածր մակարդակում է: Սակայն եթե ընդլայնենք քաղաքական մասնակցության ընկալումները՝ դրանց մեջ ներառելով երիտասարդական շարժումները, ապա պատկերը տրամազծորեն այլ է: Նախ՝ սահմանենք, թե ինչ է շարժումը: Գիտական գրականության մեջ հանդիպում են հետևյալ հատկանիշները ներառող սահմանումներ<sup>110</sup>.

<sup>110</sup> St' u Fominaya F., C., Social Movements and Globalization: How protests, occupations and uprisings are changing the world. Sociology for Globalizing Societies, Palgrave Macmillan, London, 2014.

- հավաքական կամ միացյալ գործողություն,
- արտա-ինստիտուցիոնալ կամ ոչ ինստիտուցիոնալ գործողություններ,
- փոփոխությունների պահանջ
- պահանջի հասցեատեր՝ կառավարություն, կազմակերպություններ, քաղաքական խմբեր և այլն,
- կազմակերպվածության որոշակի աստիճան,
- որոշակի շարունակականություն,
- հավաքական համերաշխություն կամ հավաքական նույնականացում:

Անցած դարի կեսերից սկսած երիտասարդական շարժումները մեծ թափ են առել Եվրոպայում, սկսած 60-ականների մշակութային հեղափոխությունից մինչև էկոլոգիական և հակաավտորիտար շարժումները: Ինչ խոսք, երիտասարդական շարժումները չեն սահմանափակվում միայն բարեփոխիչ պահանջներով: Հայտնի են մի շարք հետադիմական և նեոնացիստական շարժումներ Եվրոպայի մի շարք երկրներում: Մա, թերևս, պայմանավորված է երիտասարդների համեմատական ավելի սուր արտահայտված հուզականությամբ և ստատուս քվոն փոփոխելու մղումով: Ըստ հետազոտության՝ բոլոր ծայրահեղական շարժումների ներկայացուցիչները՝ ծայրահեղական աջականներից մինչև անարխիստներն ու բնապահպանները, վստահ էին, որ իրենք նպաստում են աշխարհը ավելի լավ կենսավայր դարձնելուն: Մեկ այլ պատճառ է սոցիալական անհավասարությունը, բարիքների անհավասարաչափ բաշխումը և այլն: Պատճառ է դիտարկվում այն փաստը, որը երիտասարդները շատ ավելի քիչ կորցնելու բան ունեն և ավելի անհանդուրժող ու ծայրահեղական են քաղա-

քական և հասարակական գործընթացներում<sup>111</sup>:

Հաշվի առնելով նշված և մի շարք այլ անհատական դրդապատճառները՝ տրամաբանական է, որ դրանք պիտի բերեն երիտասարդների սոցիալականացման, համախմբման և ձևավորեն շարժումներ: Որպես հարթակ հաճախ ծառայում են համալսարանները, որտեղ գործում են ֆորմալ և ոչ ֆորմալ երիտասարդական կազմակերպություններ: Դրանց շրջանակում են կազմակերպվում երիտասարդական շարժումների զգալի մասը՝ օգտագործելով ժամանակակից տեխնիկական հնարավորությունները՝ սոցիալական ցանցեր, հեռահաղորդակցություն և այլն: Օրինակ՝ «շղթայական կարճ հաղորդագրությունները» (chain sms), որոնք օգտագործվեցին Մադրիդյան պայթյուններից հետո կազմակերպված 13-M շարժման ժամանակ<sup>112</sup>:

Երիտասարդները զգալիորեն ավելի սեղծագործ են մտնում իրենց քաղաքական և հասարակական ակտիվության կազմակերպմանը: Մասնավորապես, հետխորհրդային եվրոպական երկրներում քաղաքական կուսակցությունները հաճախ երիտասարդների մոտ նույնացվում են ավտորիտար հասարակարգի ժամանակ գործող միակուսակցական համակարգի հետ և հենց այդ պատճառով երիտասարդները ձգտում են գտնել քաղաքական ինքնաարտահայտման այլ խողովակ-

<sup>111</sup> St' u Giddens A., *Modernity and Self-Identity: Self and Society in the Late Modern Age*, Stanford, CA: Stanford University Press, 1991:

<sup>112</sup> St' u Fominaya F., Cristina ,*"Autonomous Movement and the Institutional Left: Two Approaches in Tension in Madrid's Anti-globalization Network"*, South European Society & Politics, Vol 12, 3: 335-340, 2007:

ներ: ԵՄ այն երկրներում, որոնք չեն կիսում խորհրդային անցյալը՝ երիտասարդները հաճախ կուսակցությունները ընկալում են որպես ընտրանու ակումբներ, որոնք դժվար են ենթարկվում փոփոխությունների:

Ինստիտուցիոնալ քաղաքականության նկատմամբ մերժողականությունից բացի Եվրոպայի հասարակական հորիզոնում առկա է ևս մի գաղափարական առճակատում, որը դեռևս 1960-ական թվականներից ակտիվորեն տեղի է ունենում անկախ շարժումների և համեմատաբար ինստիտուցիոնալացված ձախակողմյան երիտասարդական դերակատարների միջև: Այդ փաստը վկայակոչում է, որ երիտասարդության պասիվ մասնակցությունն ինստիտուցիոնալ քաղաքական կյանքին չի վկայում երիտասարդության քաղաքական անտարբերության կամ ներգրավման ցանկության նվազման մասին: Անկախ երիտասարդական շարժումները զգալի դերակատարում են ունեցել ֆեմինիստական, խաղաղասիրական, շրջակա միջավայրի պաշտպանության և ուսանողական մի շարք բողոքների ակցիաներում, ուստի երիտասարդության մասնակցության մակարդակը հանրային նշանակություն ունեցող հարցերին շատ բարձր է<sup>113</sup>:

Անկախ երիտասարդական շարժումները սպառնում են չեղյալ համարել ներկայացուցչական դեմոկրատիայի և մեծամասնության որոշիչ կարծիքի օրենքները՝ պաշտպանելով մասնակցային կառավարման մոդել, որը հիմնված է ուղղակի ժողովրդավարության և ինքնակառավարման վրա: Մույն մո-

<sup>113</sup> Stéu Bendit R., Youth Sociology and Comparative Analysis in the European Union Member States, German Youth Institute, Munich, 2006, 79 p.

դելի հորիզոնական (ոչ հիերարխիկ) կառուցվածքը, կոնսետուսի (եթե հնարավոր է) կամ ընդհանուր նվազագույն պահանջների բավարարման տրամաբանությամբ որոշումների կայացումը զգալիորեն հակասում է ընդունված ժողովրդավարական նորմերին: Կառուցվածքային կարգապահության թույլ զարգացվածության պատճառով նմանօրինակ շարժումների պարագայում էական նշանակություն են ունենում զարգացած սոցիալական ցանցերը և արագ տեղեկատվական հոսքերը, որոնք կազմակերպվում են նորագույն տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի կիրառմամբ: Դրանց օգտագործումը հաճախ բերում է նրան, որ այս շարժումները արագ մոբիլիզացվելու շատ ավելի մեծ պոտենցիալ ունեն: Օրինակ՝ իսպանական Ինդիգնադոս շարժման մասնակիցները մերժում էին ինստիտուցիոնալ ձախակողմյան կառույցների մասնակցությունը (որպես կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ ոչ թե որպես անհատներ): «Աքոմպադասոլ»-ի հիմնական գաղափարներից էր «աններկայացվածությունը»՝ անհատները ներկայացնում են միայն իրենք իրենց, այլ ոչ թե խմբեր կամ ֆորմալ կազմակերպություններ: Նույն երևույթը նկատվում էր նաև 2015 թվականի ամռանը Երևանում իրականացված Electric Yerevan շարժման ընթացքում:

Անցած դարի վաթսուհանյակ թվականների անկախ երիտասարդական շարժումների գաղափարական կապերը այսօր էլ մեծ ազդեցություն ունեն հասարակական կյանքում: Խոսքը գնում է մի շարք առանցքային գաղափարների մասին, որոնք այժմ մեծապես օգտագործվում են ֆեմինիստական և կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված շարժումներում: Օրինակ՝ «Անձնականը քաղաքական է» կոչը, ո-

րի հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ քաղաքական փոփոխությունների ապահովման համար անհրաժեշտ է փոխել հասարակության ամբողջ կենսոլորտը, կենսակերպը: Այս գաղափարախոսության կողմնակիցները պնդում են, որ անհատի կենսակերպը, յուրաքանչյուր անհատի ամենօրյա խնդիրները փոխկապակցված են քաղաքական անցուղարձի հետ: Մեկ այլ օրինակ է այն գաղափարախոսությունը, որում նշվում է, թե հասարակությունը երբեք չի կարողանա ամբողջությամբ օգտագործել իր պոտենցիալը, քանի դեռ այն չի գործում ամբողջական փոխօգնության, ներգրավվածության և քաղաքացիների հավասարության սկզբունքներով:

Երրորդ գաղափարը այն է, որ հասարակական շարժումների անհրաժեշտ է անկախություն և սոցիալական տարածք իրենց քննադատության, նոր ռազմավարությունների և ընդունելի այլընտրանքների մշակման համար: Այլ կերպ ասած՝ հասարակական շարժումները պիտի ազատ լինեն հեգեմոն իշխանության կառուցվածքային միավորներից: Չորրորդ գաղափարը քարոզում է այն պնդումը, որ հասարակությունը չի կարող սպասել ապագա հեղափոխություններին. որպեսզի բարելավի իր կյանքը՝ փոփոխությունները անհրաժեշտ է կատարել հենց այսօր:

Նշված բոլոր գաղափարների համար ընդհանրական է ժողովրդավարացման պահանջը: Երիտասարդության շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումների արդյունքում ժողովրդավարական ինստիտուտների հանդեպ վեր հանված թերահավատությունը, և Եվրոպայում երիտասարդական անկախ շարժումների կողմից ժողովրդավարության կարևորումը հետաքրքրական հակադրություն է ձևավորում, որը խորը

ուսումնասիրման կարիք ունի: Նմանօրինակ երևույթներն ունեն լայն աշխարհագրական և ժամանակագրական տարածում՝ սլովենական «rock the vote»-ից մինչև սերբական «Otpor»-ը, ուկրաինական «PORA»-ից մինչև վրացական «KMARA!»-ն: Այս բոլոր շարժումները և մի շարք այլ գունավոր հեղափոխությունների ժամանակ սկսված երիտասարդական շարժումներն ունեն բազմաթիվ ընդհանրություններ: Նմանություն է նկատվում նաև աշխարհի տարբեր ծայրերում ծագած այն երիտասարդական շարժումների հետ, որոնք պարունակում էին սոցիալական արդարության, կապիտալիստական հասարակարգի անարդարությունների վերջման, ժողովրդավարության հաստատմանն ուղղված կոչեր (Իսլանդական «պղինձների և թավաների» շարժումը, պորտուգալական «Geracao a Rasca» շարժումը, հունական «Syntagma» շարժումը, ինչպես նաև Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում և ԱՄՆ-ում ծագած «Occupy» շարժումները)<sup>114</sup>:

Երիտասարդության քաղաքական մոբիլիզացիայի մեկ այլ տարածված պատճառ են այն սոցիալական խնդիրները, որոնց հետ բախվում են երիտասարդները: Դրանք հիմնականում ներառում են սոցիալական «անորոշության» դեմ պայքարի՝ պետական պարտքի մեծացման, երիտասարդության շրջանում գործազրկության բարձր մակարդակի, մատչելի անշարժ գույքի բացակայության և մի շարք այլ սոցիալական խնդիրներ: Ժամանակակից նեոլիբերալ կապիտալիստական աշխարհակարգի դեմ 2005 և 2006 թվականներին կազմա-

<sup>114</sup> St' u Stevanson J. M., Listening to Radicals: Attitudes and Motivations of Young People Engaged in Political and Social Movements Outside of the Mainstream in Central and Nordic Europe, British Council, 2011, 32 p

կերպվել են նաև մի շարք ներքուհական երիտասարդական շարժումներ Դանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում և Հունաստանում: Հիմնական պատճառ է ծառայել ուսման վարձերի աճը, որը ուսանողները կապում են համաշխարհային ճգնաժամի և սխալ ֆինանսավարկային քաղաքականության հետ<sup>115</sup>:

Կատարված ուսումնասիրություններից կարող ենք փաստել, որ Եվրոպայում երիտասարդության քաղաքական մասնակցության գործոնը աննկատ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ երիտասարդական քաղաքական մոբիլիզացիան չի վերաճում մասսայական ցույցերի և բողոքների: Այնուամենայնիվ, որպես կանոն, նման բողոքի ակցիաներն ունեն որոշակի ուղղորդված կազմակերպական կառուցվածք: Եթե երիտասարդների քաղաքական սոցիալիզացիան դիտարկել ոչ թե գուտ ինստիտուցիոնալ, այլ արտաինստիտուցիոնալ տրամաբանության դիտանկյունից, կնկատվի երիտասարդության մասնակցության և քաղաքական սոցիալականացման բարձր մակարդակ:

Քաղաքական գործընթացների թվում ընտրական քաղաքական գործընթացը, ընդհանուր առմամբ, բնութագրվում է որպես հիմնականներից մեկը և դրանում երիտասարդների մասնակցությունը չէր կարող դուրս մնալ մեր հետազոտության շրջանակներից: Ընտրական գործընթացները ուսումնասիրելիս գիտնականների հիմնական ուշադրության կենտրոնում է ընտրական վարքագիծը, ինչը բնականորեն օրինաչափ

<sup>115</sup> Stéu Vanandurel M., Amerio A., Stafseng O. And Tap P., Young People and Associations in Europe, Council of Europe, 1996:

է:

Ընտրական ակտիվությունն ուղղակիորեն կապված է երկրում ժողովրդավարության զարգացման, խոսքի ազատության, քաղաքացիների, այդ թվում՝ նաև երիտասարդ սերնդի իրավունքների և ազատությունների իրականացման հետ: Մեր ուսումնասիրությունն ուղղված է ընտրական գործընթացում երիտասարդների (բնակչության ընտրագանգվածի նոր խմբին, որը, ինչպես կարելի է պատկերացնել, ի սկզբանե և հավանականորեն, պոտենցիալ պատրաստ է սուզվել ընտրական ակտիվության մեջ) դերին:

Ընտրությունները կարող են մեկնաբանվել՝ որպես երկրում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների վերաբերյալ երիտասարդների շրջանում ձևավորված հայացքների յուրատեսակ ցուցանիշ: Երիտասարդներն այսօր կազմում են Հայաստանի ընտրագանգվածի զգալի մասը: Կյանքի ուղու սկզբում ստացած գիտելիքները, փորձը, քաղաքացիության և իր երկրի համար պատասխանատվության զգացումը երիտասարդն իր հետ կտանի ողջ կյանքի ընթացքում, դրանց հենվելով կղաստիարակի հաջորդ սերունդները: Քաղաքացիական հասարակության և իրավական պետության հիմքը շուտով կկազմեն նրանք, ովքեր այժմ 14-ից մինչև 29-ը տարեկան են <sup>116</sup>:

Երիտասարդները պասիվ ընտրական իրավունք ունեն 16 տարեկանից՝ Հայաստանում, 18 տարեկանից՝ Ռուսաստանում, ԵՄ, ԱՄՆ-ում (մինչև 1971 թ., տարիքային սահմանա-

<sup>116</sup> Stéu Радченко А.Ф. Молодежь в социально-политических процессах // Социология власти. - 2008.-№3, с.134

փակումը 21 տարեկան էր) և այլն: Մի շարք երկրներում ՀՀ-ի նման, այն իջեցված է մինչև 16 տարեկանը (Լատինական Ամերիկայի որոշ երկրներում) կամ բարձրացված է, ինչպես Իսպանիայում՝ մինչև 25 տարեկանը: Դա պայմանավորված է տարածաշրջանների սոցիալ-մշակութային և քաղաքական զարգացման առանձնահատկություններով:

Ուսումնասիրությունները փաստում են, որ երիտասարդական միջավայրն այժմ ձևավորել է երկու բնեռայնորեն հակադիր միտում. մի կողմից՝ երիտասարդ սերնդի ձգտումն է, մասնակցել երկրի քաղաքական կյանքին և մյուս կողմից՝ անտարբերությունն է երկրում տեղի ունեցող բոլոր քաղաքական գործընթացների նկատմամբ: Ընդգծենք, որ վերջին միտումն ավելի լայն մասշտաբ և հետևանքներ ունի:

Հետաքրքրական է՝ որո՞նք են ընտրարշավներին երիտասարդության չմասնակցելու պատճառները: Նրանց կազմակերպիչները անց են կացնում ստեղծված իրավիճակի մանրակրկիտ վերլուծություն և ձգտում հաշվի առնել քաղաքագետներ ու երիտասարդության հարցերի փորձագետների կարծիքը: Առանձնացվում են 7 հիմնական խնդիրներ, որոնցով պայմանավորվում է ընտրություններին և հանրաքվեներին երիտասարդների մասնակցության կայուն շարժառիթների բացակայությունը:

Դրանցից առաջինն այն է, որ այսօրվա երիտասարդությունը, որը չի ապրել տոտալիտար հասարակությունում, չի կրել նրա սահմանափակումներն ու արգելքները, չգիտի ժողովրդավարական ազատությունների իսկական արժեքը: Ժողովրդավարական հասարակության պայմաններում ծնված երիտասարդությունը ձգտում չունի պայքարելու այդ հասար-

րակության ձեռքբերումների համար, բացակայում են կայուն քաղաքական շահերն ու նպատակները, իսկ արդյունքում նա չի հասկանում քաղաքական առաջնորդներին, քաղաքական կուսակցություններին և այլոց ձայն տալու կարևորության աստիճանը<sup>117</sup>:

Սոցիոլոգիական ուսումնասիրությունները կազմել են դատողությունների մոդելներ, որոնց համաձայն երիտասարդությունը բացատրում է ընտրություններին իր չմասնակցելու պատճառները: Երիտասարդության առաջին սկզբունքային դիրքորոշումն այն է, որ նա չի հավատում որևէ մեկին: Երիտասարդության նման արսենտիզմը տվյալ դեպքում պայմանավորված է գործող իշխանության և ընտրությունների ինստիտուտի բացասմամբ: Ընտրությունները նախօրոք հաշվարկված և կանխատեսելի գործընթաց են, ինչի մեխանիզմը երիտասարդ ընտրողների կարծիքով, քաջ հայտնի է: Փորձառու մեթոդաբանների թիմեր գրում են քաղաքական թեկնածուի ելույթները, թուղիկներ են տպում, սովորեցնում են աշխատել ընտրագանգվածի հետ, արդյունքում՝ հաղթանակը ապահովված է լինում: Այս դեպքում, երիտասարդները արսենտիկ են ու այդ պատճառով նրանք ընդհանրապես հրաժարվում են մասնակցել ընտրական քարոզարշավներին:

Երկրորդ մոդելը ձևակերպվում է այսպես. «ես ընտրությունների չեմ գնում, որովհետև իմ ձայնը ոչինչ չի փոխելու»: Երիտասարդների այս խմբի չմասնակցելը ընտրական գործընթացին բացատրվում է քաղաքական ասպարեզում այն ու-

<sup>117</sup> St' u Шурбе В.З. Молодежь и молодежная бюрократия: качество взаимодействия //Социология власти. - 2008. - № 3, с.123-126:

ժի բացակայությամբ, որն ունակ կլիներ հստակ ձևակերպել երիտասարդության շահերը: Երիտասարդ սերունդը հակված է մտածել, որ ընտրություններին գնալը՝ դատարկ ժամավաճառություն է, չէ՞ որ ամեն ինչ վաղօրոք որոշված է, իսկ մի երիտասարդի չգալը քվեարկության արդյունքների վրա ոչ մի կերպ չի արտահայտվելու:

Երիտասարդների նման վարքագծի երրորդ մոդելը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք քաղաքականությամբ ընդհանրապես չեն հետաքրքրվում: Այս խմբի երիտասարդների մասին կարելի է ասել, որ նրանք ընկղմված են սեփական գործերի մեջ, և քաղաքական կյանքը նրանց բոլորովին չի հետաքրքրում: Մա հարմար դիրքորոշում է, որը համատեղում է վարքագծի և՛ առաջին, և՛ երկրորդ մոդելները:

Երիտասարդների՝ ընտրություններին չմասնակցելու երկրորդ խնդիրը պայմանավորված է երիտասարդության ճնշող մեծամասնության իրավական գիտելիքների ցածր մակարդակով, նրանք պատկերացում չունեն ժողովրդավարության սկզբունքների մասին, ինչպես նաև իրավական պետության սահմանադրական կառուցվածքի մասին: Երիտասարդներին չի հետաքրքրում երկրում տիրող քաղաքական իրավիճակը: Այսօրվա 18-ամյա երիտասարդը քաղաքականապես և իրավապես անգրագետ է, իսկ հասարակության նման անդամի մասնակցությունն ընտրություններին կրում է ձևական ու չգիտակցված բնույթ:

Երրորդ խնդիրն այն, որ երիտասարդությունը մեծ մասամբ ապաքաղաքականացված է և ընտրությունների ինստիտուտը աննշան տեղ է գրավում աճող երիտասարդության արժեքների և գերադասությունների համակարգում:

Այստեղ կարևոր է նաև հաշվի առնել, որ մի շարք քաղաքագետներին ձեռնտու է երիտասարդներին պահել անտեղյակության մեջ, այդ պատճառով նրանք ակտիվորեն ողջունում են տարբեր փառատոնների, համերգների անցկացումը, իսկ քաղաքական ակցիաները՝ արգելում:

Որպես հաջորդ խնդիր առանձնացվում է այն է, որ երիտասարդությանը բավական հեշտ է մանիպուլացնել, ինչից օգտվում են ընտրություններ ու հանրաքվեներ կազմակերպողները: Աշխատանքի պոպուլիստական մեթոդների կիրառումը (այդ թվում՝ տարբեր կարգի շոուներ) նպաստում է դրական զգացմունքային ֆոնի ձևավորմանը, ինչը իրականացվում է քվեարկության ժամանակ, որից հետո երիտասարդության մասին «բարեհաջող» մոռանում են մինչև հաջորդ ընտրությունները: Որպես հետևանք, երիտասարդը զգում է, որ իրեն ուղղակի օգտագործել են: Իսկապես, այսօր երիտասարդությամբ և նրանց խնդիրներով լրջորեն զբաղվողների թիվը քիչ է: Օրինակ, իրենց նախընտրական ծրագրերում ընտրովի պաշտոնների թեկնածուները մեծ ուշադրություն են դարձնում տարեց մարդկանց խնդիրներին, շեշտը դնում բնակչության այդ հատվածի սոցիալական և տնտեսական աջակցություն վրա, և ապավինում են նրանց ձայներին՝ բոլորովին մոռանալով երիտասարդների մասին:

Հինգերորդ խնդիրը պայմանավորված է երիտասարդների կողմից քաղաքական ինստիտուտների հանդեպ վստահության պակասով, արդարության, ընտրությունների արդյունավետության մեջ հիասթափությամբ, օրենսդրական ակտերի դեկլարատիվ բնույթով և նրանց գործողության անարդյունավետությամբ:



Մյուս խնդիրը վերաբերում է տնտեսական իրադրությա-  
նը: Ցածր աշխատավարձ, բարձր գործազրկություն, բարձր  
գներ և այլն: Սա ոչ միայն ծայրաստիճան զայրացնում է, այլ  
նաև պարզապես վրդովում է մարդկանց: Շատերը ոչ թե ապ-  
րում, այլ մի կերպ գոյատևում են: Այդ պատճառով նրանց հա-  
մար կարևոր չեն ոչ առաջիկա ընտրությունները, ոչ թեկնա-  
ծուները, ոչ էլ նրանց նախընտրական ծրագրերը: Վճարովի  
կրթությունն անհնարին է դարձնում անապահով ընտանիք-  
ներից երիտասարդների ուսումը: Դրա արդյունքում ձևավոր-  
վում է երիտասարդների աբսենտիստական վարքագիծ:

Յոթերորդ խնդիրը կապված է հասարակության զգալի  
մարզինալացման հետ: Հիմնականում երիտասարդների ու  
նրանց ընտանիքների սոցիալական կարգավիճակի մակար-  
դակն է ձևավորում ընտրական գործընթացի նկատմամբ վե-  
րաբերմունքը: Միջին և վերին դասերի միջև եղած տարբե-  
րությունը չափազանց մեծ է ու անհաղթահարելի: Հասարա-  
կության մարզինալացումը կարելի է համարել մեր ժամանա-  
կին բնորոշ հատկանիշներից մեկը: Մարզինալացում ասելով՝  
հասկանում ենք առանձին անհատների կողմից որոշակի  
խմբավորումների հետ իրենց նույնացման կորուստի օբյեկ-  
տիվ գործընթացը և որոշակի խմբերի սոցիալական կարգա-  
վիճակի փոփոխությունը՝ նրանց հասարակական ստատու-  
սի, եկամուտների մակարդակի և այլ փոփոխությունների  
պատճառով: Հանդիսանալով տնտեսության կառուցվածքա-  
յին փոփոխությունների, բնակչության և ժողովրդի կենսամա-  
կարդակի ընդհանուր անկման հետևանքը՝ փորձագետների  
գնահատականներով մարզինալացումը հասնում է բնակչու-  
թյան ընդհանուր թվաքանակի 15%-ին: Մարդկանց այդ խմբում

են, այսպես կոչված, «նոր աղքատներն» ու գործազուրկները:  
Որպես հետևություն, ավելի հաճախ և գիտակցաբար ընտ-  
րություններին քվեարկում են հասարակության ավելի կայուն  
դիրքի տեր մարդիկ (վերին և միջին դասերի), քան ստորին  
խավերի անդամներ, որոնք կորցրել են հավատն առ այն, որ  
նոր քաղաքական գործիչների գալուց հետո իրենց դրությունը  
կարող է փոխվել: Կարծում ենք՝ ընտրագանգվածի հետաքրք-  
րության ձևավորման անհրաժեշտ պայմանը պետք է լինի եզ-  
րային դասերի միջև հեռավորության կրճատումը և միջին  
խավի ուժեղացումը:

Իսկ ի՞նչ միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել, որ երիտա-  
սարդությունը ներգրավվի քաղաքականության մեջ, ինչպե՞ս  
է կարելի շահագրգռել և աշխուժացնել նրա ընտրական ակ-  
տիվությունը:

Ներկայացնենք մի քանի դատողություններ այս հարցով:  
ԱՄՆ-ում և ԵՄ երկրներում լայն տարածում է գտել կամավո-  
րության պրակտիկան, այսինքն, երիտասարդության կամա-  
վոր և անձնուրաց մասնակցությունը հասարակական տար-  
բեր տեսակի ծրագրերում: Օրինակ՝ Ռուսաստանում հասա-  
րակական-քաղաքական կազմակերպությունները դեռ լայն  
տարածում չեն գտել, ինչի հետևանքն է երիտասարդության  
մակերեսային հետաքրքրությունը քաղաքական գործընթաց-  
ների նկատմամբ և հասարակական շարժումներում ակտի-  
վություն դրսևորելու հարցում: Նույնը չենք կարող ասել ՀՀ  
հասարակական դաշտի մասին, որը գոնե ձևական, իսկ որոշ  
դեպքերում նաև բովանդակային առումով գտնվում է զար-  
գացման բավականաչափ բարձր փուլում: Երիտասարդու-  
թյան այն մասը, ում հասարակական գործունեության հմտու-  
թյան

յունները ձևավորված են, հստակ հետաքրքրություն է ցուցաբերում քաղաքականության նկատմամբ և ընտրական ակտիվության բարձր մակարդակ է դրսևորում: Նախընտրական քարոզարշավների ընթացքում ընտրողների վրա թափվող տեղեկատվության հեղեղն անհրաժեշտ է համակարգել, ի մի բերել ու ամփոփել, կողմնորոշվել քարոզչական նյութերում: Անհրաժեշտ է պարբերաբար կանոնավոր լուսավորչական աշխատանք անցկացնել:

Գործնական միջոցների թվին, որոնք կարող են գրավել երիտասարդության ուշադրությունը դեպի քաղաքական կյանքն ու, մինևույն ժամանակ, ձևավորել ընտրողների հմտությունները, արժե դասել ուսանողական կամ դպրոցական համայնքի ինքնակառավարման ձևերից՝ երիտասարդական խորհրդարանը, որի դերը քննարկված է առանձին ենթագլխով:

Առաջիկա ընտրությունների մասին տեղեկատվության մեծ մասը (մոտ 90%), երիտասարդները ստանում են լրատվամիջոցներից: Անհրաժեշտ է ստեղծել կանոնավոր (ցանկալի է շաբաթական) հեռուստատեսային հատուկ ծրագրեր, որոնք ուղղված լինեն պետական կառուցվածքի խնդիրների քննարկմանը, ընտրական համակարգերին, քաղաքացու իրավունքներին ու պարտականություններին, ընտրողներին մանիպուլացնելու մեթոդներին, «սև PR-ի» տեսակներին և այլն: Եթերում նմանաբովանդակ գրույցների անհրաժեշտ է հրավիրել արհեստավարժ քաղաքական գործիչների, հայտնի արվեստագետների, գիտության գործիչների, որոնց գործունեությանն երիտասարդությունը ոչ միայն հետաքրքրությամբ է հետևում, այլև ականջալուր է նրանց: Անհրաժեշտ է ավելի

շատ երիտասարդական միավորումներ ստեղծել, երիտասարդական ակցիաներ կազմակերպել և այլն:

Երիտասարդության ընտրական ակտիվության բարձրացմանը կարող է նպաստել իշխող հասարակական ինստիտուտներից նրանց օտարացման հաղթահարումը, երկրի կյանքի բոլոր ոլորտներում բարեփոխումների իրականացման գործընթացին երիտասարդության ներգրավման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը: Պետության առաջնահերթ խնդիրը, մեր համոզմամբ, պետք է լինի երիտասարդ այն սերնդի պահպանումը, որը ձևավորվել էր երկրի ժողովրդավարական տարանցման ժամանակաշրջանում: Պետությունը, լինելով սոցիալական, կոչված է խթանել և օգնել երիտասարդներին լուծել խնդիրները: Հենց այդ խնդիրների լուծման դժվարությունն է դառնում քաղաքականության հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորման պատճառը և ժամանակակից ընտրական գործընթացին երիտասարդության չմասնակցելը:

Երիտասարդության սոցիալապես ակտիվ մասի ինքնաիրականացման համար համապատասխան դաշտ կարելի է համարել համազգային ծրագրերում, տեղական ինքնակառավարման իրականացման, առողջության և երկրի մարդկային կապիտալի որակի բարձրացման ծրագրերում նոր տեխնոլոգիաները: Ներկայիս քաղաքագետները պետք է ամեն կերպ նպաստեն թվարկված խնդիրների իրագործմանը:

Ընտրական գործընթացին մասնակցելու հարցում երիտասարդության դերի ավելի խորն ուսումնասիրությունը պահանջում է նաև անդրադառնալ կարևորագույն հասարակական ինստիտուտներից մեկին՝ լրատվամիջոցներին: ԶԼՄ-նե-

րը հսկայական դեր են խաղում ընտրական գործընթացում, նրանց գործառնությունները բազմազան են, նրանք տեղեկացնում են, կրթում են, զվարճացնում, գովազդում, շատ դեպքերում ձևավորում են հանրային գիտակցությունը: Ավելին, նրանց միջոցով իրագործվում է ընկալման ու ըմբռնման ձևավորումը, տեղեկությունների հաղորդումը երկրում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների և զարգացումների մասին:

ԶԼՄ-ներն ընտրական գործընթացների կառուցվածքային տարրերն են՝ որպես նրանց ինստիտուցիոնալ <sup>118</sup> հիմքերից մեկը: Զանգվածային լրատվական միջոցները արտահայտում և ազդեցացնում են երիտասարդ սերնդի սոցիալական և քաղաքական շահերը՝ նրան առաջարկելով ընտրական համակարգի հատկանիշների, քաղաքական իշխանության գործունեության տարբեր այլընտրանքային մեկնաբանություններ: Այդ հանգամանքները հատուկ կարևորություն են ստանում ԶԼՄ-ների քաղաքական բնագավառ ներթափանցելու աճի ֆոնին, երբ մեդիա-ռեսուրսները վերափոխվում են քաղաքական գործընթացի իրականացման կարևորագույն գործիքի, ինչը ազդեցության զգալի ուժ ունի: Առավել զանգվածային և ինտենսիվ քաղաքական ազդեցություն ունեն քաղաքացիական հասարակության տեսալսողական ինստիտուտները, առաջին հերթին՝ ռադիոն և հեռուստատեսությունը: Ողջ վերը նշվածը մատնացույց է անում ԶԼՄ-ների՝ որպես «չորրորդ իշխանության» գերիշխող դերը քաղաքական գործընթացում:

<sup>118</sup> Ковров В.Ф. Электоральные процессы в общественной системе // Социология власти. - 2008,-№6, с.128

Տնտեսական լծակների միջոցով որոշակի ազդեցություն գործադրելով տեղեկատվական ռեսուրսների վրա, կարելի է ճնշում գործադրել նախընտրական ընտրարշավների ընթացքի վրա: Քարոզամիջոցները և ընտրարշավների տեխնոլոգիաները դառնում են ավելի բարդ, ինչում լրատվամիջոցները առաջատար դեր են կատարում: Ընդամին, ԶԼՄ-ները լուսաբանում են իշխանության այլ ճյուղերի գործունեությունը (որոնք պետք է անընդհատ հոգան իրենց իմիջի մասին): Մեդիա ռեսուրսների՝ ինչպես զանգվածային, այնպես էլ անհատական գիտակցությունը ձևավորելու ունակությունը նրանց վեր է ածում իշխանության գոյություն ունեցող գործիքներից առավել արդյունավետի: Ստեղծված իրավիճակն անվանվել է «մեդիակրատիա» հատուկ տերմինով («ԶԼՄ-ների իշխանություն» կամ «իշխանություն ԶԼՄ-ների միջոցով»):

ԶԼՄ-ները ոչ միայն պարզապես արտացոլում և մեկնաբանում են իրողությունը, այլ այդ իրողությունը ստեղծում են տեղեկատվության գործընթացի վրա ազդեցության միջոցով, ինչը, իր հերթին, թույլ է տալիս ձևավորել հասարակական կարծիքը: Տեղեկատվության գործընթացի փուլերի թվում կարելի է առանձնացնել, օրինակ, տվյալներ հավաքելը, ընտրելը, մասնատելը, մեկնաբանելը և տարածելը: Քաղաքականության սուբյեկտի հետագա գործողությունները մեծապես կախված են նրանից, թե ինչ տեղեկատվություն նա կստանա, ինչ ձևով և ինչ մեկնաբանությամբ: Տիրապետել կարևոր տեղեկության նշանակում է տիրապետել իրական իշխանության, կարողանալ տարբերակել կարևոր տեղեկությունը իրենից կարևորություն չներկայացնողից:

Այսօր համատարած են պատկերացումներն առ այն, որ

մարդկանց քաղաքական գիտակցությունը և վարքը կախված են տեղեկատվական դաշտից, որը ստեղծում են ՁԼՄ-ները:

Ըստ Բուրդյեի՝ հասարակական կարծիքը՝ որպես բոլորի կողմից ընդունելի միջինացված տեսակետ, իրականում գոյություն չունեցող վերացականություն է: Հետևաբար, ոչ բոլոր գիտնականներն են հավատում ՁԼՄ-ների գործողանքը: Այսպես, Դ.Մերիլը պնդում է, որ ՁԼՄ-ները, տիրապետելով մարդկային ուշադրությունը որոշ բաներին կենտրոնացնելու ուժին, չեն կարող ստիպել գործել: Ապա՝ նա հանգում է ՁԼՄ-ների՝ հասարակության վրա ազդեցության բավական զուսպ գնահատականի: Ըստ նրա՝ այդ ազդեցությունը կայանում է այն բանում, որ հասարակությանը մատնացույց արվի, թե ինչի մասին պետք է մտահոգվի, այլ ոչ թե թելադրել նրան՝ ինչ է պետք մտածել<sup>119</sup>:

Այսպես, ՁԼՄ-ների իշխանությունը շատ դեպքերում կանխորոշում է «օրակարգը»: Հիմնավորելով ՁԼՄ-երի ամենագործողանքի դիրքորոշման ժխտումը՝ հեղինակները հենվում են հետազոտությունների էմպիրիկ հիմքին (ուսումնասիրություններն անց են կացվել հիմնականում ԱՄՆ-ում, և դրանց սկիզբը 1940-ականներին դրել է Պ.Լազարսֆիելդը), որը չհաստատեց ՁԼՄ-ների լուրջ ազդեցությունը բնակչության քաղաքական գիտակցության և քաղաքական վարքի ձևավորման վրա:

Վերը բերված հակադիր տեսակետների կողքին երևան են եկել մի շարք փոխզիջումային տարբերակներ, որոնց հեղի-

նակները չեն ժխտում, որ ՁԼՄ-ները զգալի ազդեցություն ունեն բնակչության քաղաքական գիտակցության և վարքի վրա, բայց, միևնույն ժամանակ, ցույց են տալիս ՁԼՄ-ների հզորության առկա սահմանափակումները: Վերոհիշյալ սահմանափակումները ծագում են լրատվամիջոցների առաջացրած տեղեկատվական դաշտի ներքին հակասություններից: Այսօր քաղաքական վարքագծի կախվածությունը կոնկրետ ՁԼՄ-ների ազդեցությունից հնարավոր է նվազեցնել տեղեկատվության աղբյուրների բազմազանության և նրանցից ընտրություն կատարելու ազատության շնորհիվ: ՁԼՄ-ների ազդեցության բնույթի և չափի վերաբերյալ եղած կարծիքների բազմազանությունն ու հակասությունն օբյեկտիվ պահանջ է առաջացնում ստուգել դրանց ազդեցությունը զանգվածային քաղաքական գիտակցության վրա: Առավել ևս անհրաժեշտ է վերլուծել մարզային նյութի հիման վրա, և, հատկապես, նախընտրական քարոզարշավի համատեքստում:

Հարկ է նշել նաև, որ երիտասարդների համար ավելի ընկալելի քաղաքական հաղորդագրություն կազմելու համար անհրաժեշտ է օգտագործել նորագույն տեխնոլոգիաների ողջ զինանոցը:

Երիտասարդության քաղաքական պասիվության պատճառները թաքնված են նաև պետական երիտասարդական քաղաքականության առանձնահատկության մեջ: Այսօր ակտիվորեն քննարկվում է ընտրողների ակտիվության նվազեցման երևույթը, ինչը պայմանավորված է «իշխանություն» հասկացության հետ կապված ամեն ինչին բնակչության չվստահելու գործոնով: Ի նկատի ունենք քվեարկությանը ինչպես մեծահասակների, այնպես էլ ընտրազանգվածի երիտա-

<sup>119</sup> St'e u Бурдые П. Социальное пространство: поля и практики. - М., 2005, 576 с.

սարդ հատվածի ներկայանալը: Հենց այդ պատճառով է, որ պետական կարևոր ռազմավարական հարց է դառնում ժամանակակից երիտասարդության արժեքների, քաղաքական կողմնորոշումների և դիրքորոշումների ձևավորումը: Արդեն այսօր, երիտասարդների ընտրական ակտիվությունը կախված է սոցիալական շերտավորման գործընթացից: Մատչելի կրթությունը, պատվաբեր աշխատանքը, ընտանիք ստեղծելու հնարավորությունը, ապրելու տեղ ձեռք բերելը վեր են ածվում բարդ և երկուստեք պայմանավորված խնդիրների:

Կարծում ենք՝ այսօր պետության կարևոր գործառույթը պետք է լինի երիտասարդությանը ցույց տալը, որ պետականությունը, առաջին հերթին, հենց իրեն է անհրաժեշտ, որ դա մեր պետությունն է ու նա կոչված է պաշտպանել մեր շահերը բոլոր մակարդակներում: Այստեղ հատուկ դեր պետք է խաղան լրատվամիջոցները, որոնք երիտասարդներին «ամբիոն» են տրամադրում իրենց շահերը արտահայտելու համար:

Երիտասարդության ընտրական ակտիվության էսկալացման վրա ազդում են տարբեր գործոններ: Օրինակ, երիտասարդության շրջանում ցանկացած իշխանական և հասարակական ինստիտուտներից հեռանալու գերակշռող ցանկությանը պետության արձագանքման տեմպը կամ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում վերափոխումների գործընթացում երիտասարդների ակտիվ ընդգրկման իրական պայմանների ստեղծման համար պետության նպատակաուղղվածությունը:

### 2.3. Երիտասարդական պառլամենտարիզմ

Ուսումնասիրելով երիտասարդական քաղաքական կազմակերպությունների և քաղաքական շարժումների փոխակերպման հրամայականները և երիտասարդների քաղաքական սոցիալականացման ոչ ինստիտուցիոնալ եղանակները՝ կարող ենք փաստել, որ Երիտասարդական խորհրդարաններն անհրաժեշտ է դիտարկել որպես երիտասարդության ընտրական ակտիվության զարգացման և նոր քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմ: Երիտասարդական պառլամենտարիզմը՝ որպես երիտասարդությանը քաղաքական գործընթացներին ներգրավելու ինստիտուցիոնալացված ձև, նպաստում է երկրում քաղաքական կյանքի ժողովրդավարացմանը, հասարակական ինքնակառավարման մեխանիզմների զարգացմանը, քաղաքական մրցակցության աճին, քաղաքական վերնախավի և առաջնորդների ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետությունում առաջին Երիտասարդական Խորհրդարանը հիմնադրվեց դեռևս 2004 թվականին, որից հետո վերաձևավորվեց 2011 և 2012 թվականներին: Երիտասարդական Խորհրդարանը գործում է ՀՀ ԱԺ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության մշտական հանձնաժողովին կից և ունի խորհրդատվական մարմնի կարգավիճակ: ՀՀ ԱԺ 2017 թվականի ընտրությունների արդյունքում Ազգային Ժողով անցած բոլոր քաղաքական ուժերի համապետական և վարկանիշային ցուցակներում ընդգրկված էին երիտասարդ թեկնածուներ, որոնք եղել են առաջին կամ երկրորդ գումարման երիտասարդական խորհրդարանների պատգամավորներ: Սա ցույց է տալիս սույն ինս-

տիտուցիոնալ կառույցի կարևորությունը քաղաքական ընտրանու հավաքագրման գործընթացում, սակայն գործառնական տեսանկյունից դրա արդյունավետությունը ցածր է: 2018 թվականի ԱԺ արտահերթ ընտրությունների արդյունքներով մի շարք ԵԽ պատգամավորներ անցան խորհրդարան, իսկ մեկը հետագայում նշանակվեց նախարար: ՀՀ ԱԺ Երիտասարդական Խորհրդարանը հասցրեց ընդունել մի շարք օրինագծեր, որոնցից թերևս ամենաազդեցիկը «Կամավորական աշխատանքի մասին» օրենքն էր: Լայնորեն քննարկվում էին նաև «Երիտասարդության մասին» օրենքի մի շարք նախագծեր, սակայն դրանք չհասան լիազուրկ նիստի: Երիտասարդական խորհրդարանի ընդունած օրինագծերից միայն մեկը հասավ ԱԺ լիազուրկ նիստին և ընդունվեց Ազգային Ժողովի կողմից:

ՀՀ ԱԺ ԵԽ ակտիվ էր նաև միջազգային կապերի հարցում: Առկա էին ստորագրված հուշագրեր Վրաստանի երիտասարդական խորհրդարանի, ինչպես նաև ՌԴ մի շարք երիտասարդական կառույցների հետ: Գործում էր ԱՊՀ երկրների երիտասարդական միջխորհրդարանական ֆորում:

Առաջին երիտասարդական խորհրդարանը ձևավորվել է 1988 թվականին Փարիզում, որպես դպրոցական նախագիծ: ԱՊՀ-ում «երիտասարդական պառլամենտարիզմ» եզրույթը ներմուծվեց նախորդ դարի իննսունական թվականների վերջին քաղաքագետների կողմից: ՌԴ-ում դաշնային մակարդակում երիտասարդական խորհրդարաններ գործում են օրենսդրի երկու պալատներում էլ: Տարածաշրջանային մակարդակում տեղական ինքնակառավարման մարմինների կից գործում են շուրջ 80 երիտասարդական խորհրդարան-

ներ:

Տաջիկստանում երիտասարդական խորհրդարանը գործում է 2010 թվականից: Այն գործում է կառավարությանը կից և ունի հասարակական կազմակերպության կարգավիճակ: Այստեղ օրենսդրի հետ երիտասարդական խորհրդարանի կապը հստակ սահմանված չէ:

Ղազախստանում երիտասարդական խորհրդարան գործում է 2003 թվականից, սակայն ունի բավական ցածր իրավական կարգավիճակ՝ հանդիսանում է շարքային հասարակական կազմակերպություն: Բացակայում է որևէ հիշատակում պետական մարմինների հետ համագործակցության մասին:

Ղրղզստանում երիտասարդական խորհրդարանը իրականացվել է որպես սոցիալական ծրագիր: Այն իրացվել է 2012-ից մինչև 2014 թվականը: Այնուամենայնիվ, բաց աղբյուրներում բացակայում է որևէ հիշատակում դրա գրանցած արդյունքների մասին:

Բելառուսում երիտասարդական խորհրդարան ստեղծվել է Մինսկ և Մոգիլյով քաղաքների խորհուրդներին կից: Երիտասարդական պարլամենտարիզմը Բելառուսում կազմավորման փուլում է:

Ադրբեջանում երիտասարդական խորհրդարանի մասին առաջին հիշատակումները եղել են 2005 թվականին, սակայն դրա ստեղծման մասին քննարկումներ ՋԼՄ-ում ընթանում էին նաև 2012 թվականին, ինչից կարող ենք ենթադրել, որ երիտասարդական խորհրդարանական մշակույթը այնտեղ նույնպես կայացած չէ:

Վրաստանի երիտասարդական խորհրդարանը նույնպես

ունեցել է շարքային հասարակական կազմակերպության կարգավիճակ և թույլ կապ է ունեցել օրենսդիր մարմնի հետ:

Հայաստանի օրինակով կարող ենք փաստել, որ երիտասարդական պառլամենտարիզմը յուրատեսակ դարբնոց է քաղաքական գործիչների համար: Առաջին հերթին այստեղ ձևավորվում են քաղաքական մշակույթի սաղմերը, որոնք հետագայում որոշիչ են լինում քաղաքական մթնոլորտի համար, այն ապահովում է երիտասարդ քաղաքական գործիչներին փորձառությամբ, գիտելիքներով և կապերով: Հայաստանում ընտրված մոդելով երիտասարդական խորհրդարանը զբաղվում է ոչ միայն երիտասարդության խնդիրներով, այլ նաև հանրային հնչեղություն ունեցող այլ հարցերով, ինչպես նաև պետական կառավարման ամենատարբեր խնդիրներով, ինչը եզակի փորձառություն է համաշխարհային երիտասարդական պառլամենտարիզմի մեջ:

#### **2.4 Կրթության դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում**

Անձի սոցիալականացման հիմնախնդրով բազմաթիվ ուսումնասիրողներ են զբաղվել՝ Մ. Հայդեգերը, Կ. Յասպերսը, սոցիոլոգներ Ու. Բրոնֆենբերենները, Է.Ս. Դոմրովիսկին, Է. Դյուրքեյմը, Հ. Պարանսը, հոգեբաններ Ս. Օլպորտը, Ս.Վ. Պետրովսկին և այլոք: Ուսումնասիրողների կողմից մշակվել են տարատեսակ տեսություններ: Այդպիսի տեսություններից է բիոգենետիկ տեսությունը: Ըստ բիոգենետիկ տեսության ներկայացուցիչների (Ջ. Հոլլ, Ս. Հեգել և այլն)՝ սոցիալականացումը դիտարկվում է որպես բնական գործընթաց, որը են-

թարկվում է իր ներքին օրինաչափությանը, անձի զարգացումը կրում է փուլային բնույթ, որոնց անցումը անխուսափելի է և տեղի է ունենում որոշակի դադարներով ու փոփոխությունների անկանխատեսելիությամբ: Սոցիոգենետիկ տեսություններում (Ռ. Բենեդիկտ և այլք) սոցիալականացումն իրականացնում է ինտեգրացնող գործառույթ, ձևավորում է սոցիոմշակութային ընդհանրության նկատմամբ պատկանելիության գիտակցում: Ըստ այդ տեսությունների՝ անձը տարատեսակ մշակույթների «արտադրանք» է:

Բիհեվիորիստական և նեոբիհեվիորիստական տեսությունները (Յ. Ուզնդայք, Ս. Բանդորա, Վ. Ուոլթերս և այլք) սոցիալականացումը դիտարկում են որպես սոցիալական ուսումնառության գործընթաց, ինչը ենթադրում է որոշակի վարքաբանական մոդելների դիտում և կրկնօրինակում: Ուսումնառության գործընթացի կարևոր մասնիկներն են ամբապնդումը, փոխարկող ամբապնդումը, ինքնամբապնդումը: Ըստ բիհեվիորիստական և նեոբիհեվիորիստական տեսությունների՝ յուրացված վարքաբանական մոդելների ամբողջականությունն անձն է: Դասական հոգեվերլուծության մեջ սոցիալականացումը դիտարկվում է որպես բնական կամ վայրի ձգտումների անցումային գործընթաց պաշտպանական համակարգերի միջոցով:

Նեոֆրոյդիզմի ներկայացուցիչները հատուկ ուշադրություն և առանձնակի տեղ են հատկացնում «Էգո»-ին կամ «Ես»-ին, որպես հիմնական, կարևոր ադապտացնող համակարգ անձի սոցիալական զարգացման գործընթացում: Միմվոլիկ ինտերակցիոնիզմի դպրոցի ներկայացուցիչները (Դ. Միդ, Տ.

Կեմպեր) մշակել են սոցիալականացման մոդելների սոցիալական փոխհարաբերությունը, դերային վարքաբանությունը՝ «Ես»-ի ձևավորման հիման վրա: Ուսումնասիրողները գտնում են, որ սոցիալականացման հիմնական արդյունքը անձի ինքնագիտակցության ձևավորումն է: Հումանիստական հոգեբանության դպրոցի ներկայացուցիչները (Ա. Մասլոու, Կ. Ռոջերս և այլք) սոցիալականացման գործընթացը դիտարկում են որպես «Ես» հայեցակարգի, ինքնաակտուալացում:<sup>120</sup>

Լ.Ս. Վիգոտսկին քննադատել է «սոցիալականացում» որպես կենսաբանական գոյությունից անցումը սոցիալականացված անձի կյանքի» մոտեցումը: Ըստ նրա, նորածին երեխան արդեն իսկ որոշակի մշակույթի կրող կամ մասնիկն է, որոշակի սոցիալական կապերի կրող, կամ մասնիկ, քանի որ նա ծնված պահից ի վեր արդեն իսկ հանդիսանում է հասարակական գոյ, էակ, նա ի սկզբանե շրջապատված է բարդ, համակարգային սոցիալական աշխարհով, որի լիարժեք անդամը դեռ պատրաստվում է դառնալ: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու, անձի բնույթը սոցիալական է. ի տարբերություն Պիաժեի, նա գտնում է, որ զարգացումը գնում է ոչ թե դեպի սոցիալականացումը, այլ հասարակական հարաբերությունները վերածվում են հոգեկան գործառույթների<sup>121</sup>: Ըստ նրա՝ ոչ արտաքին աշխարհից երեխային ներմուծվում է աստիճանական սոցիալականացումը, այն աստիճանական անհատականացումը, որն առաջանում է երեխայի ներքին սոցիալականության հիմ-

<sup>120</sup> Տե՛ս Maskow A.H. Motivation and Personality. Harper and Brothers, 1987, 411 p.

<sup>121</sup> Տե՛ս Журавлев А.Л., Социальная психология. Москва 2002. - 351 с.

քի վրա և երեխայի զարգացման հիմնական չափորոշիչն է:

Ըստ Վ.Կ. Շերելնիկովի՝ Գ. Հեգելը փիլիսոփայությամբ, իսկ Լ.Ս. Վիգոտսկին կոնկրետ հոգեբանական մոտեցմամբ բացահայտում են անձի սոցիալական դետերմինացիան և հոգեկան զարգացումը: Հասարակությունը հոգեկանը ձևավորող սուբյեկտ է<sup>122</sup>:

Անձի զարգացման պատմամշակութային դետերմինացիայի զարգացումը ենթադրում է հասարակության և անձի հոգևոր կազմակերպման համապատասխանություն կամ իզոմորֆիզմ: Բացահայտվելով որպես հասարակության գործառույթային օրգան՝ անձն իր զարգացման ընթացքով արտացոլում է իրեն գերակշռվող անձի մշակութային համակարգի զարգացման ճգնաժամերի համակարգը կամ կառուցվածքը:

Ըստ ռուսական դպրոցի՝ քաղաքական սոցիալականացումը դիտարկվում է որպես անհատի կողմից սոցիալական փորձի յուրացում սոցիալական միջավայրի ներգրավմամբ և սոցիալական կապերի և հարաբերությունների համակարգերի յուրացմամբ<sup>123</sup>, որպես անհատի կողմից հասարակության նորմերի և արժեքների և դրանք հասարակական համակարգերով ակտիվ յուրացման գործընթաց, որը բնորոշում է անձի՝ որպես անհատի վարքագիծը և դիրքորոշումը հասարակության համակարգում:

<sup>122</sup> Տե՛ս Исхаков А. М. о самоопределении личности в современном обществе// психология и жизнь: сб. науч. тр. вып 1-М: МОСУ, РПО, 2000, с. 19-22:

<sup>123</sup> Տե՛ս Андреева Г.М., Социально-психологические аспекты активизации человеческого фактора // Вопросы психологии. — 1986, № 3. , с. 5-15:



Քաղաքական սոցիալականացումն անհատի կողմից սոցիալական փորձի, հասարակական կապերի և փոխհարաբերությունների համակարգերի յուրացման և վերարտադրման գործընթացն ու արդյունքն է:

Առկա են «քաղաքական սոցիալականացում» հասկացության տարբեր մեկնաբանություններ: Մասնավորապես, քաղաքական սոցիալականացումը մի կողմից դիտարկվում է որպես անհատի կողմից սոցիալական փորձի յուրացման ակտիվ գործընթաց՝ հասարակական գործառույթների և ճգնաժամերի, շրջապատի հետ սոցիալական կապի համակարգերի փոխգործունեությամբ: Մյուս կողմից՝ դա սոցիալական ինքնորոշմանն ուղղված անձի ներքին անհատական զարգացման գործընթացն է՝ ստացած փորձի քննադատական իմաստավորման, այդ փորձի փոխակերպման և դրա հետ նորացման և բազմապատկման միջոցով: Այս դեպքում մարդու փոխհարաբերությունը հասարակության հետ ներառում է հասարակության և մարդու ճանաչումը կամ գիտակցումը՝ որպես զարգացման սուբյեկտների:

Սոցիալականացման ընթացքում մարդը ոչ միայն ձեռք է բերում սուբյեկտային հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են իրեն հասարակության մեջ կենսագործունեության համար, այլև ձևավորվում է որպես անհատականություն, որն ընդունակ է կառուցողական լուծում առաջարկել հասարակությունում առկա խնդիրներին, սոցիալական պրակտիկ նոր շրջաններ և դրանից առաջ գոյություն չունեցած սոցիալական ընդհանրություններ ձևավորել: Սոցիալականացման բնորոշման հետ կապված տարակարծություններ են առաջանում «անձի

զարգացում» և «դաստիարակություն» հասկացությունների հետ կապված:

Անձի զարգացումը դիտարկվում է որպես անհատի համակարգային որակների փոփոխության օրինաչափ գործընթաց, որը տեղի է ունենում նրա սոցիալիզացիայի արդյունքում: Անձի զարգացումը հասարակության կողմից անհատի ենթարկում կամ նրա բիոլոգիական, կենսաբանական բնույթի ճնշում չէ, այլ անհատի առանձնացում է հասարակությունից՝ նրա համակարգում տեղի ունեցող հասարակական գործունեության ծավալման միջոցով: Անձնային կամ անհատական առանձնահատկությունները ձևավորվում են որպես սուբյեկտի հոգեբանական գործունեության ապահովում:

Քաղաքական սոցիալականացումը շարունակվում է ողջ կյանքի ընթացքում. հասուն անհատների սոցիալականացման առանձնահատկությունը անկանխատեսելի հասարակական իրավիճակներում (գաղափարախոսության փոփոխություն, արժեքանական և վարքաբանական համակարգերի փոփոխում, մշտական բնակության վայրի փոփոխում, ազատագրվման վայրից ազատում և այլն) վերասոցիալականացումն է:

Քաղաքական սոցիալականացումը վերականգնողական (ռեաբիլիտացիոն) գործառույթ ունի, որը բնորոշվում է սոցիալական կապերի վերականգնմամբ կամ ամրապնդմամբ, հասարակական դեադապտացիայի առաջացման չեզոքացմամբ:

«Դաստիարակություն» հասկացությունը կիրառվում է հոգեբանական 2 նշանակությամբ՝ լայն և նեղ: Նեղ իմաստով

դաստիարակությունը դիտարկվում է որպես անհատի՝ հասարակության կողմից ընդունելի նորմերի և արժեքների ձեռքբերում, բարոյական և իրավական նորմերի, անձի հատկանիշների և վարքագծի ձեռքբերում դաստիարակության գործընթացում:

Որպես ազդեցության սուբյեկտ հասկանում ենք հատուկ ինստիտուտ, հասուն մարդ, որն իրականացնում է նպատակաուղղված, ծրագրային փոխազդեցության գործընթաց երևակայական որոշակի պատկերացումների, նորմերի համակարգի փոխանցման նպատակով: Այս գործընթացը չի կրում կոշտ մանիպուլյատիվ բնույթ, այլ միջանձնային փոխազդեցություն, գործընկերություն է: Փոխազդող կողմի նպատակաուղղվածությամբ պայմանավորված՝ նրա վրա են դրվում նպատակադրման պարտականությունները, որոնք դուրս են տեղի ունեցող գործողությունների փոխազդեցության և ռեֆլեքսիայի շրջանակից: Պարզ է դառնում, որ «դաստիարակությունը» նեղ իմաստով և «քաղաքական սոցիալականացումը» տարբերվում են իրենց նշանակությամբ:

«Դաստիարակություն»-ը լայն իմաստով կիրառելիս տարբերությունները վերանում են, քանի որ դաստիարակությունը բնութագրվում է որպես անհատի սոցիալականացման գործընթաց, նրա՝ որպես անհատի ձևավորումը և կայացումը ողջ կյանքի ընթացքում սեփական ակտիվության և բնական, հասարակական, մշակութային միջավայրի ազդեցությամբ:

Որպես դաստիարակության գործընթացի սուբյեկտ սովյալ պարագայում հանդես է գալիս հասարակությունը, հա-

սարակական հարաբերությունների ողջ համակարգը, որն ուղղված է անձի դաստիարակությանը: Լայն իմաստով դաստիարակությունը սոցիալականացման առաջատար և բնորոշիչ սկիզբն է: Դրա լավագույն օրինակներից է քաղաքական դաստիարակությունը:

Սոցիալականացման իմաստային գերակշռիչների վերլուծության համար ուսումնասիրողները առանձնացնում են դրա չորս ամբողջական եզրերը: Երկու եզրերը բնորոշում են սոցիալականացման մի կողմը, որը կապված է հասարակությունում անձի ներգրավմամբ: Դրանք են՝ ինկուլտուրացիան և ադապտացումը: Սոցիալականացման երրորդ եզրը, որը անձի կողմից յուրացված սոցիալական փորձի ակտիվ արտացոլումն է, 4-րդ եզրը՝ սոցիալականացումը դիտարկում է որպես կառուցողականության գործընթաց:

Սոցիալականացման հիմնական արդյունքը անհատի հատկանիշների ձևավորումն է, որոնք ապահովում են նրա նորմատիվային գործունեությունը, իսկ սոցիալական զարգացման գլխավոր չափանիշը դառնում է նրա հասարակական կայացվածությունը, հաջողությունը: Սոցիալական միջավայրի պահանջներին համապատասխանության ձեռքբերման գործընթացը բնորոշվում է որպես սոցիալական ադապտացիայի գործընթաց, իսկ դրա խախտումը՝ որպես դեադապտացում: Անհատը հոգեբանական կառուցվածք ունի, որը համապատասխանում է սոցիալական տարատեսակ տենդենցների ազդեցությանը և փոխակերպում դրանք ադապտացիոն վարքագծի սցենարների:

Ժամանակակից հասարակությունում սոցիալականացման հարցում մեծ կարևորություն է տրվում կրթությանը և

մասնագիտության ձեռքբերմանը: Գրեթե բոլոր երկրներում կրթությունը սոցիալականացման անհրաժեշտ պայման է: Քանի որ տեխնիկական զարգացումը առաջ է ընկնում նոր սերնդի աշխատողների փոփոխությունից կամ զարգացումից, մարդը ստիպված է կրթվել, սովորել իր ողջ կյանքի ընթացքում: Ժամանակակից կրթության հաջողությունը բնորոշվում է ոչ միայն նրանով, թե ինչ է սովորել անձը և ինչպիսին են նրա գիտելիքները, կարողությունները, այլև նոր գիտելիքներ ձեռք բերելու և նոր պայմաններում դրանք կիրառելու կարողությամբ: Կարևոր է, թե որքանով է սուբյեկտը ինքնուրույն տեղեկատվական տարածությունում, ինչպիսին են նրա կողմնորոշման ընդունակությունները, ինչքան արագ է նա կարողանում ընտրել այն, ինչ իրեն իրականում համապատասխանում է և որտեղ նա կկարողանա հասնել մասնագիտացկան բարձր մակարդակի: Մասնագիտական բարձր մակարդակը նորագույն արդյունաբերական զարգացման պայմաններում առաջնահերթություն է: Ժամանակակից հասարակությունը չափազանց թանկ է վճարում մասնագիտական սխալների համար:

Ստեղծագործելը նույնպես դառնում է սոցիալականացման անհրաժեշտ պայման և ժամանակակից հասարակությունում այլևս չի դիտարկվում որպես բացառիկ և արտասովոր երևույթ: Ժամանակակից հոգեբանությունը և մանկավարժությունը դիտարկում են յուրաքանչյուր մարդու՝ որպես ստեղծագործ անձի:

Կրթությունը որպես ժամանակակից սոցիալականացման պարտադիր պայման և առանձնահատկություն պայմանավորված է հասարակական խնդիրների բազմազանությամբ:

Մակայն ժամանակակից հասարակությունում կարևոր տեղ են զբաղեցնում նաև անձնային խնդիրները: Մարդու ժամանակակից սոցիալականացման առանձնահատկությունը բնորոշվում է նաև այն նոր պահանջներով, բնավորության գծերով, որոնք անհրաժեշտ է ունենալ հասարակությունում լիիրավ քաղաքացի լինելու համար: Այս գծերը չեն տարբերվում անձի այն գծերից, որոնք անհրաժեշտ են եղել ավելի վաղ, սակայն նրանց համադրությունը անձին տալիս է ավելի վաղ արտահայտված անահատակություն:

Բացի այդ, սոցիալականացման գործընթացի բարդությունը և դինամիկան պահանջում է սոցիալական զարգացման գործընթացում անձի գծերի բարձրագույն ներդաշնակեցում, ինչը ենթադրում է հակադիր սկիզբների միասնություն: Ժամանակակից մարդը պետք է իմանա իր առավելություններն ու թույլ կողմերը, քանի որ դրանք նրա արդյունավետ կենսագործունեության կարևորագույն պայմանն են:

Սոցիալականացման գործընթացում անձի զարգացման փուլերը յուրովի տեղ են զբաղեցնում հոգեբանության համակարգում: Սոցիալիզացման հիմնախնդիրները մանրակրկիտ դիտարկվել են ֆրեյդիզմի դպրոցում, այդ իսկ պատճառով սոցիալականացման փուլերի որոշման հիմնահարցը դիտարկել է հենց այդ դպրոցը: Հոգեվերլուծության տեսանկյունից անձի զարգացման համար չափազանց մեծ է վաղ մանկության փուլը: Դա հանգեցրել է սոցիալականացման փուլերի կոշտ տարանջատմանը: Ըստ հոգեվերլուծության տեսության՝ սոցիալականացումն այն գործընթացն է, որը ժամանակագրական առումով համընկնում է վաղ մանկության շրջանի հետ: Մյուս կողմից նեոթորոդոքսալ հոգեվերլուծական աշխատանքներ

րում սոցիալականացման ժամանակային սահմանները զգալիորեն ընդարձակվել են: Ի տարբերություն ֆրոյդիստական դպրոցի, սոցիալական հոգեբանության մյուս ուղղություններն առանձնահատուկ շեշտադրում են կատարում պատանեկության փուլում սոցիալականացման ուսումնասիրության վրա: Վաղ մանկության, պատանեկության, հասունության շրջանում արդյո՞ք տեղի է ունենում հասարակական փորձի յուրացում, ինչը կազմում է սոցիալականացման զգալի մասը: Վերջին շրջանում այս հարցը գլխավորապես դրական պատասխան է ստանում: Այդ իսկ պատճառով, որպես սոցիալիզացման փուլ են դիտարկվում ոչ միայն մանկությունն ու պատանեկությունը, այլև հասուն շրջանը: Ըստ ռուսական դպրոցի, քաղաքական սոցիալականացումը առաջնային ենթադրում է հասարակական փորձի յուրացում, առաջին հերթին աշխատանքի միջոցով կամ օգնությամբ: Այդ իսկ պատճառով որպես փուլերի դասակարգման հիմք առաջին հերթին դիտարկվում է աշխատանքի հանդեպ վերաբերմունքը: Հիմք ընդունելով այս սկզբունքը կարելի է տարանջատել նախաաշխատանքային, աշխատանքային և հետաաշխատանքային փուլերը:

Նախաաշխատանքային փուլը ընդգրկում է մարդու կյանքի ողջ ընթացքը մինչև աշխատանքային գործունեության սկիզբը: Այս փուլն իր հերթին բաժանվում է երկու համեմատաբար անկախ փուլերի՝

**ա) վաղ սոցիալականացման շրջան,** որն ընդգրկում է մարդու կյանքի շրջանը ծնվելու պահից մինչ դպրոց հաճախելը, այսինքն՝ այն շրջանը, որը տարիքային դասակարգման մեջ համապատասխանում է վաղ մանկության շրջանին,

**բ) ուսումնական փուլը,** որը ներառում է երիտասարդության ողջ շրջանը: Այն ներառում է դպրոցում ուսումնառության ողջ ընթացքը: Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու վերաբերյալ կարծիքները տարբեր են: Եթե դիտարկենք աշխատելու տեսանկյունից, ապա բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառությունը չի կարող ընդգրկվել հաջորդ փուլում: Մյուս կողմից բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության շրջանը էապես տարբերվում է դպրոցական շրջանից, ինչ-որ չափով կարող է համատեղվել աշխատանքի հետ, այդ իսկ պատճառով անձի կյանքի այս շրջանը չենք կարող միանշանակ ընդգրկել փուլերից որևէ մեկի մեջ:

Աշխատանքային փուլն ընդգրկում է անձի հասունության շրջանը: Չնայած դեմոգրաֆիական (ժողովրդագրական) տեսանկյունից «հասուն» տարիքի սահմանները պայմանական են, այս շրջանի հստակ ֆիքսումը խնդրահարույց չէ, քանի որ այն ընդգրկում է անձի աշխատանքային շրջանի ողջ փուլը: Ի հակադրումն այն մտքի, որ քաղաքական սոցիալականացումը ավարտվում է ուսումը ավարտելուն զուգահեռ, ուսումնասիրողների մեծ մասը հակված են այն մտքին, որ քաղաքական սոցիալականացումը շարունակվում է աշխատանքային փուլի ընթացքում: Անձի կողմից ոչ միայն հասարակական փորձի յուրացման, այլև այդ փորձի վերարտադրման տեսանկյունից այդ շրջանն առանձնակի կարևոր է: Սոցիալականացման աշխատանքային փուլի ճանաչումը տրամաբանորեն բխում է անձի զարգացման համար աշխատանքի կարևորության գաղափարից: Բարդ է համաձայնել այն մտքին, որ աշխատանքը որպես անձի ներուժի բացահայտ-

ման պայման դադարեցնում է հասարակական փորձի յուրացումը: Ավելի բարդ է ընդունել այն միտքը, որ աշխատանքային փուլում դադարեցվում է հասարակական փորձի վերարտադրման գործընթացը: Անշուշտ, երիտասարդությունը անձի կայացման կարևորագույն շրջանն է, սակայն հաշվի առնելով աշխատանքային գործունեության կարևորությունը, հասուն շրջանը նույնպես ունի մեծ կարևորություն:

Քաղաքական գիտության մեջ այս խնդիրը դիտարկվում է որպես հետաաշխատանքային սոցիալականացման փուլ: Հիմնական դիրքորոշումները հարցի շուրջ հակադրվում են: Ըստ տեսանկյուններից մեկի՝ անիմաստ է սոցիալականացման եզրույթի կիրառումը մարդու կյանքի այն փուլի կապակցությամբ, երբ նրա բոլոր հասարակական գործողությունները ներփակվում են: Սույն մտքից ելնելով՝ վերոգրյալ շրջանը չի կարելի նկարագրել հասարակական փորձի յուրացման և փորձի վերարտադրման եզրույթներով: Այս գաղափարի ծայրահեղ դրսևորումը «ապասոցիալականացում» գաղափարն է, որը հաջորդում է սոցիալականացմանը: Ըստ հակադիր կարծիքի՝ սոցիալականացման ուսումնասիրության տեսանկյունից նոր մոտեցում է ստանում ծերության շրջանը: Մասնավորապես, ծերության շրջանը մեծ ներդրում ունի հասարակական փորձի վերարտադրության գործընթացում: Այս փուլում փոխվում է միայն անձի հասարակական ակտիվությունը:

Համաձայն Ս.Վ. Պետրովսկու՝ անձի զարգացումը շարունակական և ընդհատվող երևույթ է: Անձի զարգացման շարունակականությունն արտահայտվում է համեմատանար կայուն օրինաչափություններում, սույն մի փուլից մյուսին անցման ընթացքում, ընդհատականությունը բնորոշվում է ո-

րակական փոփոխություններով, որոնք առաջանում են անձի անցումից նոր պատմական պայմանների, որոնք պայմանավորված են այլոց հետ անձի փոխազդեցության գործոններով:

Ա.Վ. Պետրովսկին առանձնացրել է անձի հասարակական զարգացման մակրոփուլեր, որոնք բնորոշվում են հետևյալ կերպ՝

ա) մանկություն՝ անհատի ադապտացումը, որն արտահայտվում է հասարակության մեջ սոցիալական ադապտացմամբ և հասարակական նորմերի գոյացմամբ,

բ) պատանեկություն՝ անհատականացում, որն արտահայտվում է անձի մաքսիմալ «կայացման ձգտմամբ», «անհատականություն» լինելու պահանջումներով:

գ) երիտասարդություն՝ ինտեգրացում, որի շրջանում տեղի է ունենում անձի զօերի և հատկանիշների ձևավորումը, որոնք համապատասխանում են անհատական և խմբակային զարգացման անհրաժեշտությանը և պահանջներին:

Դպրոցը ժամանակակից հասարակության կենսագործունեության և պահպանման համար ունի կարևոր նշանակություն: Այն վայրերում, որտեղ դպրոցը բացակայում է, նույնը տեղի է ունենում բնական ճանապարհով, ինչպես որ ծնողները երեխաներին սովորեցրել են խոսել և քայլել:

Ավագ սերունդը ժամանակակից հասարակությունում չի կարող երեխաներին դաստիարակել իրենց նմանությամբ: Շատ հաճախ ծնողների հմտությունները հնանում են և նրանք բախվում են այն խնդրին, որ իրենց մասնագիտությունն այլև պահանջարկ չունի: Ժամանակակից հասարակությունում անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները չի կարելի ստանալ մեխանիկորեն և բնական, դրա համար անհրաժեշտ

է հատուկ կրթական միջավայր:

Յուրաքանչյուր հասարակություն, անկախ անհատի որակներից և հնարավորություններից, նրան տալիս է որոշակի կարգավիճակ: Մյուս կարգավիճակներին հասնում են ընտրության և մրցակցության միջոցով: Կրթության ինստիտուտը, որպես կանոն, միջնորդ է հանդիսանում որոշակի մասնագիտությունների համար անհատներ ընտրելու գործում: Բաշխելով դիպլոմներ, վկայականներ, այն որոշում է, թե երիտասարդներից ով մուտք կստանա դեպի իշխանություն, ստատուս: Շատերի համար «վերելակի» դերը կատարում է դպրոցը, որը հնարավորություն է տալիս տաղանդավոր և շնորհալի մարդկանց բարձրանալ սոցիալական աստիճանով: Սակայն ըստ կոնֆլիկտոլոգների, դպրոցները դիտարկվում են որպես միջնորդներ, ովքեր վերարտադրում և լեգիտիմացնում են գոյություն ունեցող սոցիալական կապերը՝ այդպիսով ծառայելով մի խումբ անձանց և անտեսելով մյուսների շահերը:

Ըստ կոնֆլիկտոլոգների՝ դպրոցում առկա է դասավանդման թաքնված ընթացք, որը բաղկացած է ոչ հստակ արտահայտված արժեքների, դիրքորոշումների և վարքաբանական մոդելների համակարգից, որոնք երեխաներին դաստիարակում են՝ համաձայն գերակշռող ինստիտուտների պատկերացումների: Ուսուցիչները ձևավորում և գովաբանում են հատկանիշները, որոնք արտացոլում են միջին դասի նորմերը՝ աշխատասիրություն, պատասխանատվություն, բարեկրթություն, հուսալիություն, ինքնատիրապետում, արդյունավետություն: Երեխաները սովորում են լինել հանգիստ, պարտաճանաչ, համբերատար, հարգալից խմբի համապատասխան

պահանջների նկատմամբ:

Այլ անձանց հետ փոխազդեցության միջով անհատի մոտ ձևավորվում են իր սեփական համոզմունքները, բարոյական նորմերը, սովորույթները, այն ամենը, ինչ կազմում է անձի յուրահաստկությունը: Այսպիսով, քաղաքական սոցիալականացումն իրականացնում է 2 գործառույթ՝ մշակույթի փոխանցում մի սերնդից մյուսին և «Ես»-ի գործառույթը:

Քաղաքական սոցիալականացման գործընթացը բազմաշերտ հասկացություն է: Քաղաքական սոցիալականացման կողմերից մեկը կրթությունն է, ուսուցումն ու դաստիարակությունը: Ամերիկացի հանրահայտ քաղաքագետ Ֆ. Գրիթայնը քաղաքական սոցիալականացումը նկարագրում է հետևյալ կերպ. «Քաղաքական սոցիալականացում ասելով պետք է հասկանալ ուսուցման ցանկացած տեսակ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ, նպատակային և չպլանավորված, կյանքի ցանկացած փուլում՝ ներառյալ ոչ միայն բացահայտ արտահայտված քաղաքական ուսուցումը, այլև ապաքաղաքական ուսուցումը, որն ազդում է քաղաքական վարքագծի վրա: Օրինակ՝ համապատասխան քաղաքական վարքագծի յուրացումն ու համապատասխան քաղաքական խառնվածքի ձեռքբերումը»<sup>124</sup>:

Քաղաքական սոցիալականացման գործընթացի վրա հնարավոր է ազդել՝ կառավարելով տեղեկատվության պահանջարկը: Եթե անհատը մանկուց տեղեկատվությունը ստանում է որոշակի լույսի ներքո, ապա այն ազդում է նրա քաղաքական հայացքների ձևավորման վրա: Հետագայում անհատն

<sup>124</sup> St' u Greenstein F. A note on the ambiguity of political socialization: definitions, criticism and strategies of inquiry - Boston, 1980, 90 p.

սկսում է ընտրողաբար ընկալել տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, քաղաքական համակարգերի տրանսֆորմացիայի և մոդերնիզացիայի դեպքում հայտնվելով սթրեսային իրավիճակում, անհատը մերժում է նոր կարգն ու արժեքները՝ այդպիսով խոչընդոտելով հասարակության հետագա զարգացմանը: Այլ կերպ ասած, չունենալով կատարվածին օբյեկտիվ գնահատական տալու ունակություններ՝ անհատը հեշտությամբ ենթարկվում է քաղաքական մանիպուլացիաների: Քաղաքական մշակույթի և սոցիալականացման բարձր մակարդակ ունեցող հասարակություններն ավելի հեշտ կառավարելի են, քանի որ այնտեղ ինքնակազմակերպման և ինքնազարգացման մեխանիզմներ են ներդրված:

Քաղաքական սոցիալականացման վրա ազդեցություն ունեցող բոլոր սուբյեկտներին կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի՝

- դաստիարակություն՝ ընտանիք, եկեղեցի, ոչ ֆորմալ խմբեր,
- կրթություն՝ դպրոց, բուհ, ոչ ֆորմալ կրթություն,
- ՋԼՄ-ներ,
- քաղաքական գործընթացների հիմնական դերակատարներ՝ պետություն, քաղաքական կուսակցություններ և այլն:

Քաղաքական սոցիալականացման դասակարգումն այդ գործընթացը ժամանակային սկզբունքով բաժանում է առաջնային և երկրորդային փուլերի: Քաղաքական սոցիալականացման առաջնային փուլը տեղի է ունենում ընտանիքում. անհատը յուրացնում է լեզուն, նրան ներկայացվում են բարոյական հիմնական նորմերը, որոնք ընդունված են տվյալ սո-

ցիումում՝ ելնելով տարիքով և սեռով պայմանավորված դերերից: Երկրորդային քաղաքական սոցիալականացումը տեղի է ունենում անհատի մոտ արդեն իսկ ձևավորված քաղաքական հայացքների հիման վրա: Որպես կանոն, երկրորդ փուլը կա՛մ համընկնում է ուղղակի քաղաքական ակտիվության հետ, կա՛մ նախորդում է դրան: Երկրորդային սոցիալականացման գոյության փաստը ենթադրում է, որ առաջնային փուլի արդյունքները ենթակա են փոփոխման<sup>125</sup>:

Քաղաքագետներն առանձնացնում են անմիջական սոցիալականացման մի քանի տեսակներ՝

- այլ անհատների քաղաքական հայացքների և վարքագծի իմիտացիա– քաղաքական հայացքները փոխառնվում են ծնողներից, ազգականներից, կուսակցական առաջնորդներից և այլն,

- կանխորոշող– անհատները յուրացնում են այնպիսի քաղաքական հայացքներ և դերեր, որոնք համապատասխանում են այն ապագա դերերին, որոնք իրենք իրենց համար սահմանել են քաղաքականության մեջ,

- նպատակաուղղված ազդեցություն–քաղաքական սոցիալականացում ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցների ազդեցությամբ՝ կրթություն, կրոն և այլն,

- Նպատակաուղղված կամ պատահականորեն քաղաքական փորձառության ձեռքբերում– նախընտրական քարոզչություն, իշխանության ներկայացուցիչների հետ ունեցած առնչություններ:

<sup>125</sup> St' u Easton D. Children in the political system: origins of political legitimacy - New York: McGraw-Hill, 1969, p.114:

Քաղաքական սոցիալականացման վրա ազդող երևույթները փոխկապակցված են<sup>126</sup>: Ավելի վաղ ընդունված էր համարել, որ մանկության և պատանեկության շրջանում քաղաքական սոցիալականացման հարցում որոշիչ դերակատարում ունեն մարդկային հարաբերությունների ապաքաղաքական տեսակները (ընտանիք, դպրոց և այլն): Ավելի ուշ՝ գիտնականները եկան այն եզրակացությանը, որ այդ հիպոթեզը հիմնված է ենթադրությունների վրա և չի կարող ընդհանուր օրինաչափություն ենթադրել: Մանկական և պատանեկան ապաքաղաքական հարաբերությունները լայն ազդեցություն ունեն անհատի քաղաքական համոզմունքների վրա, սակայն այս գործոնների և ավելի ուշ շրջանի քաղաքական վարքագծի միջև ընկած են շատ այլ գործոններ, որոնք ավելի լուրջ ազդեցություն ունեն անհատի քաղաքական հայացքների ձևավորման հարցում: Այդ գործոններից մեկը կրթությունն է, մասնավորապես՝ քաղաքական կրթությունը: Ինչպես ցույց է տալիս Գ. Ալմոնդի և Ս.Վերբայի «Քաղաքացիական մշակույթ» գրքում ներկայացված սոցիոլոգիական հետազոտությունը՝ այն մարդկանց տոկոսային հարաբերակցությունը, ովքեր կարծում են, որ անհատը պետք է քաղաքական ու քաղաքացիական կրթություն ունենա և ակտիվ լինի տեղական համայնքում, կախված է հարցվածների կրթությունից (Տես Աղ. 1)<sup>127</sup>:

<sup>126</sup> St' u Almond G, Coleman J. The Politics of the Developing Areas - Princeton, N.J., 1960, p.26-33:

<sup>127</sup> St' u Альмонд Г., Верба С. Гражданская культура - Мысль, Москва, 2014, с.178-365

Աղյուսակ 1

Երկիր	Այդ կարծիքն ունեցող հարցվածների ընդհանուր թիվ	Տարրական կամ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող (ընդհանուր թվից)	Թերի միջնակարգ կրթություն ունեցող (ընդհանուր թվից)	Թերի բարձրագույն կրթություն ունեցող (ընդհանուր թվից)
	%	%	%	%
ԱՄՆ	51	35	56	66
Մեծ Բրիտանիա	39	37	42	42
Գերմանիա	22	21	32	38
Իտալիա	10	7	17	22
Մեքսիկա	26	24	37	38

Հայաստանի երիտասարդության շրջանում նման օրինաչափություն արձանագրելու նպատակով համարժեք սոցիալական հարցում իրականացրեցինք 16-30 տարեկան 250 մարդկանց շրջանում: Սույն հետազոտության շրջանակում լայնածավալ սոցիոլոգիական ուսումնասիրություն իրագործելը հնարավոր չէր, ուստի տվյալների հավաքագրման և մշակման համար կիրառվել է սոցիոլոգիայում հայտնի ընտրովի զննման մեթոդը: Հաշվի առնելով մեր հետազոտության նպատակը՝ կրթական գործոնի հարցում ևս մեկ կետ է ավելացվել՝ ուսումնասիրելով նաև հարցվածների կարծիքը ոչ ֆորմալ կրթություն ստանալու վերաբերյալ:

Հարցվածների 55%-ը պատասխանել են, որ շարքային



անհատը պետք է ակտիվ լինի տեղական և պետական մակարդակներում իրականացվող քաղաքական կառավարման հարցում: Միննույն ժամանակ, միջնակարգ կրթություն ունեցողների միայն 35%-ն է այդ հարցին դրական պատասխանել: Թերի ու լիարժեք բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում այդ թիվը համապատասխանաբար 42% և 46% է: Եվ, վերջապես, բարձրագույն և ոչ ֆորմալ կրթության փորձ ունեցողների 93%-ը կարծում են, որ շարքային անհատը պետք է քաղաքացիական և քաղաքական կրթություն ստանա ու ակտիվ լինի տեղական և պետական մակարդակներում իրականացվող քաղաքական կառավարման գործում:

Այս հետազոտությունից կարելի է եզրակացնել, որ կրթության մակարդակը փոխկապակցված է անհատի քաղաքացիական մշակույթին, իսկ 10-ից 9-ը դեպքերում ոչ ֆորմալ կրթությունը ենթադրում է վստահություն քաղաքական կառավարմանն ակտիվորեն մասնակցելու կարևորության վերաբերյալ: Բացի այդ կրթվածության տարբեր մակարդակները՝ կրթական տարբերակումը, դառնում է հասարակության շերտավորման պատճառներից մեկը<sup>128</sup>:

Նշված հարցման թերությունն այն է, որ հարցաշարն անհատի կրթական մակարդակը չափող գործիքակազմ չունի՝ հարցման շրջանակներում մենք ստիպված ենք հիմնվել անհատի ֆորմալ կրթական կարգավիճակի վրա: Այս խնդիրը լուծելու համար մշակեցինք համակարգչային ծրագիր, որը հնարավորություն կտար վերհանել կրթական մակարդակ-

<sup>128</sup> St' u Нестеров В. Образование как фактор социальной сплоченности и политической стабильности общества.- Вестник Военного университета.29009, N3(19), с.38:

քաղաքական սոցիալականցում կապը՝ ոչ միայն հիմնվելով ֆորմալ կրթական ցենզի, այլ նաև փաստացի գրագիտության վրա: Նշված ծրագիրը իրենից ներկայացնում էր keylogger տեսակի հավելված, որը տեղադրվելով (նախնական գրավոր համաձայնությամբ) 150 երիտասարդների համակագրիչների վրա ֆիքսում է ցանկացած հայերեն գրված տեքստի ուղղագրական և տարրական կետադրական սխալները: Ծրագիրը մշակված է այնպես, որ ստանում ենք միայն գրավոր խոսքում կատարված սխալների թիվը և ընդհանուր գրված բառերի թիվը՝ որևէ տեսակի անձնական տեղեկատվություն ծրագրի միջոցով չի փոխանցվում: Մեկ ամիս տևած մշտադիտարկումներից հետո ֆոկուս խմբի մասնակիցների շրջանում իրականացվել է հարցում, որը պարզ հարցերի միջոցով վեր է հանում նրանց վերաբերմունքը տեղական և համապետական մակարդակում քաղաքական գործընթացներին: Տվյալների համադրումը ցույց է տալիս, որ բարձր գրագիտության աստիճան ունեցող հարցվածները զգալիորեն ավելի ակտիվ են քաղաքական գործընթացներում, քան մյուսները<sup>129</sup>:

Այս երևույթը շատ գիտնականներ են ուսումնասիրել: Այսպես, Ջ. Դյուին դպրոցը հասարակության մոդել է համարում և կարծում է, որ կրթության նպատակն անհատի մոտ պատասխանատվություն ու սեփական արարքների սոցիալական նշանակությունը գիտակցելու ունակություն ձևավո-

<sup>129</sup> St' u Мамиджаниян А., Саргсян А., Политическое образование как аспект непрерывного образования молодежи в процессе политической социализации. Человек и образование, с.116-121:

րելն է<sup>130</sup>: Մ. Վեբերը դիտարկել է կրթությունը սոցիալական շերտավորման հիմնախնդրի դիտանկյունից: Նա սոցիալական հեղինակության անկյունաքարային չափանիշներից մեկը համարում է ֆորմալ կրթությունը, որն արտահայտվում է պրակտիկ և տեսական ուսուցմամբ և համապատասխան կենսակերպի յուրացմամբ<sup>131</sup>:

Հարկ է նշել քաղաքական գործընթացների և կրթության միջև եղած հատուկ փոխկապվածության մասին. անցումային շրջանում գտնվող երկրներում տեղի ունեցող քաղաքական գործընթացները պահանջում են պատմամշակութային համատեքստում կրթության դերի վերախմաստավորում, քանի որ համապատասխան փոփոխությունները նաև ազդում են կրթության ոլորտի վրա<sup>132</sup> և քաղաքական կրթությունն էլ, իր հերթին անցումային գործընթացների կատալիզատոր է դառնում<sup>133</sup>:

Քաղաքական սոցիալականացման հարցում շարունակական կրթության դերը բացատրելու համար կարելի է դիմել ալեգորիայի, որը կիրառել է Բրիստոլի համալսարանի դասախոս Ջ.Ֆլոյդը. քաղաքական անգրագիտության յուրահատ-

---

<sup>130</sup> St' u Дьюи Дж. Творческая демократия – задача, которая стоит перед нами- Вестник Московского Университета. Сер.12. Политические науки. 2008. N2/, с.46-61:

<sup>131</sup> St' u Вебер М. Основные понятия стратификации. - Социс. 1994, N5, с.156:

<sup>132</sup> St' u Тарский Ю., Тарская О. Политические контексты интегративных процессов в сфере образования - 2012.ВЕСТНИК ПАГС - с.128:

<sup>133</sup> St' u Дюркгейм Э. Социология. Ее предмет, метод, предназначение - Москва. Канон. 1995, с.244:

կությունն այն է, որ մարդիկ չգիտեն, որ իրենք դա չգիտեն: Եվ հակառակը, միկրոալիքային վառարանի միջին վիճակագրական օգտատերը չգիտի, թե այն ինչպես է աշխատում, սակայն նա հասկանում է դա: Այլ կերպ ասած՝ քաղաքական գործընթացները հասկանալու դեպքում խոսքը սոցիալության փաստը չիմանալու մասին է, ինչը հանգեցնում է կայացվող քաղաքական որոշումների որակի վատթարացման, քաղաքական սոցիալականացման պասիվացման, երբեմն նաև ոչ գրագետ քաղաքական ակտիվության: Ժողովրդավարացման գործընթացի բարելավումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ «կրատոս»-ի բարելավմանը զուգընթաց բարելավվում է նաև «դեմոս»-ը: Ֆորմալ և շարունակական կրթությունը, և մասնավորապես քաղաքական կրթությունն այդ գործընթացի կատալիզատոր են դառնում<sup>134</sup>:

Կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ քաղաքական վարքագիծը ուսուցվող և դաստիարակվող է, այսինքն ենթակա է ձևավորման և շտկման: Անհատի քաղաքական կրթության կազմակերպման գործում կարևոր է հաշվի առնել կրթության՝ պոստմոդերնիստական մոդելի առանձնահատկությունը, որն ուղղված է ոչ թե անհատին կոնկրետ գործողություններ սովորեցնելուն, քանի որ դրանք շատ հաճախ են փոփոխվում, այլ սովորել սովորեցնելուն՝ պատրաստելով նրան կարճ ժամանակահատվածում նոր տեխնոլոգիաներ

---

<sup>134</sup> St' u "The Conversation" non-profit media service [Электронный ресурс]. – URL: <http://theconversation.com/why-we-need-to-teach-political-philosophy-in-schools-57749> (дата обращения 02.06.2017):

յուրացնելուն<sup>135</sup>: Քաղաքական կրթությունը պետք է զինի անհատին ոչ այնքան կոնկրետ քաղաքագիտական գիտելիքներով, այլ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման արդյունքում քաղաքական արագացող գործընթացները վերլուծելու գործիքակազմով: Եվրոպայի խորհուրդն ընդունել է կոմպետենտության հինգ հիմնական տեսակներ, որոնք, ըստ իրեն, պարտադիր են բուհ-երի շրջանավարտների համար: Դրանք են քաղաքական և սոցիալական կոմպետենտությունը, ինչպես նաև գրավոր ու բանավոր հաղորդակցման ունակությունները և շարունակական ուսումնառության կարողությունը, որոնք պետք է անկյունաքարային լինեն կրթական գործընթացում<sup>136</sup>:

Գիտելիքների, ունակությունների և կարողությունների ձեռքբերումը երիտասարդության համար քաղաքական գործընթացների սուբյեկտ դառնալու և շարժառիթ, և արդյունք կարող է լինել: Կրթության միջոցով երիտասարդությունը վարքագծի կարևոր օրինակներ, ինչպես նաև նորմեր և արժեքներ է ստանում, որոնք կարող են նպաստել հասարակական և քաղաքական հարաբերությունների համակարգում ինտեգրմանը:

Վերոնշյալից ելնելով՝ կրթության հիմնական խնդիրների

---

<sup>135</sup> St' u Kamalaeeva A. O neobkhodimosti formirovaniya osnovnykh kompetentsiy vypusknikov vuzov v usloviyakh sozdaniya edinoogo evropeyskogo prostanstva vyshego obrazovaniya - Vestnik TGPU. 2011. N1(103) - c.106:

<sup>136</sup> St' u Dzhidziguiri B. , Rezinikina L. Professionalno orientirovannoe samoobrazovanie kak instrument operedzhaushchego razvitiya lichnosti -Chelovek i obrazovanie, № 1 (42). – 2015, c. 79-84

շարքին (ուսանողների ճանաչողական ունակությունների զարգացում, «սովորելու ունակության» զարգացում, ինքնուրույն նպատակներ և խնդիրների լուծումներ գտնելու ունակությունների ներդրում, մտքի զարգացում և այլն) կարելի է դասել նաև քաղաքական սոցիալականացման խնդիրը:

Շարունակական կրթությունը՝ որպես կրթության տեսակ, որն առանձնանում է իր ճկունությամբ և ուսանողների առավել բարձր մոտիվացիայով, պետք է կարևոր դերակատարում ունենա այս գործընթացում: Շարունակական կրթության գլխավոր խնդիրը մարդկային հնարավորությունների շարունակական զարգացումը կազմակերպելն է, որն իրականանալի է մասնագիտական, մշակութային և քաղաքացիական ոլորտներում յուրաքանչյուր անհատի անձնական աճի նպատակով գիտելիքի և ունակությունների մշտական զարգացման հնարավորություն ստեղծելու միջոցով:

Գիտնականներն առանձնացնում են շարունակական կրթության 4 հիմնական նպատակներ<sup>137</sup>՝ անհատի դաստիարակում, աաշխատաշուկայի համար մասնագիտական պատրաստվածության բարձրացում, քաղաքացիական դաստիարակություն, մշակութային կրթություն:

Համապատասխանաբար, կարելի է համարել, որ շարունակական կրթության խնդիրներն են՝ անհատի զարգացումը, աշխատաշուկայում ինտեգրումը, ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության զարգացումը, բնակչության մշակութային մակարդակի բարձրացումը:

---

<sup>137</sup> St' u Մարգարյան Ա., Մեծահասակների կրթություն. Մեթոդներ և գործողություններ, Երևան, Ճարտարագետ, 2016, էջ 127:

Քաղաքական կուսակցությունները, լինելով քաղաքական սոցիալականացման հիմնական սուբյեկտներից, պետք է երիտասարդների քաղաքական սոցիալականացման ոլորտում կիրառեն շարունակական կրթության գործիքները: Քաղաքական սոցիալականացման գործընթացում կրթության կիրառման ինստիտուցիոնալ մոդել են կուսակցական դպրոցները: Նման կառույցներ շատ երկրներում են գործում (Հայաստան, Ռուսաստան, Չինաստան, ԱՄՆ, ԵՄ մի քանի երկրներ և այլն): Այս կառույցները միմյանցից տարբերվում են մի շարք չափորոշիչներով.

- կրթական գործընթացի կազմակերպման ձևաչափ (միանվագ դասընթացներ կամ ամրագրված կրթական ծրագիր);
- թիրախային լսարան (տարիք, կրթական մակարդակ, կուսակցական պատկանելիություն և այլն);
- կրթական ծրագիր (միայն քաղաքական կրթություն կամ ընդհանուր գիտելիքներ);
- շրջանավարտների հարցում կադրային քաղաքականություն (կուսակցության նոր անդամների հավաքագրում, առաջխաղացում կուսակցական կադրային ուղահայացով);
- ինչպես նաև մի շարք այլ չափորոշիչներ:

2012 թվականի դեկտեմբերին «Միացյալ Ռուսաստան» քաղաքական կուսակցությունը հանդես եկավ քաղաքական կրթության համակարգի ստեղծման նախաձեռնությամբ՝ այն հաշվառմամբ, որ այն համարժեքորեն օգտակար կլինի քաղաքական գործընթացի մասնակից բոլոր կուսակցությունների համար և կնպաստի քաղաքական մշակույթի և քաղաքա-

ցիական հասարակության ձևավորմանը<sup>138</sup>:

2016 թվականին նման նախաձեռնությամբ հանդես եկավ նաև Հայաստանի Հանրապետական կուսակցությունը՝ հայտարարելով Անդրանիկ Մարգարյանի անվան քաղաքական դպրոցի ստեղծման մասին: Դպրոցի ընդունելությունը բաց է բոլոր ցանկացողների համար՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Ուսումնական ծրագիրը պայմանականորեն բաժանված է չորս հիմնական մասի.

- ազգային գաղափարախոսություն;
- ներքաղաքական գործընթացներ (հասարակագիտության ոլորտում մի շարք գիտակարգերի տեսական և գործնական ուսուցում);
- միջազգային գործընթացներ (տեսական և գործնական մաս);
- անհատական աճ (քաղաքական գործունեության համար հիմնական հմտությունների ուսուցում):

Հաշվի առնելով ուսումնական ծրագրի կառուցվածքը՝ կարելի է ասել, որ ՀՀ-ում հիմնված քաղաքական դպրոցը հաշվի է առնում շարունակական կրթության բոլոր նպատակները և տիրապետում է այդ նպատակներից ծնված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ գործիքակազմին: Քանի որ քաղաքական դպրոցի թիրախային լսարանը ոչ միայն կուսակցական գործիչներն են, այլև 20-40 տարեկան բոլոր որակավորված և մոտիվացիա ունեցող անհատները՝ կարող ենք վստահաբար նշել Հայաստանում երիտասարդների քաղաքա-

<sup>138</sup> St' u "Взгляд" Деловая газета, [Электронный ресурс]. – URL: <https://www3.vz.ru/news/2012/12/4/610166.html> (дата обращения 04.06.2017)

կան սոցիալականացման հարցում դպրոցի ունեցած ծանրակշիռ դերի մասին:

Մի շարք քաղաքագետների տեսական ուսումնասիրությունները բացահայտել են կրթության կարևոր դերը քաղաքական սոցիալականացման հարցում: Շարունակական կրթության ինստիտուտները, ինչպիսին կուսակցական դպրոցներն են, կարող են իրական գործիք դառնալ կուսակցությունների համար՝ հասարակության մեջ երիտասարդների քաղաքական սոցիալականացումը կազմակերպելու նպատակով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ նման դպրոցների որակավորված և մոտիվացված շրջանավարտները կարող են մարզինալացվել այն դեպքում, եթե տվյալ երկրի քաղաքական մշակույթը թույլ չի տալիս նրանց կադրային աճ ապահովել: Այլ կերպ ասած՝ քաղաքական դպրոցների որակավորված և մոտիվացված շրջանավարտները կարող են հանդես գալ որպես տվյալ սոցիումի քաղաքական մշակույթի տրանսֆորմացիայի կրիտիկական տարր:

## **2.5 Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը քաղաքական գործընթացներում երիտասարդության մասնակցության վրա**

Նախկինում երիտասարդության քաղաքական սոցիալիզացիայի իրականացման հիմնական միջոցներն էին հանդիպումները, հանրահավաքները և այլն: Քաղաքական գործիչները երիտասարդության հետ շփվում էին հիմնականում ելույթների միջոցով, ինչպես օրինակ խորհրդային շրջանի քա-

ղաքական դերակատարները: Որոշ քաղաքական ուժեր շարունակում են օգտագործել նաև տպագիր թերթոնները և այլ տպագիր քաղաքական քարոզչական նյութեր երիտասարդության հետ կապի ապահովման համար: Ժամանակակից քաղաքական հաղորդակցությունն արմատապես փոխել է երիտասարդության արժեհամակարգը: Հատկապես արդի քաղաքական զարգացման տրամաբանությամբ պայմանավորված երիտասարդության սոցիալականացման գործընթացում գերակա որոշիչ դեր ունեն նոր տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները: Հասարակությունը, և մասնավորապես երիտասարդությունը, զգալիորեն ավելի հետաքրքրված է քաղաքականության էստետիզացմամբ: Այլ կերպ ասած՝ քաղաքականությունն այժմ շատ նման է շոու բիզնեսին իր խաղարկայնությամբ: Այն աշխարհը, որում այժմ ապրում է երիտասարդությունը, այլ է և՛ սպառողական արժեհամակարգով, և՛ ազատականությամբ, և՛ ազատության պահանջներով: Բազմաթիվ երիտասարդական շարժումներ ուղղված են ցուցադրականության ապահովմանը, մասնակիցների ի միջի ձևավորմանը, որը և բերում է դրանց զգալի պարզեցմանը:

Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդությունն իր մշակութային արժեքաբանությունը դրսևորում է համացանցի միջոցով, որտեղ ստեղծագործական ազատությունը համադրվում է տեսանելիության և հասանելիության հետ: Համացանցում երիտասարդների ինքնակազմակերպման ունակությունները զգալիորեն ավելի բարձր են, քան իրական կյանքում:

Հաճախ հենց երիտասարդությունը և նորագույն կոմունիկատիվ տեխնոլոգիաների կիրառումն է անցման խթանիչ

գործոն՝ այս կամ այն ձևով: ՀՀ-ում գործող քաղաքական կուսակցությունները լայնորեն օգտագործում են նորագույն տեխնոլոգիաները քաղաքական պայքարի համար: Ինչպես խորհրդային տարիներին Հայաստանի անկախացման հարցում մեծ դեր ունեցան «սամիզդատ» լրատվամիջոցները, այնպես էլ այսօր քաղաքացիական հասարակության ձևավորման և քաղաքական շփումների մեջ մեծագույն ավանդ ունեն համացանցային մամուլը և բլոգային հարթակները:

Մեղալը ունի նաև հակառակ կողմը: Ներքաղաքական սուր կոնֆլիկտների արձարծումը համացանցում բերում է հանդուրժողականության անկմանը և, որպես արդյունք, քաղաքական մշակույթի մակարդակի նվազմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ համացանցում բանավեճերը տարվում են շատ ավելի ագրեսիվ «տոնայնությամբ» և հիմնականում կուսակցությունների երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից, հետագայում դրանք կարող են հանգեցնել քաղաքական դաշտում համագործակցության մշակույթի վերացմանը:

Նշենք սակայն, որ քաղաքական գործիչների կողմից համացանցի օգտագործումն ավելացրել է հաշվետվողականության մակարդակը: Անձնային մակարդակում հաշվետվողականությանը նպաստող քաղաքական գործիչների հասանելիությունից բացի, ստեղծվել են նաև մի շարք պետական մարմինների քաղաքացիական մոնիտորինգի գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս քաղաքացիներին վերահսկել, թե ինչպես է իրականացվում կառավարումը<sup>139</sup>:

<sup>139</sup> Տե՛ս Հայկական համացանցի զարգացումները, Մամվել Մարտիրոսյան, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 8, 2012, էջ 29-35:

Քաղաքացիական հասարակությունը ՀՀ-ում հասել է այն մակարդակի, որ 2012թ. մայիսի 6-ին կայացած համապետական ընտրությունների ժամանակ ստեղծվել էր ընտրախախտումների գրանցման առցանց համակարգ՝ [www.iditor.am](http://www.iditor.am)<sup>140</sup>: Նմանատիպ համակարգ գործում էր նաև Ռուսաստանի դաշնային ընտրությունների ժամանակ ([www.kartanarusheniy.ru](http://www.kartanarusheniy.ru))<sup>141</sup>: Երկու երկրների դեպքում էլ ընտրությունների օրը կայքերը ենթարկվեցին ցանցահենների կազմակերպած DDOS հարձակման և պրակտիկորեն չաշխատեցին: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է երկու երկրներում կիրքերանվտանգության ցածր մակարդակի մասին:

Նորագույն տեխնոլոգիական գործիքները օգտագործվում են ոչ միայն ընտրական, այլ նաև ամենօրյա քաղաքական գործընթացների ժամանակ: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում սոցիալական մեդիան դարձել է քաղաքական գործիչների հիմնական ազիտացիոն զենքերից մեկը: Էական տարբերությունը կայանում է նրանում, որ սոցիալական մեդիայի պարագայում առկա են նաև հետադարձ կապի պարզ մեխանիզմներ, որոնք հեշտացնում են հասցեական աշխատանքը յուրաքանչյուր ընտրողի հետ: Տեղեկատվական հեղափոխությունը մի շարք քաղաքագետները իրավամբ համարում են դասական քաղականության վախճանը, քանի որ

<sup>140</sup> Տե՛ս Հայաստանի ինտերնետ-օգտատիրոջ պատկերը, Մամվել Մարտիրոսյան, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 5, 2012, էջ 35-41:

<sup>141</sup> Տե՛ս Котенко И.В., Саенко И.Б., Юсупов Р.М. Аналитический обзор докладов между-народного семинара «Научный анализ и поддержка политик безопасности в киберпространстве», Труды СПИИРАН. 2010. Вып. 2(13). С.226-248:

դրա հանրայնացմամբ վերացել են տեղեկատվական և կուսակցական ֆիլտրերը. յուրաքանչյուր ոք կարող է գեներացնել բովանդակություն՝ քննթենթ, որի տարածումը է կախված բացառապես դրա որակից և ժամանակից: Ուստի կուսակցական և այլ ինստիտուցիոնալ ֆիլտրերը այլևս ի գորու չեն որոշելու երկրի քաղաքական գործընթացների օրակարգը: Այս գործընթացը Financial Times պարբերականին տված իր հարցազրույցում ՀՀ չորրորդ Նախագահ Արմեն Սարգսյանը անվանել էր «քվանտային քաղաքականություն»<sup>142</sup>:

2018 թվականից սկսած համացանցի հայկական հատվածում առաջացան մի շարք նոր թրենդներ, որոնցից մեկն էր այսպես կոչված fake news-ի դեմ պայքարը՝ փաստերի ստուգման հարթակների ստեղծումը: Կեղծ լուրերի ֆենոմենը չարիք է դարձել ամբողջ աշխարհի քաղաքական գործիչների համար՝ ծառայելով որպես պոպուլիստների ամենագործուն գեներ: Ստեղծվեցին մի շարք նմանօրինակ հարթակներ, որոնց մեծ մասը գործում է ցայսօր:

Անուրանալի է նորագույն տեխնոլոգիաների և, մասնավորապես, սոցիալական մեդիայի դերը բողոքի ակցիաների և ցույցերի կազմակերպման գործում: Ինչպես մի շարք երկրներում՝ Հայաստանում էլ հակակառավարական ցույցերի ճնշող մեծամասնությունը կազմակերպվում է սոցիալական մեդիայի գործիքակազմի ակտիվ կիրառմամբ: Սոցիալական մեդիայի օգտագործումը ապահովում է նաև երիտասարդական քաղաքականության խաղարկայնության բաղադրիչի ապահովումը:

Նշենք, որ վերջին շրջանում խիստ ակտիվացել է նորա-

գույն տեպնոլոգիաների և, մասնավորապես, սոցիալական ցանցերի օգտագործումը ոչ միայն PR, այլ նաև GR նպատակներով: Իշխող քաղաքական ընտրանին լայնորեն օգտագործում է այս գործիքակազմը հասարակության հետ երկկողմանի կապի ապահովման, ինչպես նաև հորիզանական կապերի կառուցման համար:

Մի բան կարելի է նշել միանշանակ՝ քաղաքական գործընթացներն այլևս չեն լինի նույնը: Նորագույն տեխնոլոգիաները, տեղեկույթի արագ փոխանցման գործիքակազմը մուտք է գործել մեր առօրյա կյանք և քաղաքականություն և մնալու է այնտեղ: Ուստի քաղաքական ակտորները պարտավոր են գտնել դրանց ամենաարդյունավետ կիրարկումը քաղաքական գործընթացներում:

Մարդու իրավունքների իրացման և իմացության ներկայիս մակարդակը մեծապես պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացվածությամբ, տեղեկատվության հասանելիության և տարածվածության բարձր մակարդակով: Տեղեկատվական տեխնոլոգիաների թափանցումը մարդկանց կյանքի գրեթե բոլոր բնագավառներ նպաստում է իրավունքների իրացման ձևերի ընդլայնմանը և դյուրացմանը: Ներկայումս պետական ցանկացած մարմնի իրավասությանը վերապահված հարցով հնարավոր է դիմում, բողոք կամ առաջարկ ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ առանց այցելելու տվյալ պետական մարմին կամ կատարելու գրավոր փաստաթղթավորման հետ կապված գործողություններ:

1980-90-ական թվականներին ցանցային տեղեկատվական տեխնոլոգիաները կանգնեցին նույն ճանապարհին, ինչ երկու տասնամյակ առաջ հաղթահարեցին համակարգչային

<sup>142</sup> <https://www.ft.com/content/e4eabea2-c2f9-11e8-8d55-54197280d3f7>

տեխնոլոգիաները: Ի սկզբանե ունենալով ռազմական նշանակություն՝ համակարգչային և ցանցային տեխնոլոգիաները շուտով ապացուցեցին իրենց կարևորությունը և հասանելիությունը սկզբում ռազմաարդյունաբերական համալիրից դուրս գիտնականների և հետազոտողների համար, հետագայում խոշոր բիզնեսի, ավելի ուշ նաև փոքր բիզնեսի, և, վերջապես, սովորական քաղաքացիների համար<sup>143</sup>:

1990-ական թվականներից սկսած հետազոտողները հրապարակել են բազմաթիվ հետազոտություններ էլեկտրոնային մամուլի օգտագործման և քաղաքական մասնակցության փոխհարաբերության մասին: Այս հետազոտությունների մեծ մասում շեշտադրումը կատարվել է այն փաստի վրա, թե արդյոք հասարակության կողմից էլեկտրոնային մամուլի գործածության բարձրացումը կարող է հանգեցնել նրանց իրական (օֆլայն) մասնակցությանը քաղաքական կյանքին: Իրականացված հետազոտությունների արդյունքները միանշանակ չեն. առկա են և՛ դրական եզրահանգումներ, և՛ հակառակի մասին պնդումներ: Սակայն ամերիկյան ընտրական գործընթացի վերաբերյալ իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հաջորդող ընտրություններում նախորդի համեմատությամբ էլեկտրոնային լրատվությունը և գովազդը ավելի մեծ ազդեցություն են գրանցել<sup>144</sup>:

Քաղաքական գործընթացների վրա համացանցի ազդե-

<sup>143</sup> St' u C.Г. Турунок, Интернет и политический процесс, гражданское общество и правовое государство, 2001, N 2 (<http://ict.informika.ru/ft/003982/b006tURONOK.pdf>).

<sup>144</sup> St' u Bruce Bimber, Lauren Copeland, Digital Media and Traditional Political Participation Over Time in the U.S., Journal of Information Technology & Politics, 10:125–137, 2013, page 125-127:

ցության հետ կապված՝ հետազոտողները շեշտադրում են մեկ այլ կարևոր խնդիր ևս. կոնկրետ ինչը համարել համացանցային ակտիվության արդյունք, քանի որ, ի տարբերություն դասական մասնակցության տեսակների, արդյունքը ոչ միշտ է ակնհայտ: Պարզվում է, որ քանակական տվյալները, ինչպիսիք են ներգրավված օգտատերերի, օրական այցելուների քանակը, հավանումների (like) և կիսումների (share) քանակը, երկրորդական տվյալներ են<sup>145</sup>:

Ներկայումս տեղի է ունենում տարբեր հասարակական ենթահամակարգերի ակտիվ մեղիականացում: Հասարակական կյանքում այնպիսի հասկացությունների ներթափանցումը, ինչպիսիք են «էլեկտրոնային փող», «էլեկտրոնային հերթ», «առցանց ընդունարան», «պետական ծառայությունների պորտալ», «էլեկտրոնային ժողովրդավարություն», «էլեկտրոնային կառավարություն», վկայում է այն մասին, որ «տեղեկատվական հասարակություն» կոնցեպտն արդեն իրականություն է, ոչ թե հնարավոր ապագա: Դ. Բելլի կարծիքով հասարակությունը երեք ոլորտների միասնություն է՝ տեխնիկատնտեսական համակարգ, քաղաքական համակարգ և մշակույթ: Հետինդուստրիալ հասարակության հայեցակարգն ավանդաբար կապվում է տեխնիկատնտեսական ոլորտի զարգացման հետ: Ընդ որում, քաղաքականությունը մնում է ինքնավար, իսկ մշակույթը՝ պատմական: Նշված թեզիսը պահպանում է իր ուժն այնքան ժամանակ, քանի դեռ միասնական և համաշխարհային համացանցի ձևավորումը չի հանգեցնում բոլոր

<sup>145</sup> St' u A.В. Соколов, Интернет-технологии политического участия и их влияние на офлайн-политику, стр. 304:



ենթահամակարգերի կախվածությանը մեղիայից<sup>146</sup>:

Այժմ կարևոր քաղաքական կառավարման որոշումների կայացմանը քաղաքացիների մասնակցության ինստիտուցիոնալացման զարգացող ուղղություններից է էլեկտրոնային «ցանցային» կամ «օնլայն» քաղաքականության կոնցեպցիայի առաջ քաշումը և զարգացումը: Որոշակի հետազոտությունների հիման վրա առանձնացվում են քաղաքական մասնակցության պայմանական և ոչ պայմանական ձևերը: Պայմանական է համարվում քաղաքացիների՝ կարգավորող օրենսդրությանը համապատասխան իրականացվող քաղաքական մասնակցությունը: Ոչ պայմանական է համարվում մասնակցությունը, որը խախտում է նշված նորմերը (կանոնները) և արտահայտվում է ուղիղ գործողությամբ՝ շրջանցելով շահերի ներկայացման համակարգը<sup>147</sup>: Ոչ պայմանական մասնակցության մասով կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական դրսևորումները՝ 1. պետական իշխանության, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիների կայքերի և պորտալների վրա հաքերային հարձակումները, կիբեր հարցազորությունները, 2. քաղաքական պրովոկացիաները որպես «սև PR»-ի տեխնոլոգիա (կրկնօրինակ կայքերի կամ պրոֆիլների ստեղծում, կեղծ տեղեկատվության կանխամտածված տարածում):

Սույն ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշ-

<sup>146</sup> Տե՛ս Ս. В. Ополев, Особенности политической коммуникации в современном медиaprостранстве, [http://scjournal.ru/articles/issn\\_1993-5552\\_2016\\_2\\_21.pdf](http://scjournal.ru/articles/issn_1993-5552_2016_2_21.pdf):

<sup>147</sup> Տե՛ս Э.И. Авзалова, Интернет-участие как новая форма политического участия граждан, Ученые записки казанского университета, том 157, кн. 1, гуманитарные науки, 2015, стр. 188:

տաբար կքննարկենք նաև քաղաքական հաղորդակցություն հասկացությունը՝ հասկանալու տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության հնարավորությունը և աստիճանը դրա վրա: Այսպես, քաղաքական հաղորդակցության բնորոշումները տարբեր են: Ամենալայն իմաստով քաղաքական հաղորդակցությունն ընդգրկում է հասարակությունում ոչ ֆորմալ հաղորդակցության գործընթացների ողջ շարքը, որոնք քաղաքականության վրա ամենատարբեր ազդեցությունն են ունենում: Առավել նեղ իմաստով քաղաքական հաղորդակցությունն իրենից ներկայացնում է սոցիալական սուբյեկտի տեղեկատվական-քարոզչական գործունեություն՝ ուղղված սոցիալ-քաղաքական տեղեկատվության ստեղծմանը և տարածմանը, այլ սուբյեկտների մոտ մտածողության և գործողությունների ձևավորմանը: Այս գործունեությունն իրականացվում է հատուկ սոցիալ-քաղաքական ինստիտուտների՝ զանգվածային լրատվության միջոցների միջոցով<sup>148</sup>:

Չնայած քաղաքական հաղորդակցությունը նույնքան հին է, որքան քաղաքականությունը, հենց քաղաքական նպատակների համար, հատկապես նախընտրական արշավների անցկացման ժամանակ, ժամանակակից զանգվածային լրատվամիջոցների կազմակերպված օգտագործումն է, որ առաջին հերթին հանգեցրեց քաղաքական հաղորդակցության համակարգային հետազոտության զարգացմանը և ձևավորեց իր հիմնական ժամանակակից ընկալումը: Այնուամենայնիվ, քաղաքական հաղորդակցությունն ավելին է, քան քաղաքական քարոզարշավը: Մեյնուր-Ուրեի (1974թ.) օգտագործած տերմիններում այն ունի հորիզոնական, ինչպես նաև ուղղա-

<sup>148</sup> Տե՛ս նույն աշխատությունը, էջ 100:

հայաց հարթություն: Առաջինը վերաբերում է հավասար հաղորդակցությանը՝ թե՛ նույն քաղաքական էլիտայի անդամների, թե՛ քաղաքացիների միջև, ովքեր համագործակցում են և միավորվում միասին: Ուղղահայաց կապը տեղի է ունենում կառավարության (կամ կուսակցությունների) և մարդկանց միջև (սկզբունքորեն, ցանկացած ուղղությամբ): Նախաձեռնությունների վաղ շեշտադրումը կենտրոնացած էր ուղղահայաց հարթությունում (կառավարությունից կամ կուսակցությունից դեպի քաղաքացիներ և հետևորդներ)՝ «վերևից ներքև» հոսքի վրա: Այնուամենայնիվ, դա հանգեցրեց էլիտաների շրջանում հաղորդակցման անտեսմանը և միջանձնային, ոչ պաշտոնական հաղորդակցությանը<sup>149</sup>:

Քաղաքական կամ կառավարման որոշումների կայացմանը տեխնոլոգիաների միջոցով քաղաքացիների մասնակցության աննախադեպ օրինակ է 2012թ. Իսլանդիայի Սահմանադրության մշակման աշխատանքների համացանցային ձևաչափի կիրառումը: Հիմնական օրենքի նախագծի մշակման համար ստեղծվել էր 25 քաղաքացիներից բաղկացած խորհուրդ, ամբողջ գործընթացի ընթացքում սոցիալական ցանցերի (Facebook, Twitter և նույնիսկ YouTube) միջոցով հավաքագրվել են քաղաքացիների առաջարկությունները, իսկ վերջնական արդյունքը հաստատվել է հանրաքվեի արդյունքում:

Ինչպես տեսնում ենք, քաղաքական իրավունքներն ու գործընթացներն անմասն չեն մնացել տեխնոլոգիական զարգացումներից, և, անշուշտ, կատարելագործվել են անձի քա-

<sup>149</sup> St' u Encyclopedia of Government and Politics, Volume I, edited by Mary Hawkesworth and Maurice Kogan, 1992, page 472.

ղաքական մասնակցության կամ ակտիվության ձևերը: Քաղաքական իրավունքների իրացման ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների գործածությունը կարելի է պայմանականորեն տարանջատել երկու տեսակի.

- տեխնոլոգիաների գործածումը պետական մարմինների կողմից՝ անձի քաղաքական իրավունքների ապահովման նպատակով, օրինակ՝ ընտրությունների ժամանակ տարբեր տեխնոլոգիաների և/կամ սարքավորումների գործածությունը, ինչպես նաև ընտրական գործընթացների թափանցիկության կամ արդյունքների հրապարակման համար գործածվող էլեկտրոնային միջոցները (ուղիղ հեռարձակում, կայք-էջերում տվյալների հրապարակում և այլն),

- տեղեկատվական տեխնոլոգիաների գործածությունը կոնկրետ անձի կամ անձանց խմբի կողմից (և՛ ֆորմալ (հասարակական-քաղաքական միավորումներ) և՛ ոչ ֆորմալ (պարզապես ընդհանուր գաղափարի շուրջ համախմբված անձանց խումբ) քաղաքական հայացքների արտահայտման կամ քաղաքական պայքարի իրականացման նպատակով:

Կոնկրետ օրինակների անդրադառնալով՝ պետք է նշել, որ համացանցի՝ որպես քաղաքական ռեսուրսի և գործիքի զարգացման կարևոր փուլ է հանդիսացել 1998 թվականը: Զարգացած ժողովրդավարական երկրներում, որտեղ համաշխարհային ցանցի լսարանը դարձել է ընտրազանգվածի քաղաքականապես և սոցիոլոգիապես կարևոր կատեգորիա, մի շարք քաղաքական գործիչներ օգտագործեցին համացանցը՝ որպես նախընտրական քարոզչության տեխնոլոգիա: Ամենավաղ օրինակ կարող է ծառայել 1998 թվականին Մինեսոտա նահանգի նահանգապետի ընտրություններում Դ. Վենտու-

րայի հաղթանակը: Անտեսելով պահպանողական տրամադրված մեդիայի տերերին՝ նա համացանցի միջոցով ընտրողների հետ անմիջական կապ հաստատեց՝ մոբիլիզացնելով 3.000 կամավորների և հավաքագրելով ավելի քան 60.000 դոլար գումար: Հակառակորդները՝ դեմոկրատական և հանրապետական կուսակցություններից, նախընտրական քարոզչության համար ծախսեցին ավելի քան 15 միլիոն դոլար՝ այն դեպքում, երբ Վենտուրան, հաղթանակ տանելով, իր ֆոնդում ուներ ընդամենը 500.000 դոլար և նախընտրական շտաբի միայն մեկ վճարվող աշխատողի՝ վեր մասնագետի: «Համացանցը դարձավ մեր քարոզչության նյարդային համակարգը, նշել է Վենտուրան, - վեր-կայքը մեզ համար ոչ միայն նորություն է, այլև հենց մոբիլիզացիան է գործողության մեջ»<sup>150</sup>:

Ամերիկացիների կյանքում թվային տեխնոլոգիաների ազդեցության վերաբերյալ զեկույցում «Հանուն թվային ապագայի» կենտրոնի կողմից 2017թ. կատարված ուսումնասիրության համաձայն՝ 16 և ավելի տարեկան հարցվածների 81%-ը համաձայնել կամ հաստատապես համաձայնել է, որ համացանցը կարևոր է դարձել քաղաքական քարոզչության համար: Հարցվածների 41%-ը հավատում է, որ համացանցի օգտագործմամբ քաղաքական պաշտոնյաներն ավելի շատ կանհանգստանան իրենց գործողությունների վերաբերյալ հանրային կարծիքի մասին, իսկ 33%-ը չի համաձայնել կամ խորապես չի համաձայնել այդ դատողության հետ: Իսկ 16 և ավելի տարեկան հարցվողների 69%-ը համաձայն է, որ հա-

<sup>150</sup> St' u C.Г. Туронок, Интернет и политический процесс, гражданское общество и правовое государство, 2001, N 2 (<http://ict.informika.ru/ft/003982/006tURONOK.pdf>).

մացանցը կարող է օգնել հասարակությանը ավելի լավ հասկանալ (ընկալել) քաղաքականությունը<sup>151</sup>:

Համակարգված ձևով ներկայացնելով տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով քաղաքական գործընթացներին քաղաքացիների մասնակցության ձևերը՝ դրանք կարող ենք խմբավորել հետևյալ կերպ.

- էլեկտրոնային քվեարկություն,
- քաղաքական ուղղվածությամբ կայքերի, բլոգների, քննարկման հարթակների, ֆորումների, էլեկտրոնային թերթերի և ամսագրերի ստեղծում,
- օրենսդրական նախաձեռնությունների, հանրագրերի (պետիցիաների), դիմումների ներկայացում քաղաքական որոշումների մշակման, քաղաքական ծրագրերի, տեղական բյուջեների վերաբերյալ,
- քաղաքական կուսակցությունների հեռակա ժողովների, վիդեոկոնֆերանսների անցկացում,
- քաղաքական ակցիաների, հավաքների, գործադուլների վերաբերյալ տեղեկատվության տարածում<sup>152</sup>:

Ընտրական գործընթացում էլեկտրոնային քվեարկության հնարավորություն և կարգ է սահմանված նաև ՀՀ գործող «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով: Այսպես՝ հիշյալ օրենքի 62-րդ հոդվածի համաձայն. «Քվեարկու-

<sup>151</sup> St' u The 15th annual study on the impact of digital technology on Americans, Center for the Digital Future, 2017 Digital Future Project, pages 121-125 (<https://internetstiftelsen.se/docs/2017-Digital-Future-Report.pdf>).

<sup>152</sup> St' u Э.И. Авзалова, Интернет-участие как новая форма политического участия граждан, Ученые записки казанского университета, том 157, кн. 1, гуманитарные науки, 2015, стр. 188-189.

յան օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները կարող են մասնակցել Ազգային ժողովի ընտրություններին՝ քվեարկելով էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և ժամկետներում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն էլեկտրոնային եղանակով քվեարկողների կամքի ազատ արտահայտման հնարավորությունը և քվեարկության գաղտնիությունը: Էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողներն իրենց ձայնը տալիս են միայն ընտրություններին մասնակցող կուսակցություններին: Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից)՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների վրա»:

Այսպիսով, ՀՀ գործող օրենսդրությամբ էլեկտրոնային ձևով քվեարկության իրավունք ունեն հետևյալ սուբյեկտները՝

- քվեարկության օրը Հայաստանում չգտնվող դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամները,

գիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամները,

- օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողները, նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամները,

- Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից)՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները:

Ընտրությունների ժամանակ էլեկտրոնային քվեարկությունը ներկայումս ընդունելի և տարածված է մի շարք երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Էստոնիան, Բրազիլիան, Ֆիլիպինները<sup>153</sup>:

Հայաստանի Հանրապետությունում որոշակի կատեգորիայի ընտրողների համար սահմանված էլեկտրոնային քվեարկության կարգի մասին խոսելուց գատ ներկայացնենք նաև էլեկտրոնային որոշակի համակարգեր, որոնք ևս քաղաքական գործընթացներին մասնակցության և քաղաքական իրավունքների իրացման միջոց են:

Ներկայումս ներդրված էլեկտրոնային կառավարման համակարգերը տեղեկատվական տեխնոլոգիաների գործածության և քաղաքական մասնակցության կարևոր գործիք են: Այս-

<sup>153</sup> Տե՛ս նույն աշխատությունը, էջ 189:

պես՝ քաղաքական կյանքին կամ որոշումների կայացմանը մասնակցության կարևոր հնարավորություն է ընձեռում իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք և առաջարկություններ ներկայացնելու ինստիտուտը, որպիսի կարգը գործել է և այժմ էլ գործում է հանրային քննարկումների գործընթացի շրջանակներում՝ նախկինում «Իրավական ակտերի մասին», իսկ ներկայումս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված կարգով<sup>154</sup>: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներն իրականացվում են համապատասխան ոլորտի լիազոր մարմնի պաշտոնական կայք-էջում, ինչպես նաև նման քննարկումների համար հատուկ ստեղծված [www.e-draft.am](http://www.e-draft.am) կայքում հրապարակվելու միջոցով, որտեղ մինչև Կառավարության կողմից հավանության արժանանալը և Ազգային ժողով ներկայացվելը տեղադրվում և քննարկման են ներկայացվում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, այդ թվում՝ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերը: Հիշյալ [www.e-draft.am](http://www.e-draft.am) կայքի միջոցով ցանկություն ունեցող անձինք կարող են գրանցվել և ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտարկումները հա-

<sup>154</sup> «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **հանրային քննարկումը** իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով նույն օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց է:

մապատասխան իրավական ակտի նախագծի վերաբերյալ: Կայքն անգամ պարունակում է համապատասխան վիճակագրություն կայքում գրանցման ակտիվության, կատարված այցելությունների քանակի, առավել շատ նախագծեր տեղադրած պետական մարմինների վերաբերյալ (այս պահին հասանելի գրաֆիկի համաձայն՝ առավել շատ նախագծեր տեղադրել է Արդարադատության նախարարությունը<sup>155</sup>):

Էլեկտրոնային եղանակով իրավունքների և շահերի պաշտպանության, այդ թվում առաջարկությունների ներկայացման հնարավորություն է ստեղծվել նաև [www.e-request.am](http://www.e-request.am) կայքի ստեղծմամբ: Վերջինիս միջոցով քաղաքացիները կարող են իրենց գործով իրավասու՝ հասցեատեր պետական մարմնին, ներկայացնել դիմում, բողոք կամ առաջարկություն: Նման ձևով ներկայացված դիմումին պատասխան է տրվում կրկին էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով դիմումատու քաղաքացու էլեկտրոնային փոստի հասցեին:

Հայաստանում արդեն իսկ ներդրված և գործող վերոնշյալ երկու հարթակների միջոցով քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ-ում բնակվող ցանկացած այլ անձ, կարող է անմիջականորեն մասնակցել երկու կարևոր գործընթացի՝ իրավունքների արտադատական պաշտպանություն հայցել և մասնակցել օրենսդրական գործընթացին:

Վերոնշյալ գործընթացները և համակարգերը ներկայացվում են անմիջականորեն սույն ուսումնասիրության շրջանակներում, քանի որ իրականում և փաստացիորեն տվյալ տեղեկատվական համակարգերից օգտվողները՝ օգտատերե-

<sup>155</sup> <https://www.e-draft.am/statistics>

ըր, հենց երիտասարդ անձինք են, ովքեր տիրապետում են դրանցից օգտվելու կանոններին և տեխնիկական միջոցներին:

Անդրադառնալով տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությանը քաղաքականությանը երիտասարդների մասնակցային գործընթացի վրա՝ անհրաժեշտ ենք համարում նաև ներկայացնել էլեկտրոնային արդարադատության համակարգի ներդրման վերաբերյալ ծրագրերը, որոնք առաջին հայացքից գուցե ուղղակիորեն չեն առնչվում քաղաքական իրավունքներին կամ քաղաքական մասնակցությանը, սակայն, մեր համոզմամբ, համակարգային ձևով փոխկապված են: Քաղաքական գործընթացները դիտարկելով համակարգայնության մեջ՝ չենք կարող անտեսել նաև արդարադատության իրականացման արդյունավետության և մատչելիության հարցերը, քանի որ, ի վերջո, ցանկացած, այդ թվում՝ քաղաքական գործընթացի բազմաթիվ հարցեր, իրենց վերջնական հանգուցալուծումը ստանում են հենց դատարանների՝ արդարադատություն իրականացնող մարմինների միջոցով:

Այսպես, էլեկտրոնային արդարադատության համակարգի ներդրմամբ նախատեսվում է աշխարհի ցանկացած կետից դատական գործընթացներին հետևելու հնարավորություն ապահովել՝ հայցադիմումների մուտքագրումից մինչև դատական նիստերի օնլայն կազմակերպում: Համակարգը դեռևս մշակման և փորձարկման փուլում է գտնվում, նախատեսվում է կյանքի կոչել 2019թ. հոկտեմբեր ամսից<sup>156</sup>:

Տեղեկատվական համակարգերի առավելությունը ցան-

կացած այլ համակարգի կամ մարդկությանը հայտնի այլ գործընթացների համեմատությամբ կայանում է դրա արագության մեջ: Մասնավորապես՝ տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ ցանկացած տեղեկություն կամ նյութ հազարապատիկ ավելի արագ է շրջանառվում կամ հասու դարձվում դրա հասցեատերերին, կամ նույնիսկ անձանց անորոշ շրջանակի, քան այլ դեպքերում:

Քաղաքական ցանկացած գործընթացի կամ քաղաքական իրավունքների իրացման ժամանակ տեխնոլոգիաների կիրառումն ևս ունի նույն առավելությունը՝ առաջին հերթին արագություն, իսկ երկրորդ հերթին՝ տարածվածություն (համընդհանրություն), քանի որ օրըստօրե ավելանում է տեխնոլոգիաներից օգտվողների քանակը, այդ թվում՝ ոչ երիտասարդների (ավելի տարիքով անձանց) շրջանում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների գործադրմամբ ներկայումս հնարավոր է իրականացնել քաղաքական իրավունքների զգալի մասը՝ հայտնել կարծիք, կազմակերպել օնլայն քննարկումներ, անցկացնել ֆլեշմոբեր, ներկայացնել հանրագրեր, կատարել տեղեկության տրամադրման հարցումներ, էլեկտրոնային ձևով ներկայացնել հասարակական կամ քաղաքական միավորման (կուսակցության) գրանցման հայտ ([www.e-register.am](http://www.e-register.am) կայքի միջոցով) և այլն:

Այսպիսով, առցանց քաղաքական պրակտիկան ներառում է քաղաքական մասնակցության տարբեր ձևեր: Տեխնոլոգիաների կիրառմամբ քաղաքական մասնակցությունն ունի մի շարք առավելություններ, որոնց մասին խոսեցինք վերը: Տեղեկատվական տեխնոլոգիաները նախնառաջ թույլ են տա-

<sup>156</sup> <https://www.youtube.com/watch?v=V4RQJJKOVx8>

լիս շրջանցել բազմաթիվ խոչընդոտներ (Ժամանակային, աշխարհագրական, մշակութային սահմանափակումները)՝ ամբաստանելով համախմբվածությունն անկախ բնակության վայրից և հնարավորություն տալով արագ արձագանքել առաջացող քաղաքական խնդիրներին<sup>157</sup>:

Բազմաթիվ արևմտյան քաղաքագետներ և մարդաբաններ (անթրոպոլոգներ) պնդում են, որ ժողովրդավարությունը և առողջ հասարակությունը պահանջում են քաղաքացիների ակտիվ մասնակցություն տարբեր լրատվական (մեդիա) հարթակների միջոցով: Նոր մեթոդոլոգիաները աննկարագրելիորեն կոտրել են «դոմինանտ հաղորդակցության ոլորտը», որը ավանդաբար վարվում էր քաղաքական էլիտայի կողմից՝ ազդելով թվային ոլորտի և խոր արմատներ ունեցող ժողովրդավարական մշակույթի վրա, որը թույլ է տալիս քաղաքացիներին՝ նոր հարթակների միջոցով լայնորեն մասնակցել և հաղորդակցվել քաղաքական դեբատներին և ժողովրդավարական գործընթացներին, արտահայտվել և ինքնաներկայանալ: Որոշ արևմտյան հետազոտություններ ցույց են տվել ընտրական քարոզարշավների ընթացքում նոր լրատվամիջոցների և քաղաքական մոբիլիզացիայի, հանրության մասնակցության և ժողովրդավարացման միջև դրական փոխհարաբերություն: Մյուս կողմից, ոչ արևմտյան հասարակություններում կատարված հետազոտություններն ևս բացահայտել են, որ նոր մեդիա տեխնոլոգիաների ներթափանցումն աջակցում է քա-

<sup>157</sup> Տե՛ս Ե.И. Авзалова, Интернет-участие как новая форма политического участия граждан, Ученые записки казанского университета, том 157, кн. 1, гуманитарные науки, 2015, стр. 192.

ղաքականապես առավել ներգրավված հասարակության ձևավորմանը, ինչը չընդգրկված ձայներին թույլ է տալիս սոցիալական ներկայություն ունենալ և մարտահրավեր նետել գերիշխող քաղաքական կամ սոցիալական դիսկուսներին, որոնք անհրաժեշտ են սոցիալական համերաշխության և խաղաղության խթանման համար<sup>158</sup>:

Քաղաքական քարոզչությունը համացանցում գնալով ավելի տարածուն է դառնում: Օգտատերերի հսկայական զանգվածը հրաշալի հնարավորություն է ընտրողներին սեփական կողմը գրավելու համար: Հատկապես դա վերաբերում է երիտասարդներին, քանի որ վերջիններս նախընտրում են նորությունների մասին տեղեկանալ համացանցից, ոչ թե հեռուստատեսությունից և թերթերից: Համացանցի օգտագործումը որպես քարոզչության հարթակ, առավելություն ունի մի շարք պատճառներով.

- համացանցն առավել հասանելի է, համացանցում նյութերի տեղադրումը և տարածումն ավելի մատչելի է, քան հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ թերթերով;

- սոցիալական ցանցերում մեծաթիվ անձինք են, ովքեր ակտիվ կենսաձև (դիրքորոշում) ունեն, այդ թվում՝ քաղաքական հարցերում, օրինակ՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում գրանցված է Հայաստանի ավելի քան 1.000.000 օգտատեր, որոնց 72 տոկոսը 13-34 տարեկան երիտասարդներ են, ուստի

<sup>158</sup> Տե՛ս Sadia Jamil, Politics in a Digital Age: The Impact of New Media Technologies on Public Participation and Political Campaign in Pakistan’s 2018 Elections – A Case Study of Karachi, Global Media Journal ISSN 1550-7521, 2018, Vol.16 No.31:130, page 1.

համոզել նրանց քվեարկել այս կամ այն թեկնածուի օգտին՝ շատ արդյունավետ է;

- հետևորդների մեծ քանակը հաշվի (էջի) տիրոջը տալիս են ավելի շատ հնարավորություններ, քան ավանդական ԶԼՄ-ները, համացանցային էջերը, մամուլը, հեռուստատեսությունը: Օրինակ, Հայաստանի վարչապետն իր էջում ունի 525.000 հետևորդ, ինչը թավշյա հեղափոխության և Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, ինչպես նաև հետհեղափոխական ժամանակաշրջանում հնարավորություն էր տալիս օպերատիվ ձևով շփվել ընտրողների հետ և նրանց հետ հետադարձ կապ պահպանել:

Քաղաքական քարոզը համացանցում և սոցիալական ցանցերում ունի որոշ ռիսկեր ու մարտահրավերներ, որոնք հատուկ են աշխարհի բոլոր երկրներին: Տարբեր երկրներում ներկայումս նկատվում է սոցիալական ցանցերով քարոզչության իրականացման իրավական կարգավորման ուղղությամբ միջոցների ձեռնարկում: Քարոզչական գործընթացին մեծ վնաս են հասցնում ոչ պաշտոնական միությունները, կեղծ (ֆեյք) օգտատերերը, որոնք կարող են ստեղծվել ցանկացած անձի կողմից, ունեն ցանկացած բովանդակություն և շատ դեպքերում իրենց գործողություններով խախտում են քաղաքացիների անձնական ոչ գույքային իրավունքները, որոնց պաշտպանությունը գործնականում հնարավոր չէ: Որպես ասվածի հաստատում՝ կարելի է մեջբերել ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ 2019 թվականի հունվարի 21-ի զեկույցը, որում նշվում է, որ ֆեյսբուքյան «կեղծ» օգտատերերը հանդիսացել են սադրանքների, ապատեղեկատ-

վության և վիրավորանքների հիմք՝ ուղղված առանձին թեկնածուների դեմ<sup>159</sup>:

Այսպիսով, համացանցը քաղաքականության մեջ երեք հիմնական փոփոխություններ է կատարել: Առաջինն այն եղանակն է, որով քաղաքական գործիչները կապ են հաստատում ընտրող հանրության հետ: Նախկինում քաղաքական գործիչները կարող էին կապ հաստատել ընտրողների հետ՝ միայն ստեղծված լրատվամիջոցների (հեռուստատեսություն, ռադիո, օրաթերթեր և ամսագրեր) կամ փողոցում և այլ վայրերում քաղաքացիներին հանդիպելու միջոցով: Համացանցի կողմից կատարված երկրորդ փոփոխությունը վերաբերում է միջին քաղաքացու մասնակցությանը ընտրական գործընթացներին: Մարդիկ սահմանափակված էին քվեարկության, նստացույցի, գործադուլների, հանրահավաքների, նամակագրության և նմանատիպ գործունեության տեսակներով, սակայն համացանցի հայտնվելուց հետո բազմաթիվ նոր գործողություններ են ավելացել: Համացանցի հանգեցրած երրորդ փոփոխությունը քաղաքական գործընթացում մասնակիցների նոր խմբի ստեղծումն է: Մինչ համացանցի հասանելիությունը միայն մասնավոր խմբերն էին քաղաքականապես ակտիվ, որոնք և՛ մեծ էին, և՛ մասնագիտացված: Համացանցը թույլ տվեց փոքր, տեղական խմբերին ևս մասնակցել քաղա-

---

<sup>159</sup> Տե՛ս Աветисян В.Д. Социальные сети как современный источник информирования молодых избирателей и проведения агитационных кампаний: риски и вызовы. Опыт Республики Армения:



քականությանը<sup>160</sup>:

Ամփոփելով քաղաքական գործընթացներում համացանցի ընձեռած հնարավորությունները՝ առանձնացնենք վերջինիս երեք հիմնական գործառույթները՝

- հանդիսանում է տեղեկատվության աղբյուր,
- հաղորդակցման միջոց,
- վիրտուալ հանրային վայր<sup>161</sup>:

Տեղեկատվական ֆունկցիայի շրջանակներում տեխնոլոգիաների, այդ թվում՝ համացանցի միջոցով անորոշ թվով անձանց շրջանում տարածվում և շրջանառվում է բազմազան տեղեկատվություն: Ինչ վերաբերում է հաղորդակցության միջոց և վիրտուալ միջավայր հանդիսանալուն, ապա նշենք, որ տեխնոլոգիաների միջոցով անձինք հնարավորություն ունեն մասնակցելու քաղաքական և հասարակական կյանքի ամենատարբեր իրադարձություններին՝ սկսած որոշակի օնլայն քննարկումների մասնակցելուց, միավորումներ և խմբեր ստեղծելուց, մինչև միայնակ հետ ծանոթությունների հաստատումը և շփումը:

Խոսելով տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորություն մասին՝ հատուկ առանձնացնենք սոցիալական ցանցերը՝ որպես համացանցի ընձեռած հնարավորություն և հարթակ: «Սոցիալական ցանց» ասելով՝ հասկանում ենք սոցիա-

---

160 St' u Internet, Impact On Politics, <https://www.encyclopedia.com/social-sciences/applied-and-social-sciences-magazines/internet-impact-politics>

161 St' u Rabia Karakaya Polat The Internet and Political Participation: Exploring the Explanatory Links/ European Journal of Communication 2005; 20; 435, [https://www.researchgate.net/publication/249720586\\_The\\_Internet\\_and\\_Political\\_Participation](https://www.researchgate.net/publication/249720586_The_Internet_and_Political_Participation)

լական փոխազդեցությունների և անձնական հարաբերությունների հարթակ, հատուկ ստեղծված կայք կամ հավելված (Facebook, Twitter, LinkedIn և Google+), որը հնարավորություն է տալիս օգտատերերին հաղորդակցվել միմյանց հետ՝ հրապարակելով տեղեկություններ, նկարներ, նամակներ, մեկնաբանություններ և այլն<sup>162</sup>:

Սոցիալական ցանցերի դերի օրեցօր բարձրացման և ազդեցության մեծացման մասին, կարծում ենք, այլևս ինքնանպատակ է խոսելը, քանի որ դրանք այնպես են ներթափանցել մարդկային կյանք, որ նույնիսկ մեկ օր հնարավոր չէ պատկերացնել առանց դրանց գոյության և դրանցից օգտվելու: Այս իրողությունն այնքան ցավոտ ծավալների է հասել, որ հոգեբաններն ու այլ մասնագետները մարդկանց իրական շփման՝ վտանգավոր աստիճանի հասնող նվազեցման ռիսկ են տեսնում: Այսպես՝ մասնագետներն առանձնացնում են համացանցի կամ սոցիալական ցանցերի մի շարք բացասական հետևանքներ և հատկանիշներ՝ մտավոր առողջության խնդիրներ, ոչ ճշգրիտ տեղեկատվության տարածում, առցանց ահաբեկումները և աշխատանքային լարվածությունը<sup>163</sup>: Կարող ենք հավելել նաև համացանցով իրականացվող խարդախությունները և այլ հանցագործությունները:

---

162 [https://www.google.com/search?safe=active&biw=1366&bih=657&ei=60o1XfbgO9rAmwWFnIzgCg&q=social+networks+definition&oq=social+networks&gs\\_l=psy-ab.1.1.0i203110.2070477.2075437...0.0.0.213.2084.0j14j1.....0....1..gws-wiz.....35i39j35i39i19j0i67j0i131j0.twceK2vbVw4](https://www.google.com/search?safe=active&biw=1366&bih=657&ei=60o1XfbgO9rAmwWFnIzgCg&q=social+networks+definition&oq=social+networks&gs_l=psy-ab.1.1.0i203110.2070477.2075437...0.0.0.213.2084.0j14j1.....0....1..gws-wiz.....35i39j35i39i19j0i67j0i131j0.twceK2vbVw4)

163 St' u The Negative Effect of Social Media on Society and Individuals, <https://smallbusiness.chron.com/negative-effect-social-media-society-individuals-27617.html>

Տեղեկատվական տեխնոլոգիաների լայն տարածումը և հասանելիությունը, բացի դրական և հասարակության զարգացմանը նպաստող բնույթից, ունի նաև բացասական կողմեր և ազդեցություն: Տեխնոլոգիաների զարգացմամբ զարգանում են նաև համապատասխան տեխնիկական միջոցների գործադրմամբ կատարվող հանցագործությունները և դժվարանում է դրանց բացահայտման գործընթացը՝ հանցագործության սուբյեկտի նույնականացման և ապացուցողական այլ խնդիրների տեսանկյունից: Նմանապես և քաղաքական գործընթացներում մանիպուլյացիները և կեղծ տեղեկատվության տարածումը մեծապես վնասում են ցանկացած հասարակությունում ցանկացած քաղաքական գործընթացի պատշաճ իրականացմանը և իրական փաստերի վերաբերյալ հասարակության իրազեկմանը: Ինչպես գիտենք, ցանկացած կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկատվություն ի վերջո բացահայտվում է, սակայն դրա համար անհրաժեշտ են ժամանակ և միջոցներ, իսկ տեխնոլոգիաների շնորհիվ արագ տարածվող տեղեկատվությունը նույն արագությամբ տպավորվում և համոզմունք է ձևավորում հասարակության անդամների մոտ: Ստացվում է, որ հերքմանն ուղղված գործողությունները ևս պետք է հնարավորինս արագ կազմակերպվեն և հրատապ տարածվեն հասարակության շրջանում:

Հավելենք նաև այն, որ ժամանակի սղության և տեղեկատվության մեծ ծավալի պատճառով մարդիկ հիմնականում կարդում են համապատասխան նյութերի կամ հոդվածների վերնագրերը, ինչը հաճախ ապատեղեկատվության տարածման տեղիք է տալիս: Բհարկե, այս ամենի պատճառ է նաև ոչ պատշաճ լրագրողական աշխատանքը, քանի որ հնարավո-

րինս մեծ թվով ընթերցողներ ներգրավելու մղումից ելնելով՝ հաճախ նյութերը վերնագրվում են պարզապես ուշադրություն հրավիրելու նպատակով, ոչ թե նյութի բովանդակության վկայությունն են: Այս հարցը պետք է արժանանա օրենսդիրների պատշաճ ուշադրությանը՝ զանգվածային լրատվամիջոցներով շրջանառվող նյութերի պատշաճ կազմման, լրագրողների էթիկական նորմերի պարտադիր պահպանման և այլ անհրաժեշտ պահանջների սահմանման ձևով:

Մարդկանց կողմից ստացված տեղեկատվության ընկալման և դրա ազդեցության մեծ ուժի մասին է վկայում հետևյալ իրական և հայտնի պատմությունը, որը Կալիֆորնիայի համալսարանում աշխատող սոցիոլոգ Դեյվիդ Ֆիլլիպսի կողմից անվանվել է «Վերտերի ֆենոմեն»: Այսպես, ավելի քան երկու հարյուրամյակ առաջ գերմանացի գրող Ի. Գյոթեն հրապարակել է սիրավեպ, որը կոչվում է «Երիտասարդ Վերթերի տառապանքները»: Գիրքը, որի հերոսն է Վերթերը, ինքնասպանություն է գործում, ինչը մեծ ազդեցություն է թողնում ընթերցողների վրա: Այդ սիրավեպը ոչ միայն Գյոթեին դարձրել է հայտնի, այլև առաջ է բերել ինքնասպանությունների մի ալիք: Այդ ֆենոմենն այնքան հզոր էր, որ մի շարք երկրներում պետական մարմիններն արգելեցին սիրավեպի տարածումը: Ֆիլլիպսը հետազոտել է ԱՄՆ-ում 1947-1968թթ.-ին կատարված ինքնասպանությունների վիճակագրական տվյալները և հայտնաբերել, որ ամեն անգամ այն բանից հետո, երբ թերթերի առաջին էջում հրապարակվում է սիրավեպը, դրան հաջորդող երկու ամիսների ընթացքում ինքնասպանությունները սովորական ժամանակներից միջին հաշվով ավելանում են 58

անգամ<sup>164</sup>:

Վերը ներկայացված օրինակը տեղեկատվության ազդեցության վառ արտացոլում է, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով տարածվող տեղեկատվության ազդեցությունն ավելի մեծ է՝ վերջինիս տարածման արագության և համընդգրկունության հատկանիշի հաշվին:

Ինչպես նշեցինք, համացանցը պարունակում է անսահմանափակ տեղեկատվություն: Գոյություն ունեն դատողություններ, որ տեղեկատվության ավելցուկը խոչընդոտում է մարդկանց դատողություններ կատարելու ունակությանը: Համացանցից օգտվողների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծամասնությունն արական սեռի, համեմատաբար երիտասարդ, միջին և բարձր եկամուտ ունեցող անձինք են<sup>165</sup>:

Քաղաքական գործընթացներում տեխնոլոգիաների և համացանցի ազդեցությունն ավելանում է ոչ միայն վերջիններիս սպառողների (օգտատերերի) մեծ ծավալի շնորհիվ, այլև ավանդական քարոզչական և գովազդային նյութերի համեմատությամբ ֆինանսապես ավելի մատչելի լինելու հաշվին: Համացանցում քաղաքական գովազդի տեղադրումն ավելի մատչելի է՝ ավանդական գովազդի այլ տեսակների համեմատությամբ (հեռուստատեսային և ռադիո գովազդ):

Նշենք, որ, այնուամենայնիվ, համացանցը տարբերվում է

<sup>164</sup> Sté u Чалдини Р. Психология влияния, 4-е международное издание, СПб., 2006, с.136-137.

<sup>165</sup> Sté u Rabia Karakaya Polat The Internet and Political Participation: Exploring the Explanatory Links/ European Journal of Communication 2005; 20; 435, [https://www.researchgate.net/publication/249720586\\_The\\_Internet\\_and\\_Political\\_Participation](https://www.researchgate.net/publication/249720586_The_Internet_and_Political_Participation)

ավանդական լրատվամիջոցներից լսարանի չափման մեթոդաբանության առումով, չափման համար անհրաժեշտ քանակական և որակական ցուցանիշների բազմազանությամբ, ինչպես նաև տեխնիկական լուծումներով: Այդ իսկ պատճառով ո՛չ Հայաստանում, ո՛չ այլ շուկաներում դեռևս չկա ինտերնետ լսարանի միասնական չափող: Հայաստանի գովազդային գործակալությունները իրենց աշխատանքի ընթացքում օգտվում են մի քանի ծրագրերի տվյալներից, որոնցից են AdRiver, AdFox, [www.similarweb.com](http://www.similarweb.com) և Google Analytics, եթե, իհարկե, հարթակների սեփականատերերից կամ գովազդատուներից ստանում են այդ կայքեր մուտք գործելու համապատասխան հասանելիությունը<sup>166</sup>:

Փաստորեն ստացվում է, որ առաջին հայացքից և ի սկզբանե դրական մղումներով ստեղծված համացանցն ունի ոչ միայն բացասական նպատակներով օգտագործվելու վտանգ, այլև դժվար է վերջինիս չափելիությունը՝ իրական օգտատերերի և օգտակարության մասով:

Ամեն դեպքում, անկախ տեխնոլոգիաների զարգացման և տարածվածության մակարդակից, չենք կարող ժխտել ավանդական մեդիայի դեռևս պահպանվող մեծ դերը քաղաքական գործընթացներում, քանի որ հասարակության զգալի հատվածը դեռևս շարունակում է օգտվել դրանից որպես տեղեկատ-

<sup>166</sup> Sté u Հայաստանի մեդիա գովազդի շուկայի կառուցվածքը և ազատականացման հնարավորությունները, Քաղաքական և միջազգային հետզոտությունների հայկական կենտրոն ՀԿ, Երևան, հուլիս 2016թ., [http://www.osf.am/wp-content/uploads/2016/11/ARMENIAN-MEDIA-ADVERTISING-MARKET\\_ARM.pdf](http://www.osf.am/wp-content/uploads/2016/11/ARMENIAN-MEDIA-ADVERTISING-MARKET_ARM.pdf)

վության ստացման հիմնական աղբյուր, որի հիման վրա էլ ի վերջո կառուցում է իր վարքագիծը կամ քաղաքական ակտիվությունը: Ժամանակակից տեխնոլոգիաները շարունակում են լինել առավելապես երիտասարդ անձանց կողմից լայնորեն գործածվող միջոցներ:

Քննարկելով տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի ընձեռած հնարավորությունները՝ չենք կարող չանդրադառնալ այն հարցին, որ համացանցում առկա տեղեկությունները իրապես ընկալել և ճիշտ գործածել կարող են հատկապես լավ կրթված անձինք: Պատճառն այն է, որ, ինչպես արդեն նշեցինք, համացանցում առկա է անսահմանափակ տեղեկատվություն, որոնց թվում նաև ոչ հավաստի կամ կեղծ տեղեկատվություն, իսկ վերջիններիս առանձնացման և (կամ) տարբերակման համար անհրաժեշտ են գիտելիքներ և վերլուծելու, համադրելու կարողություն: Կարծում ենք՝ համացանցի և տեխնոլոգիաների ճիշտ և նպատակային կիրառության այս հատկանիշով է պայմանավորված համացանցի ոչ միանշանակ ազդեցությունը և դերը քաղաքական կյանքում:

Տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվության ազատորեն տարածման մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում նշել, որ անսահմանափակ ազատությունը հանգեցնում է նաև ոչ ցանկալի հետևանքների՝ ատելության, բռնության քարոզ, կեղծ տեղեկատվության տարածում, անձանց մոլորեցում: Այս առումով պետությունների համապատասխան համակարգերի գործն ավելի է բարդացել՝ հսկելու, վերահսկելու նշված դեպքերը, անհրաժեշտության դեպքում իրավական ներգոր-

ծության միջոցներ ձեռնարկելու: Օրենսդիր իշխանության կողմից ևս պատշաճ և համարժեք ուշադրություն պետք է դարձվի ոլորտի իրավական կարգավորմանը՝ կառավարելի շրջանակներում ներառելու նպատակով:

Ի վերջո, տեխնոլոգիաների և համացանցի միջոցով անձն իրեն ավելի է ուշադրության կենտրոնում զգում, կարող է անմիջականորեն կապ հաստատել այս կամ այն քաղաքական գործչի կամ պաշտոնատար անձի հետ, ուղղել իրեն հուզող հարցերը, ստանալ դրանց պատասխանները: Գերմանիայում գործող Բուդեսթագի պատգամավորների հետ անձնական նամակագրության (chat) հնարավորություն տվող կայքը (<http://www.dol2day.com/>), որն ունի ավելի քան 10.000 մասնակիցներ, դարձել է երկրում ամենահայտնի առցանց քաղաքական հարթակը: Քաղաքական գործիչների հետաքրքրվածությունը նամակագրությամբ պայմանավորված է մեծ լսարանով, իրենց որոշումները և գործողությունները հրապարակելու սահմանադրական պահանջով, ընդ որում ապահովվում է տվյալ տեղեկության արագ հասանելիությունը քաղաքացիներին: Իրենց հերթին քաղաքական գործիչներն էլ արդյունավետորեն տեղեկանում են ընտրողների անմիջական ցանկությունների մասին<sup>167</sup>:

Համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների մասին խոսելիս հնարավոր չէ չքննարկել նաև էլեկտրոնային

---

<sup>167</sup> St' u Колотвин П.А., Мировой опыт влияния современных общественных сетевых инициатив на политическую интеракцию между властью и обществом, Сборник научных докладов, 29.07.2013 - 31.07.2013, Часть 1, стр. 98.

լրատվամիջոցների հարցը, որոնց մեծ թվաքանակը և ընթերցողների մեծ ծավալը վկայում են դրանց պահանջարկի մասին, քանի որ տեխնոլոգիաների զարգացվածության և մատչելիության մակարդակն ուղղակիորեն հանգեցնում է տեղեկատվության և քաղաքացիների մասնակցության էլեկտրոնայնացման: Էլեկտրոնային լրատվամիջոցների ստեղծման կարգը և առաջադրվող պայմաններն այս պահի դրությամբ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ կարգավորված չեն, և ոլորտը գործում է առանց հստակ կանոնների և կարգավորումների, ուստի նշված ոլորտի և կարևոր իրավական հարցերի կարգավորումը գործնական անհրաժեշտություն է<sup>168</sup>:

Ամփոփելով սույն թեմայի ուսումնասիրությունը՝ եզրահանգում ենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցումը և լայնորեն կիրառումը մարդկանց կյանքում նոր որակ է հաղորդել նաև քաղաքական գործընթացներին և քաղաքական մեթոդներին: Ավանդական քաղաքականությունը և գործելակերպը նորովի են վերաբերում և հաղորդակցվում ընտրազանգվածին, իրենց կուսակցության անդամներին և գործընթացի այլ մասնակիցներին: Խոսքի ազատության բարձր մակարդակ ենթադրող այս իրավիճակում յուրաքանչյուր ընտրող և քաղաքական գործիչ իր տեսակետը կարող է հասցնել անսահմանափակ թվով անձանց, ընդ որում՝ ոչ միայն տվյալ երկրի բնակչության, այլև ամբողջ աշխարհի

բնակիչների շրջանում: Այս փաստն ինքնին հանգեցնում է առավել հիմնավորված և ծանրակշիռ փաստարկներ ու հիմնավորումներ ունեցող դատողությունների առաջխաղացման և դրանց հետևորդների ձևավորման՝ նվազագույն միջոցների ծախսմամբ:

---

<sup>168</sup> «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում էլեկտրոնային լրատվամիջոցների ստեղծման կարգը և գործունեության պայմանները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական իրավունքների և երիտասարդ անձանց կողմից դրանք իրացնելու կարևորությունը, անշու՛շտ, կասկած չի հարուցում: Քաղաքական իրավունքների փոխկապվածությունը ինչպես միմյանց, այնպես էլ մարդու մնացյալ իրավունքների հետ, հուշում է, որ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ է ապահովել իրավունքների համակարգի հավասարակշռված իրացում. ցանկացած իրավունքի խախտում կամ իրացման խոչընդոտ անխուսափելիորեն հանգեցնում է նաև այլ իրավունքների խախտման: Մանչանակում է, որ հոչակագրային չլինելու և իրավական փոփոխությունների հանգեցնելու համար վերը քննարկված քաղաքական իրավունքները պետք է պատշաճ պաշտպանվեն և հավասարապես ապահովվեն: Այս մասով կարևորվում է իրավունքների իմացությունը և իրացումը հատկապես երիտասարդների՝ որպես հասարակության շարժիչ ուժի կողմից:

Հայաստանի Հանրապետությունում «երիտասարդ» եզրույթն ընդգրկում է 16-30 տարեկան անձանց, իսկ առանձին քաղաքական իրավունքների իրացման համար, ի թիվս այլ պահանջների, անհրաժեշտ է 18-25 տարեկան տարիքային պահանջին համապատասխանություն:

Ինչ վերաբերում է երիտասարդների քաղաքական իրավունքների իրացման առանձնահատկություններին, ապա բացի տարիքային առանձնահատկություններից, երիտասարդների մասնակցությունը կարևոր է նաև այլ գործոններով պայմանավորված: Մասնավորապես՝ տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի զարգացման արդի պայմաններում երիտասարդները քաղաքական գործընթացների

կարևոր դերակատարներ են, քանի որ տեխնոլոգիական զարգացումներին առավել հաղորդակից է հասարակության հենց այս խումբը:

Հանրահայտ է, որ առանց շարժման, հնարավոր չէ ապահովել զարգացում: Իսկ ովքեր են հասարակության առավել շարժուն և նորամուծություններ կատարող անդամները, եթե ոչ երիտասարդները: Երիտասարդների իրավական և քաղաքական կրթումը հասարակության զարգացման ամենակարևոր նախապայմաններից է: Կրթված և իր իրավունքներին իրազեկ երիտասարդությունը հասարակության մեջ կարող է կատարել այն բոլոր անհրաժեշտ փոփոխությունները, որոնք չեն կարող կատարել պետության կամ կառավարության կողմից արհեստականորեն ներդրված ծրագրերը և օրենքները: Ի վերջո, ցանկացած իրավական ակտ կամ նորմ իրացվում է հասարակության անդամների կողմից, և դրա ազդեցությունը կամ կատարման մակարդակը մեծապես կախված է իրավական ակտի հասցեատերերի իրավագիտակցությունից: Սույն աշխատանքում քննարկված և ներկայացված քաղաքական իրավունքների առանձնահատկություններով և հետևանքներով պայմանավորված՝ հատկապես կարևորվում է դրանց ակտիվ իրացումը կրթված, ապատեղեկատվությունը ճշմարիտ տեղեկատվությունից տարբերող և ժամանակակից տեխնոլոգիաներին և քարոզչական մեթոդներին տիրապետող անձանց՝ երիտասարդների կողմից:

Մասնավորապես երիտասարդությունը քաղաքական գործընթացի գործուն ակտոր է՝ իրականացնելով ոչ միայն ուղղակի քաղաքական գործողություններ, այլ նաև աննուղակիորեն որպես սուբյեկտ և օբյեկտ ներգրավված լինելով հա-

սարակության հարացույցի և արժեհամակարգի փոփոխության մեջ: Երիտասարդության ժամանակակից քաղաքական գործընթացի ակտորի փոխակերպման պայմանները կապված են քաղաքական ռեժիմի տեսակի, բուն քաղաքական գործընթացի ձևի և փուլի հետ, կախված են պետական պաշտոնական կառույցներին ՁԼՄ-ների հաշվետվողականության աստիճանից, սոցիալ-քաղաքական կյանքին տեղեկատվական բաղադրիչի զարգացման մակարդակից, «սպառողական հասարակության» իդեալների տարածվածության աստիճանից և կրթական մակարդակից:

Հայաստանի ժամանակակից քաղաքական տարածության մեջ նկատվում է արդիականացման մի քանի «ալիք», որոնց հիմքում են բուն արդիականացման բնույթի, վեկտորի, ռեսուրսների, ակտորների և առարկայի տարբեր պատկերացումները: Եթե առաջին «ալիքը» կապված էր երիտասարդությանը քաղաքականացնելու, քաղաքական ակտիվության և քաղաքական փորձի զանգվածային ինստիտուցիոնալացման հետ, ապա ժամանակի ընթացքում կատարվում է երիտասարդության ապաքաղաքականացումը, որն արտահայտվում է նրան քաղաքացիական ակտիվության ոչ ինստիտուցիոնալ ձևերին ներգրավելու, ոչ այնքան քաղաքական, որքան նեղ սոցիալական խնդիրներ լուծելու ճանապարհին երիտասարդական ներուժը «շահադիտական-կուսակցական» նպատակներով օգտագործելու մեջ:

Ամփոփելով տեսական հասկացությունները, որոնք նկարագրում են երիտասարդության դերը քաղաքական գործընթացներում՝ վեր են հանվել ժամանակակից քաղաքական գործընթացում երիտասարդության՝ ակտոր դառնալու պայ-

մանները: Վերհանելով այն գործոնները, որոնք ազդում են երիտասարդության ընտրական վարքագծի վրա՝ կարելի է եզրակացնել, որ երիտասարդների մասնակցությունն ընտրական քաղաքական գործընթացում կախված է նրանց սոցիալական և քաղաքական շահերը ներկայացնելու կազմակերպման ոչ ինստիտուցիոնալ և ինստիտուցիոնալ ձևերից: Մինևույն ժամանակ, ուսումնասիրելով երիտասարդների քաղաքական և հասարակական ակտիվությունը՝ եկանք այն եզրակացության, որ երիտասարդների քաղաքական սոցիալականացում իրականացնող հիմնական ինստիտուցիոնալ կառույցները՝ քաղաքական կուսակցությունները, կարիք ունեն հարմարվելու արդի մարտահրավերներին՝ ներկայացնելով երիտասարդների շահադրաման և քաղաքական սոցիալականացման նոր միջոցներ:

Երիտասարդների ընդգրկումը քաղաքական կյանքի այս կամ այն ձևերում սահմանափակվում է քաղաքական իշխանության հետ տեղեկատվության անմիջական փոխանակման ուղիների ամբողջական բացակայությամբ, կամ մինիմիզացմամբ, ինչն առաջացնում է երիտասարդության քաղաքական մասնակցության ոչ ինստիտուցիոնալացված ձևերի աճին:

Հաշվի առնելով շարունակական կրթության նկատմամբ երիտասարդների հետաքրքրության բարձր մակարդակը՝ կարող ենք փաստել, որ կրթությունը քաղաքական սոցիալականացման արդյունավետ գործիք է: Քաղաքական կրթությունը և քաղաքական դպրոցը, մասնավորապես, ի հայտ է գալիս որպես Հայաստանում նոր ծագող երիտասարդների և քաղաքական իշխանության փոխգործակցության ինստիտուցիոնալ ձև, երիտասարդական քաղաքական նորարարության մշակ-

ման վերլուծության և փորձարկման եղանակ: Տեսական ուսումնասիրությունների և մի շարք այլ եղանակներով իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա կարող ենք փաստել, որ բարձր կրթական մակարդակ ունեցող անձինք և այն անձինք, ովքեր հետաքրքրված են հարատև կրթության ստացմամբ առավել ակտիվ են քաղաքական գործընթացներում: Քաղաքական դպրոցները, ոչ միայն հարատև կրթության միջոց են, այլ նաև ծառայում են երիտասարդական և քաղաքական իշխանության երկխոսության յուրահատուկ ձև, հարթակ, որի վրա ձևավորվում է գործողության գաղափարախոսությունը, հայրենասիրությունը, հանդուրժողականությունը, ընդհանուր պատմության և էթնո-մշակութային և կրոնական արժեքների հանդեպ հարգանքը, կատարվում է քաղաքական ակտիվիստների մոբիլիզացումը, քաղաքական առաջնորդների հավաքագրումը, նոր էլիտայի ձևավորումը, նոր սոցիալական և քաղաքական նախագծերի ստեղծումը: Քաղաքական դպրոցների նպատակն է օգնել երիտասարդներին հասկանալ ժամանակակից Հայաստանի քաղաքական գործընթացների բնույթը և առանձնահատկությունները, սոցիալական և քաղաքական պրակտիկ ոլորտում ձեռք բերել փորձառություն:

Չափսը՝ 60x84<sup>1/16</sup>:  
Ծավալը՝ 15 տպ. մամուլ:  
Հանձնվել է տպագրության 1.11.2019  
Քանակը՝ 200 օրինակ

ISBN 978-9939-838-87-8

